




# ԶԱՄԻԱԾԻՆ

1971  
ԺԱ



Ի Ը  
Տ Ա Ր Ի




# ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՈՒՅ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Խոյեմբեր

1971



98/6

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

**Տ. Տ. Վ Ա Ջ Գ Ե Ն Ի Ա Ռ Ա Ջ Ն Ո Յ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Բ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ

Մեր եկեղեցական օրացույցում ամեն տարի հոկտեմբեր ամսվա ընթացքում նշվում է տոնը ընդհանրական եկեղեցուն պատկանող «երկրտասանից վարդապետաց»:

Եկեղեցու հայրերի այս ցուցակը սքանչելի մի համադրություն է Արևելքի և Արևմուտքի եկեղեցիների մեծ հայրապետների և իր մեջ բովանդակում է ներկայացուցիչները քրիստոնեական մշակույթի և մտածողության, աստվածաբանական գիտության և համաքրիստոնեական բարձրագույն Աթոռների ու դպրոցների:

«Վարդապետք եկեղեցույ» են կոչվում առաքելական դարից մինչև 8-րդ դարն ապրած եկեղեցու այն մեծ և սուրբ հայրերը, որոնք թողել են բազմաժանր և հարուստ մատենագրական ժառանգություն և որոնց դավանաբանական, ջատագովական գրվածքները մեծ նշանակություն են ունեցել և ունեն մինչև այսօր և ճանաչված հեղինակություններ են հանդիսանում աստվածաբանական գրականության մեջ:

Ընդհանրական եկեղեցուն պատկանող «երկրտասան վարդապետների» այս հոյակապ համաստեղության տոնի խմբական

նշումը հատուկ է միայն հա՛յ եկեղեցուն. այն կատարվել է մասնավոր նպատակով, թեև այնտեղ հիշված երկրտասան վարդապետներից բոլորն էլ, բացի առաջինից, արդեն իսկ ունեն իրենց առանձին կամ «ընկերովի» տոները: Մեր եկեղեցու նպատակն է եղել երկրտասան վարդապետների տոնի կատարումով շեշտել, թե որոնք են հայ եկեղեցու ընդունած «ոչ-հայ» վարդապետները:

Ընդհանրական եկեղեցու բոլոր հայրերը չէ, որ կոչվում են «վարդապետք եկեղեցույ», այլ միայն նրա՛նք, որոնք ունեցել են այդ կոչման համար պահանջված չորս անհրաժեշտ հատկությունները, **Հավատի ուղղափառություն, Սրբակենցաղ վարք, Եկեղեցական մատենագրական գործունեության փորձ և Վաղեմիություն:**

Ընդհանուր եկեղեցու պատմության մեջ Դ դարը և Ե դարի առաջին կեսը իրենց նշանակությամբ վերին աստիճանի մի հետաքրքիր շրջան են ներկայացնում: Այդ ժամանակահատվածում քրիստոնեական հանճարը և աստվածաբանական գիտությունը հանդես են գալիս բացառիկ և ստեղծագործական արդյունավորությամբ: Այդ շրջանում ամբողջ

եկեղեցու գործը քրիստոնեական դավանության մեծ հարցերն էին կազմում:

Սույն շրջանի եկեղեցու հայրերի աստվածաբանական երկերը և ողջ մատենագրական վաստակը իրենց բազմաժանր բովանդակությամբ որպես ուղեցույց են ծառայում ընդհանուր քրիստոնեության և աստվածաբանական բարձրագույն դպրոցների հաջորդ սերունդների համար:

Այս շրջանի հետ, որը դասական նշանակություն է ստացել, ընդհանուր եկեղեցու պատմության մեջ ոչ մի շրջան չի կարող համեմատվել: Եկեղեցական աստվածաբանական գիտությունը ոչ մի շրջան չի ունեցել, որը մտքի ընդարձակությամբ և վսեմությամբ, բովանդակության խորությամբ, գաղափարական հարստությամբ և տեսությունների բազմազանությամբ, դավանաբանական ըստեղծագործության եռանդով կարողանա համեմատվել Դ և Ե դարերին: Ահա թե ինչու հայ եկեղեցին էլ իր Տոնացույցում էկումենիկ ոգով և «թույլատու ներողամտությամբ և լայնախոհ ազատության հոգիով» (Օրմանյան, «Հայոց եկեղեցի», 1912, Կ. Պոլիս, էջ 111) տոնախմբում է հիշատակը ընդհանրական եկեղեցու երկուսասան վարդապետների, երբ դեռևս եկեղեցին ճշմարտապես ուներ «ընդհանրական կամ տիեզերական եկեղեցվո նկարագիր» (Օրմանյան, նույնը, էջ 109):

Ընդհանրական եկեղեցին ունեցել է «իր հերոսները, առաքինության և սրբության իր մեծ տիպարները, անճևուրաց գործիչները... աստևք ամբողջ մարդկային պատմության մեծագույններեն եղած են իրենց տեսակին մեջ հեղաշրջելու աստիճան մարդկության ճակատագիրը. և՛ եկեղեցին իրավունքով և պարծանքով կտոնախմբե անոնց հիշատակը իրեն հատուկ կերպերով» (Թորգոմ արքեպ. Գուշակյան, «Սուրբք և սուրբ», Երուսաղեմ, 1939, էջ Ը):

Ընդհանրական և մեկ եկեղեցուն պատկանող սրբերի տոնախմբումը հաստատում է հայ եկեղեցու «կապակցությունը ընդհանուր եկեղեցվո հետ և անոր հարաբերությունները՝ հին մասնավոր եկեղեցիներու հետ» (Օրմանյան, նույնը, էջ 169):

Հայ եկեղեցու տոնախմբած երկուսասան

ոչ հայ վարդապետները «ամենքն ալ հինգերորդ դարու կեսն առաջ են և տիեզերական անբաժան եկեղեցվույն կպատկանին, որով ամեն եկեղեցիներու հավասարապես ընդունելի կճանչցվին» (Օրմանյան, նույնը, էջ 174):

Ահա հայ եկեղեցու տոնախմբած երկուսասան այդ մեծ վարդապետների անունները, ըստ մեր Տոնացույցի.

Ռեթեոս Աթենացի և Դիոնիսիոս Արիսպագացի, երկուսն էլ առաքելական շրջանի մեծ դեմքեր և Աթենքի եպիսկոպոսներ. Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիազանցի, Գրիգոր Նյուսացի՝ Կապադովկիայի եկեղեցական մեծ հայրեր. Աթանաս և Կյուրեղ Աղեքսանդրացիներ, Հովհան Ոսկեբերան (Անտիոքի եկեղեցի), Եպիփան Կիպրացի (Կիպրոսի եկեղեցի), Եփրեմ Խորի (Ասորիքի եկեղեցի), Կյուրեղ Երուսաղեմացի և Սեդրեստրոս՝ Հռոմի եպիսկոպոս:

Այս ցանկի մեջ Հռոմի եկեղեցու ներկայացուցիչ Սեդրեստրոս հայրապետը աստվածաբան վարդապետ չէ և չի ընդունված որպես այդպիսին մինչև իսկ Հռոմի եկեղեցու կողմից: Սեդրեստրոս հայրապետը հայ Տոնացույցում իր այս բացստիկ դիրքը, կրկնակի իր տոներով, ընդհանրական եկեղեցու նշանավոր և աստվածաբան վարդապետների շարքում, պարտական է պարզապես ս. Գրիգոր Լուսավորչի հետ ունեցած իր ավանդական հարաբերության, ըստ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության», մինչ այս ցանկից դուրս են մնացել Հռոմի եկեղեցու ընդունած «չորս մեծ վարդապետները»՝ Ամբրոսիոսը, Հերոնիմոսը, Օգոստինոսը և Գրիգոր Ա Պապը, որոնցից ոչ մեկն էլ իբր սուրբ չի ճանաչվել մեր եկեղեցու կողմից և չի մտել հետևաբար մեր եկեղեցական Տոնացույցի մեջ:

Հայ եկեղեցին աչքի լույսի պես պահել-պահպանել է քրիստոնեական եկեղեցու ընդհանրականության և մեկության հատկանիշները և իր պատմության ողջ ընթացքում իրականացրել մի վսեմ և սբանչելի էկումենիզմ: Դրա պայծառ ապացույցն է բազում այլ ապացույցների շարքին ճան «երկուսասան վարդապետների» տոնախմբությունը, որն արտահայտությունն է հայ եկեղեցու

Էկումենիկ ոգու և հատուկ է միայն հայ եկեղեցուն:

Մեր եկեղեցու քահանայական և եպիսկոպոսական Ձեռնադրության Մաշտոց-ներում («Ձեռնադրություն եպիսկոպոսաց», Վաղարշապատ, 1876, էջ 21—22, և «Ձեռնադրություն քահանայից», Վաղարշապատ, 1876, էջ 34—35) նորընծաները հրապարակով իրենց հավատի խոստովանությունը կատարում են՝ հետևելով վարդապետությանը «երկոտասան վարդապետաց եկեղեցու»:

Եթե համադրելու լինենք մեր եկեղեցական Տոնացույցի և Ձեռնադրության Մաշտոցների և մատենագրական այլ վկայությունների տվյալները, համաքրիստոնեական համբավ ունեցող այս երկոտասան վարդապետների ցանկի վրա պետք է ավելացնել նաև միայն հայ եկեղեցուն հատուկ երկոտասան վարդապետների մի այլ ցանկ: «Հայ եկեղեցվո սուրբերեն անոնք, որ հինգերորդ դարեն ետքն են, հազիվ թե տասնյակ մը կկազմեն» (Օրմանյան, նույնը, էջ 174):

Այս մասին առաջին ցուցմունքը տալիս է մեր Տոնացույցը, որի ցանկը, սակայն, ամբողջական չէ:

ԺԵ դարի մատենագիր Թովմա վրդ. Մեծփեցին հիշատակում է մի այլ ցանկ (Օրմանյան, «Ազգապատում», հատոր Բ, էջ 1958, հատված 1352): Այս ցանկն էլ թեև կանոնական հեղինակության հանգամանք չունի, բայց գուրկ չէ հայ եկեղեցու եռամեծ վարդապետները ճշտելու արժեքից:

Մեր եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցն է, որ այս մասին ամենից լրիվ և հեղինակավոր ցուցմունքն է տալիս: Քահանակայան և նրանից բարձր բոլոր եկեղեցական պաշտոնյաների ձեռնադրության ժամանակ նորընծաներից պահանջվում է նախ՝ «մերժել և նզովել» մի շարք հերետիկոսների և ապա «հետևել ու աշակերտիլ ամենայն ուղղափառ և աստվածաբան հայրապետացն» («Ձեռնադրության Մաշտոց քահանայի», էջ 34):

Ըստ Տոնացույցի, Ձեռնադրության Մաշտոցի և մատենագրական այլ վկայությունների հայ եկեղեցու «երկոտասան վարդապետներ» են ս. Գրիգոր Լուսավորիչը, որի տոնը կատարում են բոլոր բույր եկեղեցիները, ս. Սահակը, ս. Մեսրոպը, Եղիշեն,

Ղավիթ Անհաղթը, Մովսես Խորենացին, Հովհան Օձնեցին, Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին:

Հայ եկեղեցու այս եռամեծ վարդապետները տոնելի սրբեր են, բացի Ստեփանոս Սյունեցուց (Ը դար): Հասկանալի չէ, թե ինչու՞ մեր եկեղեցու մեծագույն և արժանավորագույն վարդապետներից մեկը՝ Ստեփանոս Սյունեցին, որի հիշատակը մտել է «Յայամաուրթ»-ի մեջ, դուրս է մնացել Տոնացույցից:

ԺԳ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը նրան անվանում է «Սիւն երկնի, խարխիս հաատոյ, ախոյեան անվախ սուրբ եկեղեցույ, մարդն երկնածին և հրեշտակն երկրալին»: Ժամանակն է, որ հայ եկեղեցու բարեկարգության հարցով զբաղվող մեր հաջորդ եպիսկոպոսաց ժողովները այլ բարեկարգական հարցերի հետ միասին վերանայեն նաև անհրաժեշտորեն մեր եկեղեցու Տոնացույցը:

Ընդհանրական եկեղեցու և հայ եկեղեցու եռամեծ վարդապետները իրենց մատենագրական վաստակով, սրբակրոն վարքով վերանորոգեցին իրենց ժամանակի փտած աշխարհը և նոր, վերանորոգիչ շունչ հաղորդեցին ընդհանուր բաղաբակրթությանը և եղան հիմնադիրները քրիստոնեական մշակույթի:

Ամեն տարի եկեղեցում օտար և հայ վարդապետների անվան, գործունեության և հիշատակի ոգեկոչումը հանդիսանում է տոնը քրիստոնեական մշակույթի:

Եկեղեցու այս վարդապետները ապրեցին և գործեցին հալածանքների թեժ կրակի տակ, ամրապնդեցին ուղղափառությունը, հստակեցին և բանաձևեցին ճշմարիտ հավատը, պայքարեցին հերետիկոսությունների և հեթանոսական մոլոր վարդապետությունների դեմ և հարստացրին քրիստոնեական մշակույթը իրենց մատենագրական վաստակով:

Եկեղեցու այս մեծ վարդապետները, տոգորված քրիստոնեական և վսեմ հումանիզմով, քարոզում էին աշխատասիրություն, արդարություն, ազատություն, խաղաղություն և երջանկություն. տենչում էին հաստատումը մարդասիրական, ընկերային ար-


դար կարգերի. հանդիսանում էին ժողովուրդների եղբայրության և համերաշխության աննկուն քարոզիչներ և պայքարում էին համատրեմ ստրկության, անարդարության, անհավասարության դեմ, ինչպես նաև մարդու ամեն տեսակ նվաստացումների և շահագործման ձևերի դեմ՝ տոգորված դեպի մարդը պատասխանատվության խորը զգացմամբ:


Եկեղեցու այս հայրերը մերժում էին ցեղային և կամ այլ բնույթի խտրականություն, խարազանում էին ժամանակի իշխանների բռնություններն ու կամայականությունները, պահարակում էին անբարոյականությունն ու հեթանոսական բարբերը, նախապաշարումները ու քարոզում էին միություն եկեղեցիների միջև և իրենց մատենագրական վաստակով ամրապնդում քրիստոնեական հավատն ու ոգին:

Այս իսկ պատճառով եկեղեցական այս հայրերի մատենագրական ժառանգությունը համաշխարհային մշակույթի անկապտելի և թանկարժեք մի մասն է հանդիսանում՝ միաժամանակ լինելով քրիստոնեական մշակույթի հարստությունն ու հպարտությունը:

Եկեղեցու հայրերն իրենց բազմաժանր ստեղծագործություններով քրիստոնեական մտածողության մեջ մի նոր դարաշրջան բացեցին և մնացին չգերազանցված մտածողներ և փիլիսոփաներ:

Եկեղեցու մեծ վարդապետները, օտար թե հայ, այս իմաստով մեր ժամանակակիցներն են: Մեզ հետ են նրանց ոգին, լույսն ու հավատը, նրանք, որ եղան, ըստ շարականագրի, «ամուլք հաւատոյ, պարծանք եկեղեցոյ, լուսամորիչ տիեզերաց, սիւն լուսոյ, պսակ ի գլուխ եկեղեցոյ, պայծառ քարոզիչ տիեզերաց ու պարծանք ազգի մարդկան...»:





## Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սույն թվականի նոյեմբերի 9—16 սուրբ Էջմիածին այցելեցին Անթիլիասի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչները և նոյեմբերի 10—12 օրերին բարեկամական մթնոլորտում չորս հանդիպումներ ունեցան Մայր Աթոռի ներկայացուցիչների հետ:

Մայր Աթոռի ներկայացուցիչներն էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը՝ հայրապետական պատվիրակ հայոց Արևմտյան Եվրոպայի և առաջնորդ Փարիզի, տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը՝ առաջնորդ հայոց Վրաստանի, և պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանը:

Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչներն էին տ. Տանատ արքեպիսկոպոս Ուրֆալյանը՝ առաջնորդ հայոց Լիբանանի, տ. Արտավազդ եպիսկոպոս Թրթոյանը՝ տեսուչ կիլիկյան դպրեվանոց, տիար Վահե Սեթյանը՝ ատենապետ Ազգային ընդհանուր ժողովո, և տիար Խաչիկ Պապիկյանը՝ ատենապետ Ազգային կեդրոնական վարչության:

Կարծիքների փոխանակումից հետո Մայր Աթոռի ներկայացուցիչները կիլիկյան Աթոռի ներկայացուցիչներին հանձնեցին ամփոփ կերպով բանաձևված Մայր Աթոռի առաջադրանքները՝ վերահաստատելու համար հայ եկեղեցվո միության բնականոն վիճակը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐՈ

16-ը նոյեմբերի 1971 թ.,  
Ս. Էջմիածին





ԳՐՈՅ. ԻՈՒՆ ՔԱՀԱՆԱ ԿՈՄԱՆ

ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ԴԱՐԵՐԻ ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ ԱՆՏԻԿ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ\*

Այն գրականություններից մեկը, որ փայլել է համաշխարհային մշակույթի երկնակամարի վրա և շարունակում է զարդարել մարդկային ոգին և քրիստոնյա եկեղեցու զանձա-

րանը՝ հայրաբանական գրականությունն է, այսինքն եկեղեցական գրողների և սուրբ հայրերի մտքի արգասիքները, որոնք տարածվում են Նոր Կտակարանի գրություննե-

\* Հայոց Հայրապետի մասնավոր հրավերով հոկտեմբերի 16—27 օրերին ուխտավորաբար Մայր Աթոռում էր գտնվում Բուխարեստի ռումինական աստվածաբանական ինստիտուտի հայրաբանության դասախոս պրոֆ. Իոան քահանա Կոմանը իր հարգելի կնոջ հետ:

Հարգելի հյուրն այցելում է մեր պատմական վանքերն ու սրբավայրերը, հայրենի հուշարձաններն ու մայրաքաղաքի տեսարժան վայրերը:

Հարգելի պրոֆեսոր-քահանան Մայր Աթոռում գտնված օրերին հոգևոր ճեմարանի հարկի տակ, Վեհափառ Հայրապետի հրավերով և կարգադրությամբ, կարդում է հետևյալ չորս դասախոսությունները.

1. Առաջին չորս դարերի հայրաբանական գրականության արժեքը անտիկ մշակույթի շրջանակում.

2. Քահանայական կոչումը առաջին չորս դարերում՝ ըստ եկեղեցական հայրերի հետևողության.

3. Հիսուս Քրիստոս Լոդուսի անձնավորությունը առաջին չորս դարերի հայրաբանների գրականության լույսի տակ.

4. Դ—Ե դարերի հայ եկեղեցու հայրերի ճիգերն ու հայրաբանական նվաճումները:

Դասախոսություններին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսներն ու ողջ ուսանողությունը, Արարատյան թեմի քահանայից դասը և մտավորականներ:

Դասախոսություններից հետո հարգելի պրոֆ. հայր Կոմանը պատասխանում է ներկաներից շատերի և մանավանդ ուսանողների հարցերին:

«Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում առաջին դասախոսության հայերեն թարգմանությունը, որը կատարել է Երևանի մանկավարժական ինստիտուտի դասախոս և ճախկին ռումինահայ Կայծակ Աթանասյանը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

րի ավարտից մինչև Ը դարը Արևելքում և մինչև Է դարը Արևմուտքում: Հայրաբանական գրականությունը այսօր հետաքրքրությամբ է ուսումնասիրվում ոչ միայն աստվածաբանական ֆակուլտետներում, այլև բանասիրական և փիլիսոփայության ֆակուլտետներում, ինստիտուտներում, համագումարներում, մասնագիտական կազմակերպություններում: Քննական ուսումնասիրությունների վերջին պահանջների համաձայն կազմված բնագրերի ժողովածուներ, մենագրություններ, հանդեսներ և հանրագիտարաններ շարունակում են հարստացնել ժառանգությունը քրիստոնեական հայրաբանական մտածումի, գիտության և ոգեկան հեռանկարների:

Առաջին չորս դարերի հայրաբանական գրականությունը ընդգրկում է առաջին ութ քրիստոնեական դարերի ստեղծագործությունների մոտավորապես կեսը: Այն արտահայտում է, արձակ և չափածո գործերով, քրիստոնեական կյանքի զարգացումը և տարբեր արտահայտությունները՝ ամենապարզերից մինչև ամենաբարդերը:

Հայածանքների թե՛ կրակի տակ սկսված և ավարտված առաջին ժամանակաշրջանի հավատի և դիրքորոշմանց սկզբնական հարցերը երբ կազմավորման վիճակում գտնվող աստվածաբանական միտքը հասնում է մինչև մի Որոգիների, Տերտուլիանոսի և Իրենեոսի բարձունքները, բարդանում են և վեհորեն զարգանում նոր իրադրություններով, հատկապես հերետիկոսների դեմ պայքարի մեջ, հեյլենիզմի ընդդիմադրությամբ և մշակութային գործոնների բնականոն անմամբ, որոնք ծաղկում են և զարգանում հռոմեական պետության շնորհիվ ազատության արևի տակ, որը Դ դարից դառնում է բյուզանդական պետություն: Հազիվ ծիլ տված ձևերից այժմ, Բ ժամանակաշրջանում, առաջ են գալիս բառիս բուն իմաստով գրական ժանրեր, հստակորեն ուրվագծված գրական ժանրեր, ինչպես են՝ **քննական մեկնությունը**, Որոգիներից հետո, հատկապես Մեծն Աթանաս, Մեծն Բարսեղ, Հովհան Ոսկեբերան, Կյուրեղ Երուսաղեմացի, Հերոնիմոս և Օգոստինոս Երանելիներ, Մեսրոպ, Եղիշե և այլն. **ջատագովությունը**, Դ դարի, որի ներկայա-

ցուցիչներն են հատկապես Եվսեբիոս Կեսարացին, սուրբ Գրիգոր Նազիազանցին և ուրիշներ. **հակաճառությունը և դավանաբանությունը**, Մեծն Աթանաս. Մեծն Բարսեղ, Գրիգոր Նազիազանցի, Գրիգոր Նյուսացի, Կյուրեղ Աղեքսանդրացի, Հիլարիոն Պիկտավացի, Օգոստինոս, Եփրեմ Ասորի, Եզնիկ Կողբացի. **եկեղեցու և քրիստոնեական կյանքի պատմությունը**, որի սկիզբն են դրել Հուլիոս Աֆրիկացին, Լակտանտիոսը և հատկապես Եվսեբիոս Կեսարացին, որին տվել են «քրիստոնյա Հերոդոտոս» մականիքը: Սրանց շարունակողներն են Հերոնիմոսը, Ռուփինոսը, Սոկրատը, Սալմեներ, Փիլոստորգիոսը, Գելասիոսը, որոնց կողքին դասվում են Հայաստանի դասական պատմագիրներ Ագաթանգեղոսը, Փավստոս Բյուզանդը, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին, Եղիշեն. ժանրի նոր տարատեսակները՝ **ինքնաքննադատությունը և ինքնակենսագրությունը**—Օգոստինոս Երանելի. **ճարտասանությունը և հովվական աստվածաբանությունը**, մշակված և բարձունքների հասցված այնպիսի մարդկանց կողմից, ինչպես Կիպրիանոսը, Մեծն Բարսեղը, Գրիգոր Նազիազանցին, Գրիգոր Լուսավորիչը, Հովհան Ռուկեբերանը, Օգոստինոսը, Հովհան Մանդակունին և այլն. **մանկավարժությունը և քրիստոնեական ուսուցումը** գրել են Կղեմես Աղեքսանդրացին, Տերտուլիանոսը, սուրբ Կիպրիանոսը, Կապադովկացի սուրբ հայրերը, սուրբ Հովհան Ոսկեբերանը, սուրբ Ամբրոսիոսը, սուրբ Նիկետոս Ռեմեսացին, սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին, Օգոստինոս Երանելին: Հայրերից շատերը երբեմն թողել են մեծ թվով անմակեր, որոնցից ոմանք լի են դասական գեղեցկությամբ:

Բանաստեղծությունը ստեղծվել է Գրիգոր Նազիազանցու, Եփրեմ Ասորու, ապա և Պրոդենտիոսի, Բալայի և Սինեսիոս Կյուրենացու կողմից. բանաստեղծական նույն բնագավառին են պատկանում նաև Մեծն Բարսեղի, Հովհան Ոսկեբերանի և Ամբրոսիոսի պատարագները:

Գրական այս ժանրերը ընդհանրապես չէին հասնում անտիկ աշխարհի դասական գրական արվեստի բարձրությանը, թեև Լիբանիոսը գովում էր երիտասարդ Մեծն Բար-

սեղիկն, որ իրենից ավելի բարձր մակարդակով է գրում, իսկ Հովհան Ռակեբերանը համեմատվել է Դեմոսթենեսի և Լակուանտիոսը՝ Կիկերոնի հետ՝ կրելով «քրիստոնյա Կիկերոնը» մակդիրը, որը հարմարվում է նաև Ներոնիսոս Երանելուն: Սակայն առաջին չորս դարերի հայրաբանական գրականությունը տոգորված էր մի նոր շնչով, վերանորոգիչ, երիտասարդական ավյունով և լույսով, որոնք մինչև օրս էլ փոթորկահույզ ալիքներով ներթափանցում են ընթերցողի հոգին, հաճախ մարգարեական շեշտերով: Ծնունդ առած Ավետարանից, բայց և այդ շրջանի աշխարհի վերաբերյալ ժխտողական ըմբռումներից այն ձգում է ստեղծել մի նոր մարդ՝ քրիստոնյան Քրիստոսի պատկերով և կատարելության չափով, մի մարդ, որը լքի հին մարդուն և ձեռնամուխ լինի մի նոր հասարակության և աշխարհի՝ «Աստծո բերդաքաղաքի», ինչպես ասում են Որոգիները և Օգոստինոսը կամ էլ «Երկնքի արքայության» կառուցմանը, Աստուծո Որդու երկրորդ գալուստովը:

Հայրաբանական գրականությունը սկզբնավորում էր և հիմնադրում մի **նոր փիլիսոփայություն**, այն էր՝ մարմնատությունը Բանի (Լոդոսի), սուրբ Երրորդության երկրորդ անձի և մի նոր գոյության կազմավորումը՝ բանականության կամ գերագույն Լոդոսի միջոցով, որից ստեղծագործությամբ քիւում են նախ իրերի և ապա էակների և իրերի հարաբերությունների իմաստները: Աստուծո Որդու այս մարմնատությունը կամ մարդեղությունը նրան բերեց մարդկանց մեջ, որով մարդիկ բարձրացան իրար հանդեպ եղբայրության և Աստուծո որդիների աստիճանը: Լոդոսի մահից և հարությունից հետո մարդեղությունը ստեղծեց եկեղեցու աստվածամարդկային հաստատությունը, որով մարդիկ ծնվում են և ծաղկում, մի նոր իմաստ հաղորդելով կյանքին և պատմությանը: Քրիստոս Լոդոսը և Նրա հոգու պարզները ծնունդ են տալիս գոյության բոլոր արժեքներին և սնուցում մեր ստեղծագործ ոգին, որովհետև **Նա** ոչ թե մի հասարակ վերացական հասկացություն է, ինչպես Հերակլիտոսի և Պլատոնի մոտ, և ոչ էլ միայն գոյաբանական պլազմայի հարաբերությունների կարգավորիչ, ինչպես ստոիկների և նոր

պլատոնականների մոտ, այլ **Նա** «Ճանապարհն է, Ծշմարտությունը և Կյանքը», **Նա** «կյանքի հացն» է, մեր հոգիների և ձգտումների առաջընթացի կենարար ջրի աղբյուրը: Սուրբ հայրերի համար Լոդոսը մշտաշարժ մի գոյություն է, որը խմորում է և ձևափոխում կյանքը և պատմությունը՝ սիրով և զոհաբերության ճանապարհով: **Նա** գերագույն բանականությունն է, որը այրվում է սիրո մեջ և սիրուց, դարերի սկզբից մինչև վախճանը: Մի նոր փիլիսոփայություն է, որը հեղափոխեց հին աշխարհը, և որին հայրաբանական գրականությունը իր բոլոր ժանրերով տալիս է բազմազան և ներշնչված արտահայտություն:

Մեկնելով սուրբ Ավետարանից, եկեղեցու հայրերը հայտնաբերում են և առաջադրում պատմության մի նոր իմաստ. իրադարձությունները և մարդկանց արարքները, ինչպես և բնության երևույթները կատարվում են Աստվածության կամ աստվածային նախախնամության և հսկողության ներքո: Ծնորհիվ այս ղեկավարության, մարդկությունը հեղաշրջվեց դեպի փրկության պահը՝ անցնելով քարքարոսական, սկյութական, երբայական ժամանակաշրջաններով և հասնելով քրիստոնեականին: Բ դարի ջատագով Արիստիդեսից մինչև Ը դարի սուրբ Հովհան Դամասկացին, պատմական այս տեսիլքը նույնությամբ պահպանվում է, մանրամասների որոշ տարբերակներով Եվսեբիոս Կեսարացու և Օգոստինոսի մոտ, ուր երկրային աշխարհը աստիճանաբար վերածվում է Աստուծո բերդաքաղաքի:

Պատմության կրոնական այս ըմբռումը թեև մեծ մասամբ ջատագովական բնույթի, հաստատում է ընդհանուր գծերով արդի գիտական պատմական ըմբռումը՝ հիմնված բարեշրջական ուսմունքի վրա: Քրիստոնեության պատմությունը սկսվում է Լոդոսի կողմից աշխարհի ստեղծմամբ, որն իր իմաստությամբ և ժամանակի ականակոր մարդկանց մտքերում սերմանած բանականությամբ նախապատրաստեց իր մարմնատությունը և հաստատեց եկեղեցին: Հրեա ժողովրդի պատմությունը համարվեց քրիստոնեության նախապատմություն: Առաջին չորս դարերի սուրբ հայրերը պատմությունը մեկ-

նաբանում են քննադատորեն և համեմատական մեթոդով, համաձայն սուրբ գրության տված մղմանը, բայց նաև ազնվատեսությամբ, որ քրիստոնեական կյանքը ընթանում էր հակառակորդ աշխարհում, որտեղ հալածվում էր Նա և ապա նաև այն բանի համար, որ քրիստոնեական ոգին եղել և մնում է էապես քննական: Քննական այս ոգուն են պարտական մարդկային մշակույթի և մարդկային իմացականության հեղաշրջման վերաբերյալ կարևոր տվյալները:

Առաջին չորս դարերի հայրաբանական գրականությունը մշակում է մի գեղեցիկ և խորհմաստ հումանիզմ՝ հիմնված Լոդոսի մարդասիրության վրա, պահպանելով սակայն նաև հունա-լատինական հումանիզմի էական տարրեր, ինչպես բանականության արժևորումը, մարդ-էակի ներդաշնակությունը, առաքինության արժեքը: Հայրաբանական հումանիզմը ձգտում է մարդուն քանդակել որպես Քրիստոսի պատկեր: Քրիստոսը մեռավ, որպեսզի մարդը դառնար ապրող էակների, բնության, համայն տիեզերքի զարդը: Հայրաբանական մարդը օժտված է սրբաբացած մտքով, ուղիղ բանականությամբ, անսահման ազատությամբ, նախաձեռնությունների և գործունեության, ինչպես նաև խոնարհ իշխանությամբ, որով ձգտում է փոխել երկրի երեսը՝ այստեղ հաստատելով երկնային արքայություն: Որպեսզի իր տրամադրության տակ ունենա մեծ մի ուժ, մարդը պետք է դաստիարակվի և դառնա բարի, սկսած օրորոցից մինչև գերեզման, առանց ընդհատումի: Ամեն մի մարդ պետք է դառնա մի Քրիստոս, ընդունակ գործելու, սիրելու և զոհաբերվելու բոլորի համար՝ ներառյալ իր թշնամիներին: Ուրիշների համար տքնությունը, սերը և կյանքի զոհաբերումը հանդիսանում են հայրաբանական հումանիզմի սյուները: Այս սյուների վրա է աստիճանաբար կերտվում մարդու աստվածացումը:

Հայրաբանության ոգեկան հորիզոնը և կյանքը իրենց մեջ պարունակում են բազում առաջադիմական տարրեր. հայրաբանական գրականությունը դրվատում է և լայնորեն գնահատում աշխատանքը, արդարությունը, արժանապատվությունը, ազատությունը, հա-

վասարությունը և առաջադիմությունը, որոնց Որոգիների և Մեծն Բարսեղի, Գրիգոր Նազիազանցու, Հովհան Ոսկեբերանի, Ամբրոսիոսի և այլն սրբերի միջոցով նվիրել է էջեր բացառիկ խորությամբ, գեղեցկությամբ, քարզչական պաթոսով և արդիականությամբ: Այս գրականությունը համատարեն պայքարում է շահագործման, ճորտության կամ ստրկության, ինչպես նաև մարդու ամեն տեսակի նվաստացման ձևերի դեմ: Հայրաբանական գրականությունը անհոգնաբեկ կերպով ձաղկում է մարդկանց միջև բոլոր տեսակի խտրականությունները և ժամանակի հարուստների և իշխողների անազնությունները: Սուրբ հայրերից ոմանք քարոզում են համայնական կյանքը՝ Գործք Առաքելոց-ի և քրիստոնյաների օրինակով: Հայրաբանական բոլոր գրողները նշավակում են պատերազմը և գովերգում խաղաղությունը, որպես «մայր» կամ «բոլոր բարիքների գլուխը»: Կարելի է ամբողջական հատորներ կազմել պատերազմի և խաղաղության թեմաներին նվիրված սուրբ հայերի կրակոտ էջերով, հատկապես Կղեմես Աղեքսանդրացու, Որոգիների, Մեծն Բարսեղի, Գրիգոր Նազիազանցու, Գրիգոր Նյուսացու, Ամբրոսիոսի և Օգոստինոսի ստեղծագործություններից: Հայրաբանական գրականությունը ընդունում է խաղաղ, խոհական և քնքույշ մի հայրենասիրություն՝ չընդունելով և չկիրառելով ցեղային կամ այլ բնույթի խտրականություններ: Հեռու ենք հեղինակսական կարգախոսից՝ «ով հույն չէ, բարբարոս է»: Այժմ «բարբարոսները», այսինքն ոչ հեղինակները արժանացել են մեծ պատվի, քանի որ նրանք հանդիսանում էին, ըստ որոշ հայրերի, այն աղբյուրը, որից հույները ներծծել են իրենց մշակույթի տարրերի մի զգալի մասը (այբուբեն, արհեստներ, արվեստներ, գիտություններ), ինչպես նաև որովհետև նրանք՝ բարբարոսները, ընդհանրապես ավելի բացսիրտ էին և ոչ այլամերժ, քան հեղինակները, երբեմն ավելի խորը և բազմակողմանի իրենց գիտական հետազոտություններում, ինչպես այդ վկայում են Բ—Դ դարերում Տերտուլիանոսը, Որոգիները, Աթանասը և Կյուրեղը, Կապադովկացիները, Հերոնիմոսը և Օգոստինոսը, որոնցից

ոմանք թեև հունարեն էին գրում, սակայն հույներ չէին, այլ եգիպտացիներ, ասորիներ, հայեր և վրացիներ:

Եկեղեցին, որպես Քրիստոսի հարս և նրա մարմնի շարունակող, հանդիսանում է հայրաքանակյան գրականության կենտրոնական թեմաներից մեկը: Հայրերը ընդգծում են եկեղեցու անարատությունը, գեղեցկությունը, մայրությունը և միությունը՝ այն ներկայացնելով մերթ որպես կույս, մերթ որպես աշտարակ, մերթ որպես մայր, որն իր կրծքով սնուցում է մեզ, մերթ որպես Քրիստոսի մարմին, որի գլուխը Ինքը Քրիստոսն է, մերթ որպես մի կապ կամ մի ուժ, որը մեզ միացնում է, մերթ որպես ինքը տիեզերքն ամբողջ, որտեղ «ամեն այն, ինչ որ շնչում է, գովաբանում է Տիրոջը»: Եկեղեցին մի միավորում է, աստվածամարդկային մի իրողություն, որտեղ աստվածությունը և մարդկությունը միահյուսվում են և նույնեանը աշխատում մինչև համայն մարդկության աստվածամարդկայնացումը և ապա աստվածացումը: Սա երկարատև մի ընթացք է, որում եկեղեցին սրբությանը և ներքին միավորումով, շնորհիվ սուրբ Հոգու գործյան, կատարելագործելու է մարդկանց և նրանց միացնելու է Տիրոջ մարմնի մեջ, քանի որ բոլորն այս մարմնի անդամներն են: Եկեղեցու միությունը հայրաքանակյան եկեղեցախոսների հիմնական թեման է, քանի որ նրանք շատ են պաշարել առաջին չորս դարերի հերետիկոսությունների և հերձվածողների դեմ: Սուրբ Կիպրիանոսը իր «Տիեզերական եկեղեցու միության մասին» դասական գործում, ինչպես նաև այլ աշխատություններում ասում է, որ Էդրայրների միջև հակառակություն սերմանողը չի փրկվի, նույնիսկ եթե մարտիրոսական մահով մեռնի: Այնքան թանկ էր և կարևոր եկեղեցու միությունը այն ժամ և այսօր: Եկեղեցին առաջ էր տանում և պահպանում իր միությունը սրբագործման միջոցով, իրականացված սուրբ խորհուրդների շնորհիվ և հատկապես սուրբ հաղորդությամբ, որը բոլորին համախմբում էր նույն սուրբ զոհի և սուրբ բաժակի շուրջ: Այն գործոնը, որ աշխատում էր և կատարելագործում սրբությունը՝ սերն էր, ինչպես այնքան խորությամբ ցույց է տալիս սուրբ Հովհանն Ոսկեբերանի

խոսքը՝ ուղղված Եվորոպոսին՝ Արկադիոս կայսեր նախկին նախարարին:

Հայրաքանակյան եկեղեցին շնչել է և իրականացրել մի վսեմ էկումենիզմ՝ շնորհիվ մեկ և նույն Աստուծո հավատի միության հասնար կատարած իր անդադրում ջանքերի և շնորհիվ նույն սիրո տևական ներգործության, ինչքան էլ խորը լինեին վարդապետական տարածայնությունները, որ պաշտոնական բանաձևեր տվող տիեզերական ժողովներ միշտ ի վիճակի չէին վերջնականապես վերացնելու: Այդ անդադրում ջանքերը նպաստում էին տարածայնությունների մեղմացմանը և աստվածուսուցման նոր ուղիներ գտնելուն: Հայրաքանակյան սահմանումը, որի հասնաձայն «եկեղեցուց այն կողմ չկա փրկություն», վերաբերում է հավատին և առանձնապես եկեղեցու սիրուն: Երկու քրիստոնյաներ, որոնք ունեն նույն հավատը, սակայն իրար չեն սիրում, չեն փրկվում: Հեթանոս հին աշխարհը չի ունեցել եկեղեցու նման մի հաստատություն և նման ոգեկան հեռակարներ, որովհետև նա չի ճանաչել նման ազդեցություններով ու հետևանքներով մարմին առած Լոդոսին:

Հայրաքանակյան գրականությունը ծնունդ և արտահայտություն է տալիս մի բարդ մշակույթի, որն ընդգրկում է և մեկնաբանում մարդու ամբողջ ճակատագիրը երկրային կյանքում և այդ կյանքից այն կողմ: Բողոքել են և երբեմն այսօր էլ են բողոքում քրիստոնեական մշակույթ գաղափարի դեմ, քանի որ,—առարկում են,—քրիստոնեությունը հավատ է, ոչ թե մշակույթ: Եվ, սակայն, Տիրոջ հայտնության ուշացումը և քրիստոնյաների՝ շրջապատող աշխարհի հետ անմիջական և հարատև շփումները ծնունդ են տվել անհրաժեշտորեն քրիստոնեական մի մշակույթի: Բնական էր, որ այսպես ստացվեք, քանի որ մարդկանց միջև հարաբերությունները և նրանցից բխող հարցերը ծնունդ են տվել, դեռ անհիշատակ ժամանակներից, մշակույթի գործերի և հուշարձանների: Հավատի վերնաշերտը՝ քրիստոնեական մշակույթը, աստիճանաբար ուրվագծվում է գերիշխող ավետարանական շաղախով, հեղինակական ձեվական մտածողությամբ, հեթանոսության և հերետիկոսությունների դեմ քննադատորեն

պայքարելու ոգով, ինչպես նաև իր սեփական զարգացման և հարստացման անհրաժեշտությամբ, ամեն ինչ նոր կրոնի քարոզիչների, մտածողների և արվեստագետների վերանորոգիչ շնչին ենթարկելու ձգտումով:

Հեթանոսների, հրեաների և հերետիկոսների դեմ վեճերը ամրապնդեցին քրիստոնեական ոգին և ստեղծեցին արձակ և բանաստեղծական գործեր, բարձր մտածումի և գեղարվեստական արվեստի, որոնք ձգտում էին փոխարինել քննադատված մշակույթների կամ աղանդների գործերը: Ստեղծվեցին կերպարվեստի գլուխ-գործոցներ ճարտարապետության, բանդակագործության, նկարչության, ինչպես նաև երաժշտության մեջ, որոնք փոխանցվել են մինչև բյուզանդական միջնադար և մինչև մեր օրերը հիացմունք պատճառում:

Հայրաբանական մշակույթը առավելապես համադրական մշակույթ էր, որ կիրառում էր մի սկզբունք՝ վերցրու ուրիշներից, ինչպես մեղուն է վերցնում ծաղիկներից, ըստ Մեծն Բարսեղ և Գրիգոր Աստվածաբան սրբերի հիշարժան խոսքերի: Երբեմն հանձնարարվում էր և կիրառվում, ինչպես օրինակ՝ Աղեքսանդրիայի դպրոցում, այն սկզբունքը, որ սուրբ Գրոց ըմբռնումից և մկրտությունն ընդունելուց առաջ անհրաժեշտ էր աշխարհիկ մշակույթի յուրացումը, մի բան, որ իրականացրել են բոլոր եկեղեցական հայրերը: Հայրաբանական մշակույթի խնդիրները բազմաթիվ էին և բազմազան՝ աստվածաբանություն, մարդաբանություն, դաստիարակություն, ընկերաբանություն, կրոնական պաշտամունք, պատմություն, սրբազան հոգևորություն, գեղասիրություն, արձակ և չափածո գրական արվեստ և այլն: Հակաճառական և երկախոսական գործերը ամենահետաքրքրական և ամենահրապուրիչներից են:

Հայրաբանական գրականությունը ժառանգել և փոխանցել է հաջորդ դարերին՝ ոչ միայն հունա-լատինական դասական գրականության գաղափարներ կամ խնդիրներ, սկնարկներ և հատվածներ, այլև այս գրականությունից ամբողջական երկեր կամ մեկնաբանություններ, ձեռագրերի արտագրությամբ կամ սուրբ հայրերի գրքերից մեջբերումով: Առանձնապես կարող ենք հիշել

այդ շարքից հետևյալ հեթանոս հեղինակների գործեր՝ Կելսոսի «Ծշմարիտ խոսք» աշխատությունը, որը քննադատվեց և մեզ հասավ Որոգիների կողմից՝ «Կելսոսի դեմ» աշխատությունում, կամ էլ Հուլիանոս Ուրացողի երեք հատորից բաղկացած «Ընդդեմ գալիլիացիների» գործը, որը քննադատվեց և մասամբ մեզ հասավ սուրբ Կյուրեղ Աղեքսանդրացու գրած աշխատության մեջ՝ «Քրիստոնեականների սուրբ կրոնի մասին ընդդեմ անհավատ Հուլիանոսի գրքերի»:

Սուրբ հայրերը սկզբնավորեցին նաև որոշ ազգային մշակույթներ, ինչպես էր հայկականը, վրացականը, գոթականը, դպտականը, սլավոնականը: Նրանցից ոմանք ստեղծեցին իրենց երկրների ազգային լեզուների այբուբեններ, թարգմանեցին Աստվածաշունչը և տարբեր լեզուներով գրված հայրաբանական հոշակավոր գրողների գործեր: Երբեմն կազմեցին թարգմանիչների խմբեր, որոնք իրենց լեզուներով թարգմանեցին այլ քրիստոնյա ժողովուրդների մտածողության, հավատի և ծիսական գրականության մեծ գանձերը: Երբեմն նրանք գրում են իրենց սեփական երկրի պատմությունը, ինչպես է հայ պատմագիրների պարագան. Փավստոս Բյուզանդ, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի և այլն, կամ էլ Գրիգոր Տուրացիի՝ ֆրանկների առաջին պատմության հեղինակը: Եվ, վերջապես, հայրաբանական գրականությունը շրջանառության մեջ է դնում բարոյական և գեղագիտական արժեքներ, որոնք նրան մինչև օրս մնալուն հեղինակություն են տալիս:

Բոլոր եղանակներով և բոլոր առիթներով ջատագովվում է բարին կամ բարոյական առաքինությունը, ոչ միայն հոգևոր զարգացման կատարելագործման, մեղքի դեմ գրված աշխատություններում, այլև գրեթե բոլոր երկերում: Բարոյական այս արժեքները, որոնց արմատները գալիս են սուրբ Ավետարանից և մարդկային կյանքի հազարամյա փորձից, վերլուծվում են և հանձնարարվում ոչ թե հրամայողաբար, այլ բանական կերպով, բարեկամական և եղբայրական շեշտով: Դրանք ներգործում են մարդկանց բանականության և ազատ կամքի վրա, թե իրենց ներքին հեղինակությամբ, թե, մանավանդ, Աս-

տուժն Լոդոսի և սուրբ Գրոց հեղինակությամբ: Աստվածային հեղինակությունը մի առանձին ուժ և հմայք է տալիս այս արժեքներին: Մարմնավորելով բարեփոխված քրիստոնյաների և սրբերի, լավի այս հերոսների մեջ բարոյական արժեքները, ինչպես արդարությունը, աշխատանքը, համեստությունը, ուրիշների նկատմամբ հոգատարությունը և զոհաբերությունը, բարեկամությունը, բաշխությունը, ժուժկությունը, ազնվությունը, սերը բոլորի հանդեպ, նշմարտախոսությունը, որոնք կյանքի են կոչվել սրբերի և վերափոխված քրիստոնյաների, որպես սուկ բարու այս հերոսների կյանքում չեն դրսևորվում վերացական հասկացություններ, ինչպես դա պարագան է Արիստոտելի «Էթիկայում», այլ որպես կենդանի ուժեր, ապրումներ, որոնք սկիզբ են առել բուն Լոդոսից փայլուն կերպով և հոգևոր անուշ բույրով զարդարելով քրիստոնյաների կյանքը: Մարտիրոսների, սրբերի և հոգեպետ վերածնած քրիստոնյաների կյանքն ու գործը արտահայտություններն են այս արժեքների: Դրանք ժամանակի մեջ իրականացման ընթացքում գտնվող բարու արտահայտություններն են:

Հայրաբանական գրականությունը գնահատում է նաև էթետիկական գեղեցիկը, ամեն անգամ որ սա օժանդակում է բարոյական գեղեցկի ամրապնդմանն ու տարածմանը և Աստուծո փառավորմանը: Հայրերը արձակ և չափածո լուսավոր էջերով հաճախ նկարագրում են նաև բնության գեղեցկությունները, մարդկային մարմնի ներդաշնակությունն ու հմայքը, ճարտարապետական կառույցների և պարտեզների շքեղությունները, բնության օրեքնների և երևույթների կարգը, դեկավարների կեցվածքի վայելչությունը, ժամանակի աղքատների և հիվանդների թշվառ վիճակը, բարեկամների, երեսխանների և ծնողների ուրախությունների արտահայտությունները, դրախտի վայելքները:

Գրական գեղեցկությունը գնահատված է և մշակված գրողների կողմից, ինչպիսիք են սուրբ Կիպրիանոսը, Լակտանտիոսը, Հերոնիմոս և Օգոստինոս Երանելիները, Մեծն Բարսեղը, Գրիգոր Աստվածաբանը, Հովհան Ոսկեբերանը և այլն:

Հայրաբանական գրականությունը, որն ապարեզ մտավ և զարգացավ անտիկ մշակույթի շրջանակներում, օգտագործում է այս մշակույթի ձևերը, որ շարունակում է և փոխանցում հետագա դարերին, գաղափարներ, հարցեր, բնագրեր և նույնիսկ հունարենով և լատիներենով ամբողջական երկեր: Նա ստեղծում է նաև նոր այբուբեններ և գրականություններ հունա-լատինական աշխարհի ծայրամասերում գտնվող ժողովուրդների համար: Այս միումը գալիս է Ավետարանի բովանդակությունից և հայրաբանական ոգեկանության բարոյականից:

Հայրաբանական գրական գործերը, հատկապես ջատագովներինը, ընդհանուր առմամբ քննական վերաբերմունք ունեն աշխարհի մշակույթի նկատմամբ, նշավակելով նրա այն սկզբունքներն ու արտահայտությունները, որոնք չէին համաձայնվում ավետարանական պատգամի հետ կամ նույնիսկ հակադրվում էին դրան: Հայրաբանական այս քննադատական ոգին վերաճել էր մասամբ հունա-լատինական մշակույթից, սակայն, քննադատական այդ ոգին մանավանդ արտահայտությունն էր Ավետարանի և եկեղեցու խտաբարո դիրքավորման հանդեպ աշխարհի մեղքերի և անասկությունների, որոնք ծայրահեղությունների էին հասնում հունա-հռոմեական աշխարհիկ մշակույթի անկման այդ ժամանակաշրջանում:

Հայրաբանական քննադատությունը հատկապես խարազանում էր բազմաստվածությունը և չաստվածների անբարոյականությունը, մարդկային հասարակության համար այստեղից բխող բոլոր հետևանքներով: Նա խարազանում էր նաև մեղքը իր բոլոր ձևերով, ընկերային անարդարությունները՝ անհավասարությունները, ճորտատիրության շարիքների ամբողջ թափոթով, փիլիսոփայական և բարոյական սխտեմների հակասությունները և այլն: Սակայն այս քննադատական վերաբերմունքը նաև վեր էր հանում այն, ինչ որ դրական էր հունա-լատինական մշակույթի մեջ:

Հետևելով Փիլոնին, սուրբ հայրերը երբե-

մըն պնդում էին, որ աշխարհիկ մշակույթի դրական կողմերը արդյունք են գաղափարախոսական այն փոխառությանը, որ հեթանոս հեղինակները այդ վերցրել են սուրբ Գրությունից: Սա մի տեսություն է, որը, ինչպես օրինակ սուրբ Հուստիանոսի մոտ, հայտնըվում է սերմնական Լողոսի տեսության կողքին:

Հայրաբանական գրականությունն ունի գերակշռող կրոնական և ոգեկան ուղղություն անմիջականորեն կապված կյանքին, ի տարբերություն հունա-լատինական մշակույթի, որն ունի ավելի բանական և գեղագիտական ուղղություն, թեև պարունակում է նաև բավական թվով կրոնական տարրեր, բայց այլատեսակ, անջատ և մարդկանց կյանքի վրա

ստանց զգալի ազդեցության: Եկեղեցին և նրա միության համար թափված ջանքերը հայրաբանական գրականությանը հաղորդել են ներքին միավորման մի ընդհանուր նկարագիր, մի բան, որից զուրկ էր աշխարհիկ մշակույթը, որը երբեք չի ունեցել միավորող այնպիսի ոգեկան շունչ, որով կարողանար համակարգել իր սկզբունքները և ձգտումները: Եկեղեցու հովանավորությունը զուտ բարոյական էր և ոչ վարչական: Նա հայրաբան հեղինակներին է թողել մտածումի և գրական ստեղծագործության ամբողջական ազատությունը:

Հայրաբանական գրականությունը եղել և մնում է որպես մարդկային ոգու ամենամեծ երևույթներից և արժեքներից մեկը:





## Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

**Հոկտեմբերի 29-ին, ուրբաթ.**—Այսօր Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Երևանի Վ. Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետի ֆրանսիական մշակույթի և գրականության դասախոս Ժան-Մարկ Ռոզենսթիլի (Սորաբուրգի համալսարանից) և փիլիսոփայական ու բանասիրական գիտությունների դոկտոր Էռնեստ Բիհեն-Բերտելյանի (Բելգիա)՝ իր հարգելի տիկնոջ՝ թատերական գեղանկարիչ Դիտլինդ Բիհեն-Բերտելյանի:

Հայոց Հայրապետի և հարգարժան հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ գրույց:

**Հոկտեմբերի 30-ին, շաբաթ.**—Այսօր Արգենտինայից ուխտավորաբար ա. Էջմիածին է ժամանում Գորտոպայի հայոց հոգևոր հովիվ տ. Տաթև վրդ. Ղարիբյանը: Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո տ. Տաթև վարդապետը ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ աջահամբույրով ստանալու Նրա օրհնությունը:

**Հոկտեմբերի 31-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բուխարեստի հայոց ա. Հրեշտակապետաց եկեղեցու հոգևոր հովիվ տ. Զարեն վրդ. Պարոնյանը և քարոզում «Ունենի ի հոգույն տուեալ է բան իմաստութեան, այլում բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին հոգույ» (Ա Կորնթ. ԺԲ 8) բնաբանով:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Նոյեմբերի 3-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհափառ Հայրապետին է այցելում հյուրաբար Սուվետական Միությունում գտնվող քրիստոնեական եկեղեցիների խաղաղության կոնֆերանսի մշտական հանձնաժողովի գլխավոր քարտուղար Քարոյի Թուրը (Պրագա), որին ողնկցում է Մոսկվայի ուսաց պատրիարքարանի եկեղեցական արտաքին

հարաբերությունների բաժնի աշխատակից հայր Պավել Սոկոլովսկին:

Հայոց Հայրապետի և հարգարժան հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ գրույց, էկումենիկ ոգով՝ աշխարհում կայուն և տևական խաղաղության պաշտպանության նվիրված մի շարք հարցերի շուրջ:

Հարգելի հյուրերն այնուհետև այցելում են Մայր տաճար, եկեղեցական արվեստների թանգարան և ծանոթանում մայրաքաղաքի տեսարժան վայրերին ու ուսումնական-կրթական-գիտական հաստատություններին և նույնների 5-ին մեկնում Մայր Աթոռից՝ լավագույն տպավորություններով:

\* \* \*

**Նույնների 4-ին, հինգշաբթի.**—Այսօր Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ և Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքի միջնորդությամբ, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը Օշականի ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցում տ. Ադան արեղա Բալիզյանին շնորհում է մասնավոր վարդապետական իշխանության աստիճան:

\* \* \*

**Նույնների 6-ին, շաբաթ.**—Այսօր, Վեհափառ Հայրապետի մասնավոր հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, որին օդանավակայանում դիմավորում են՝ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը և տ. Գրիգորիս արեղա Բունիաթյանը:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսը իր պաշտոնատեղին է վերադառնում նույնների 16-ին, երեքշաբթի օրը:

\* \* \*

**Նույնների 7-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս արեղա Բունիաթյանը և քարո-

զում «Տեսչիք որպես նշմարտի գնացեք... գնեցեք զժամանակս, զի ատորք չարութեան են» (Եփես. Ե 16) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Նույնների 9-ին, երեքշաբթի.**—Այսօր Բելրութից Մայր Աթոռ են ժամանում Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատվիրակությունը, որի կազմում էին՝ Լիբանանի հայոց առաջնորդ տ. Տաճատ արքեպ. Ուրֆայանը, Անթիլիասի դպրեվանքի տեսուչ տ. Արտավազդ եպս. Թրթրյանը, Ազգային ընդհանուր ժողովի ատենապետ պրն. Վահե Սեթյանը՝ իր տիկնոջ հետ, և Ազգային կենտրոնական վարչության ատենապետ պրն. Խաչիկ Պապիկյանը:

Պարոնաք Վահե Սեթյանը և Խաչիկ Պապիկյանը Լիբանան են վերադառնում նույնների 16-ին, երեքշաբթի օրը:

\* \* \*

Այսօր, Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից հրաժեշտ առնելով, տ. Տիրան արքեպ. Ներսայանը, որը շուրջ երկու ամիս ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում, մեկնում է Բելրութ:

Այսօր իր պաշտոնատեղին է վերադառնում նաև տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը, որը շուրջ երեք շաբաթ ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

\* \* \*

**Նույնների 12-ին, ուրբաթ.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ռումինիայի և Բուլղարիայի թեմի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը: Իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո սրբազանը ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նրա օրհնությունը:

\* \* \*

Այսօր, կեսօրվա ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում այցելում է ֆրանսա-



հայ հայտնի նկարիչ Զարեհ Մուֆաֆյանի ստեղծագործության ցուցահանդեսը:

Այս առթիվ անվանի արվեստագետը Վեհափառ Հայրապետին է նվիրում իր ստեղծագործություններից երեք գունավոր նկարներ («Ս. Էջմիածնի Մայր տաճարը», «Եղիվարդի եկեղեցին» և «Հայրենի բնակար»):

\*  
\* \*

**Նոյեմբերի 14-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տաթև վրդ. Ղարիբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\*  
\* \*

**Նոյեմբերի 15-ին, երկուշաբթի.**—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին ներկա է լինում նաև տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

\*  
\* \*

**Նոյեմբերի 20-ին, շաբաթ.**—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում տ. Տաթև վրդ. Ղարիբյանը և մեկնում Հարավային Ամերիկա (Գորտուպա)՝ իր պաշտոնատեղին:

Նույն օրը Փարիզից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի և Փարիզի հայոց առաջնորդի փոխանորդ տ. Գլուտ վրդ. Նագաշյանը, որը Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ ստանալու համար Նրա օրհնությունը:

\*  
\* \*

**Նոյեմբերի 21-ին, կիրակի.**—Ընծայումն ս. Աստուածածնի ի տաճարն.

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-

ցում տ. Գևորգ վրդ. Սերադյարյանը և բարոգում «Ռուսի լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\*  
\* \*

**Նոյեմբերի 23-ին, երեքշաբթի.**—Այսօր Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ են առնում տ. Տաճատ արքեպ. Որֆայանը և տ. Արտավազդ եպս. Թրթրյանը և վերադառնում Լիբանան:

\*  
\* \*

**Նոյեմբերի 26-ին, ուրբաթ.**—Այսօր Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել այցելությունը Բայբլ Հատիգ ներկայացուցիչ, Ատովաձաշնչի համաշխարհային ընկերության եվրոպական կենդանի լեզուների թարգմանությունների գրասենյակի պետ պրն. Պոլ Էլլիգտորդի:

Հայոց Հայրապետի և մեծահարգ հյուրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Հարգելի հյուրն այնուհետև Վեհափառում հանդիպում և զրույց է ունենում Մայր Աթոռում Նոր Կտակարանի առաքելական թղթերի թարգմանությամբ զբաղվող Ա. Հատիտյանի, Պ. Ծահրազյանի և Ս. Անթոնյանի հետ:

Պրն. Պոլ Էլլիգտորդին իր պաշտոնատեղին է վերադառնում նոյեմբերի 27-ին, շաբաթ օրը:

\*  
\* \*

Այսօր, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ ու Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի հրավերով, հոգևոր ծառայության և ուսումնառության համար Ֆրանսիա մեկնեցին Մայր Աթոռի միաբաններ տ. Գրիգորիս արեղա Բունիաթյանը, որը կպաշտոնավարի Լիոնի հայ համայնքում, և Ղա-

գարոս սրկ. Կյուրեղյանը, որը կծառայի Փարիզի հայոց և Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն:

\*  
\* \*

**Նոյեմբերի 27-ին, շաբաթ.**—Այսօր Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել այցելությունը հյուրաբար Հայաստանում գտնվող «Վաշինգտոն փոստ» և «Նյու-Յորք թայմզ» ամերիկյան թերթերի թղթակիցների՝ Հենրիխ Սմիթի և Ռոբերտ Կալզերի ու նրանց հարգելի տիկիների:

Հայոց Հայրապետի և պատվարժան թղթակիցների միջև տեղի է ունենում ջերմ գրույց:

**Նոյեմբերի 28-ին, կիրակի.**—Այսօր Մայր տանարում և պատարագ է մատուցում տ. Գյուտ վրդ. Նագաշյանը:

Հավարտ և պատարագի Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է կառավարական մաղթանք՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 51-րդ տարեդարձի առիթով:

Մաղթանքից առաջ քարոզում է տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ վեր հանելով վերջին հիսնամյակում խաղաղության և պետականության պայմաններում հայ ժողովրդի ձեռք բերած հոգևոր, ազգային մեծ վերագարթների մասին:

## Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ

Մայր Աթոռ և Էջմիածնի Դիվանը այսու լիազորված է ծանուցելու՝ ի գիտություն Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական Աթոռներին և թեմական եկեղեցական իշխանություններին, որ Ամենայն Հայոց Հայրապետի 31 մայիս 1971-ի վճռով կարգալույծ է արված Արարատյան թեմից տ. Կոմիտաս քահանա Ծիրինյանը, որը դրժել է իր ծառայության ուխտը և լքել իրեն վստահված հոտը, առանց հարգելի պատճառի և առանց հոգևոր վերին իշխանությունների արտոնության, հակառակ վերջին չորս տարիների ընթացքում բազմիցս նրան եղած հորդորներին և նախազուշացումներին Արարատյան թեմակալ եպիսկոպոսի և Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհրդի կողմից:

Վերջին երկու տարիների ընթացքում, սկսյալ 1969 թ. հունիսի 3-ից, հիշյալ քահանան, ինքնակամ կերպով, փաստորեն հեռացել էր եկեղեցուց և դադարել քահանայագործելուց, վարելով աշխարհիկ կյանք և արհամարհելով իրեն եղած բոլոր հրավերներն ու հորդորները:

Վերոհիշյալ կարգազուրկ քահանան դասվում է աշխարհականների շարքը իր նախկին՝ Կարապետ Ծիրինյան անունով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՐՈՒԻ

2 հունիսի 1971 թ.,  
Ս. Էջմիածին




## ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը նույնիսկ 1-ին, երկուշաբթի օրը, Մայր տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն շնորհեց Բոխարեստի հայոց ա. Հրեշտակապետաց եկեղեցու հոգևոր հովիվ տ. Զարեգ վրդ. Պարոնյանին, որն ուխտալորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Տ. Զարեգ վրդ. Պարոնյանը ծնվել է 1940 թվականին Բոխարեստում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցում: 1955—1959 թվականներին սովորել և ավարտել է Երևանի մանկավարժական ուսումնարանը:

1959—1961 թվականներին աշխատել է որսյես ուսուցիչ Բոխարեստի հայկական դպրոցում: 1961—1963 թվականներին նա սովորել է ա. Էջմիածնի հոգևոր ճեմարանում: 1963—1964 թվականներին հետևել է կրոնագիտական մի շարք դասընթացների Զագորսկի ուսանական ճեմարանում: 1964 թվականին պաշտպանել է իր ավարտաճառը՝ «Ստեփանոս վրդ. Լեհացու կյանքն ու գոր-



ծը» թեմայով ա. Էջմիածնի հոգևոր ճեմարանում:

1963 թվականին ձեռնադրվել է սարկա-

վագ: 1965 թվականին և Էջմիածնի Մայր տաճարում կուսակրոն քահանա է ձեռնադրվում տ. Ասողիկ եպս. Ղազարյանից:

1969 թվականին, ներկայացնելով «Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի կյանքն ու գործունեությունը» իր ավարտաճառը, մասնավոր վարդապետական իշխանություն է ստանում տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանից:


Տ. Զարեհ վրդ. Պարոնյանը 1967—1970 թվականներին հետևել է Բուխարեստի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դասախոսություններին և պաշտպանել է իր ավարտաճառը՝ աստվածաբանության մագիստրոսի աստիճան ստանալու համար: Ռումին պատրիարքարանի պաշտոնաթերթում տ. Զարեհ վրդ. Պարոնյանը հրատարակել է մի շարք ուսումնասիրություններ


հայ եկեղեցական իրավունքի մասին:

Տ. Զարեհ վրդ. Պարոնյանը երկար տարիներ անձնվիրությամբ պաշտոնավարում է Բուխարեստի հայոց և Հրեշտակապետաց եկեղեցում որպես հոգևոր հովիվ:

Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը մեր խոստումնալից, ավանդապահ և հոգելից եկեղեցականներից մեկն է, որն իր հոգու ողջ նվիրումով ծառայում է Հայաստանյայց առաքելական եկեղեցուն և հայ ժողովրդին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանին այս առթիվ՝ մաղթելով նրան հետագա հաջողություններ հոգևոր ծառայության իր ասպարեզում: Վստահ ենք, որ նա իր անձնի ծառայությամբ կարդարացնի հայրապետական բարձր վստահությունը և իր ժողովրդի հույսերը:





## ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

(Սեպտեմբեր 6—11, 1971)

Անգլիո Օքսֆորդ համալսարանի կազմակերպությամբ ներկա տարվույս սեպտեմբեր 6—11 Օքսֆորդի մեջ կայացավ միջազգային վեցերորդ համագումարը մասնակցությամբ հարյուրավոր եկեղեցական պատմության և հայրաբանության մասնագետ բանասերներու և պրոֆեսորներու, որոնք հրավիրված էին Եվրոպայի և Ամերիկաներու բոլոր երկիրներու հայտնի համալսարաններեն: Վեցօրյա այս բազմամարդ համագումարը իր շատ ճոխ հայտագրով եկավ ապացուցանելու թե կարելի է մասնագիտորեն կազմակերպյալ հիմունքով ժողովականներուն հրամցնել նյութերու աղագանություն՝ կեդրոնացած գլխավոր թեմայի մը շուրջ, ինչպիսին էր քրիստոնեական սուաշին դարերու հայրաբանությունը: Գլխավոր դասախոսներեն արժե հիշել անվանի բանասեր-հեղինակներ կարդինալ Ժան Դանհիելու, Ժ. Ն. Դ. Կելլի, Ժակ Ֆոնտեն, Ռ. Վ. Թոմսըն, Վան Դեր Բրինկ, Կորո Ալան, Ֆլորովսկի, կարդինալ Պելլեգրինո, Նորրիս, Տոյրներ և ուրիշներ:

Հայոցս համար նշելի պարագա մը պետք է լինի հիշյալ դասախոսներեն դոկտոր

Թոմսընի<sup>1</sup> կարդացած դասախոսությունը հայ եկեղեցական հայրերու գրականության շուրջ, ուր փայլուն կերպով ներկայացվեցավ անբողջական պատկերը հայ գրականության ճնունդին և իր անմիջական արտահայտությանը Ե—Ը դարերու եկեղեցական գրականության մեջ: Նաև նշելու ենք, որպես հայ համագումարին հրավիրված էր իր մասնակցությունը բերելու Ֆիլադելֆիայեն Զավեն Ծ. վրդ. Արգումանյան, որուն ևս առիթ տրվեցավ բանախոսություն մը կարդալու Եզնիկ Կողբացիի «անձնիշխանութեան», կամ այլ խոսքով, ազատ կամքի վարդապետության մասին:

Ընդհանուր հայտագիրը կարելի է ներկայացնել գլխավոր չորս բաժանումներով.

**Ա. Գլխավոր դասախոսություններ**—Թիվով 16, որոնք տրամադրելի եղան ընդհանուրին, համագումարի բոլոր անդամներուն: Սույն դասախոսությունները առհասարակ կշռշափեին վարդապետական և հայրախոսական կալվածներեն վերցված նրբին

<sup>1</sup> Դոկտ. Թոմսըն հայագիտության դասախոսն է Հարվարդ համալսարանի արևելյան լեզուներու բաժանումներին:

մանրամասնություններ մասնագիտական արժևորումով: Դասախոսներեն ոմանք արդիական մոտեցումով վերլուծեցին առաջին հինգ դարերու **ավանդության, վարդապետության, բանաձևումի, հանգանակի** մահմանումները: Ուրիշները սկզբնական մկրտության և երախայից մկրտության հարաբերությունները նշտեցին և կամ ընդգծեցին հայրերու գրականության մեջ պարունակված հեղինակական մշակույթն ու ազդեցությունը: Տակավին ուրիշներ վերանկատողության ենթարկեցին հերետիկոսներն ու ուղղափառ ջատագովներուն քրիստոսաբանական դրույուններն ու նախատիպերը:

**Բ. Խմբական սերտողություններ**—Թիվով 56, բաժնված չորս օրերու և օրական չորս խումբերու վրա, նյութերու ճոխ ալլազանությամբ, որոնք զբաղեցան եկեղեցական հին գրականությունեն բխող գրեթե ամեն հավանական հարցերու հետ, ինչպես հայրերու հոգեբանության, գործերու վարդապետական և լեզվական արժեքին, բնագիրներու քննադատության, նորահայտ բնագիրներու բնության և պատարագամատուցի կազմավորման: Անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով կատարված այս մասնակի դասախոսությունները զբաղեցան զբլխավորաբար Օրոգինեսի, Տերտուլիանոսի, Գրիգոր Նյուսացիի, Նագիազանցիի, Իգնատիոս հայրապետի, Կղեմեսի, Եվսեբիոսի, Բարսեղ Կեսարացիի և Օգոստինոսի գործերու արժևորումով, ինչպես նաև Նակ Համադիի նորահայտ գրականությամբ հայտնված գնոստիկյան վարդապետությամբ և հիշել հայրերու գործերեն բխած վարդապետական և եզրաբանական խնդիրներով: Նկատելի եղավ միշտ որ դասախոսներ մասնագիտորեն և հնագույն լեզուներու միջոցավ միայն, ջանացին ներկայացնել հայրերը, միշտ նորագույն մոտեցումով և արդի բանասիրության ընծայած մեթոդներով, ինչպիսիք են, ընդհանուրեն դեպի մասնավորի ընթացքը, սկզբնականեն դեպի երկրորդականի զարգացումը, անհատի մը համոզումին կամ հավատքին ընդհանրացումը և ավանդության մը հիմնավորումը: Հետաքրքրական եղավ հետևիլ ամերիկյան ուսուցչապետներու արագընթաց և երբեմն ծայրահեղ եզրակացությանց որոնց եվրոպացիք և անգլիացիք հակազդեցին հաճախ դասական անդրադարձումով և երբեմն ալ խանդավառ համաձայնությամբ: Պատրաստված աշխատանքներու լրջությունը կպարտադրեր ունկընդիրները մտածված կերպով հարցերը քննելու, նկատելով որ ամեն խոսք որ կուգար հին հայրերեն արդեն իսկ վավերական

և փաստացի հիմունքով կներկայացվեր, որուն սակայն մեկնաբանությունը կպահանջեր արդի հասկացողությամբ հոգեբանական և իմաստասիրական թափանցում ինչպես նաև այդ խոսքերուն հետ առնչված առօրյա կյանքի ասհմաններն ու ազդեցությունները:

Արժե այստեղ հիշել մի քանի նյութերը որոնց շուրջ հետաքրքրական սերտողություններ կատարվեցան.

1. Հիպպոլիտի գործերու հրատարակությունը և անոր դժվարությունները.
2. Հուստինոսի ծիսագիտության արժեքն ու նշանակությունը.
3. Որոգինեսի «սրբագործումը»-epicleses.
4. Իգնատիոսի գրությանց վերակառուցումը.
5. Մոնտանիզմի ապաշխարության դրությունը.
6. Եկեղեցին և պետությունը հարաբերությունը Տերտուլիանոսի մոտ.
7. Հայրերը և իրենց գրականության մեջ քաղաքական մոմենտը.
8. Եվսեբիոս Կեսարացի և Նիկիո ժողովը.
9. Գրիգոր Նյուսացի և պղատոնական դիալեկտիկը.
10. Մարտիրոսություն և վկայություն.
11. Եկեղեցվո աստվածաբանությունը և ծիսական խորհրդավորությունը Մաքսիմոս Խոստովանողի մոտ.
12. Ասորի ուղղափառ եկեղեցիի մկրտության կարգը պատմականորեն.

**Գ. Ս. հայրերու գործերու բնագրային հրատարակությունները**—Կարելի է ըսել թե ընդհանուրին ուղղված չորսօրյա այս 32 կայրճ հաղորդումները եղան հետաքրքրական նորություն մը մեզ համար: Առավոտյան քառասունհինգ վայրկյաններու ընթացքին հրավիրվեցան ութ անձեր, չորս օր հաջորդաբար, յուրաքանչյուրը որոշ հրատարակչատան մը կողմեն, ըսելու համար թե անցնող տասնամյակին և գալիք հնգամյակին բանասիրական և բնագրային ինչ գործեր հրատարակված են, ինչ լեզուներով և ինչ բովանդակությամբ: Հայտնի եղավ որ հին և նոր լեզուներով բազմաթիվ հայրախոսական բնագիրներ և թարգմանություններ, քննական ուսումնասիրությամբ, հրատարակված են և շատեր կհրատարակվին շուտով: Մեզ համար ուրախալի եղավ անձնապես տեսակցիլ և լսել հայր Ֆ. Գրաֆին<sup>2</sup>, որ տարիներ ի վեր կհրատարակե Patrologia Orientalis պրակները եկե-

<sup>2</sup> Pere F. Graffin տեղեկն է Patrologia Orientalis հրատարակության և ասորիեն լեզվի պրոֆեսորն է Փարիզի Institut Catholique-ի:

դեցական հայրերու գործերու բնագիրներովն ու ֆրանսերէն թարգմանությամբ: Մեզի հայտնի էին նույն շարքին մեջ հրատարակված Եզնիկ Կողբացիի **Եղծ աղանդոց** գործին բնագիրն ու հայր Լ. Մարիէի կատարած ֆրանսերէն թարգմանությունը մանրամասն բաղդատական նոթերով<sup>3</sup>: Համագումարի այս առիթով հայր Կրաֆֆին իր հետ բերած էր նոր բնագիր մը և անոր թարգմանության հրատարակությունը, **Ճաշոցի** ընթերցվածներու բաղդատական մը, կատարված Աթանաս Ռնոտի կողմէ<sup>4</sup>:

**Գ. Հաղորդում-գեկույցներ** — Նախապես եղած կարգադրության համաձայն կարգ մը

<sup>3</sup> Louis Maries et Charles Mercier, Eznik de Kolb, De Deo, Traduction Francaise, notes et tables. Edition critique du Texte Armenien. F. Graffin, Patrologia Orientalis, Tome 28, fasc. 3—4, Paris, 1959.


<sup>4</sup> Atanase Renoux, Le Codex Armenien Jerusalem 121. II edition comparée du texte et de deux autres Manuscrits. Introduction, Textes, Traduction et notes. F. Graffin, Patrologia Orientalis, Tome XXXVI, fasc. 2 No. 168, Turnhout, Belgique, 1971.

ժողովականներու կողմն կարդացվեցան թիվով 238 դասախոսություններ որոնք իրենց այլազանությամբ եղան հետաքրքրական: Յուրաքանչյուր դասախոս պատշաճորեն ներկայացվեցավ Օքսֆորդի կրոնագիտական բաժնի դասախոսներու կողմն գլխավորությամբ քաղաքի անգլիկան եպիսկոպոսին: Նյութերը, թեև այլազան, սակայն բոլորն ալ կաահմանափակվեին հայրաբանության գլխավոր թեմային մեջ և կվերաբերեին լեզվական, բնագրային, վարդապետական և բնագրային-բննադատական կարվածներուն: Ընտրողական լայն և ճոխ հանգամանքը այս բազմաթիվ հաղորդումներուն հետաքրքրական և մեծապես օգտակար կդարձներ անոնց շարունակական ընթացքը: Յուրաքանչյուր դասախոսութենէն ետք առիթ տրվեցավ ներկաներուն որոշ ակնարկներ ընել և կամ հարցումներ ուղղել:

Փակելէ առաջ հարկ է հաստատել թե համագումարի ընդարձակ հայտագիրը որ ընդհանուր կերպով բաղկացած էր 342 դասախոսություններէ գործադրվեցավ լավագույն կերպով և օգտակարագույնս բերավ իր նպաստը ներկա ժողովականներուն:

ԶԱՎԵՆ Ծ. ՎՐԴ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ





ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒԹՅԱՆ

ԱՆՏԻՊ ԷԶԵՐ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ\*

1988, մարտի 16, Բրանքս.

Սիրելի՛ պարոն  
Ա. Չոբանյան,

Ողարկում եմ Ձեզ 150 տալերի մի չեք, հրատարակելու Սորբոնի հանդիսի ճառերը: Զբաղված լինելով «Լուսավորչի լումայի» խնդրով, չէի կարող միևնույն ժամանակ այլ նպատակի համար դիմում անել Նյու-Յորքում, իսկ նամակով ուրիշ քաղաքների ազգայինների, վատաբ չէի, թե շուտ դրական պատասխան կատանայի: Ընդունեցեք այս լուման իբրև գրչի եղբայրության նվեր, Ձեր բոլորի իղձը իրագործելու համար: Միայն կխնդրեմ, որևէ կերպով իմ անվան հիշատակություն չլինի:

Բաֆֆիկի համար գրեցի Լոնդոն ոչ միայն հանձնաժողովին, այլև անդամներից ոմանց, տեսնենք, ի՞նչ հետևանք պիտի ունենա: Ուշացրի գրությունս, մտածելով, թե, գուցե, փետրվարին Լոնդոն կլինեն և անձամբ հարկավորը կխոսեն, բայց տեսնելով հապաղումս և անորոշ կացությունս, գրեցի:

Միշտ սիրով

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

1945, օգոստ. 21, Բիկֆայա

Սիրելի Արշակ Չոբանյան,

Ձեր նամակը ստացա և կարդացի Էջմիածնից վերադարձից հետո, որ ուրախու-

\* Ճարտնակված «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի № 10-ից:

թյուն եղավ ինձ համար: Արդեն մտադիր էի Ձեզ գրել և պատերազմի պատճառով մեր ընդհատված գրավոր հաղորդակցությունը նորոգել:

Անշո՛ւշտ, հետևած կլինիք Ամերիկայից մինչև Անթիլիաս մեր ճանապարհորդության ընթացքին, ուշացավ մի քիչ Մեր մեկնումը Ամերիկայից՝ հակառակ Մեր ցանկության, բայց եղավ ոչ ի վնաս Կիլիկյան Աթոռի. Մեր Հոբելյանի կատարումը Ամերիկայում, Մեր այցելությունը Եգիպտոսի հայոց, Երուսաղեմ, հոգևոր Մխիթարությունից և ազգային ժողովրդական խանդավառությունից գատ, Կիլիկիո Աթոռին քերեց ավելի, քան 100 հազար դոլլարի մի գումար՝ դպրոցական և մշակութային նպատակների համար գործադրելու: Մենք անհատապես մի սենտ չենք վերցրել Մեր անձնականի համար: Իսկ մուտքը և ընդունելությունը Բեյրութում արքայական էր, նույնպիսի փառավորությամբ օծումը և գահակալությունը դեսպանների և կառավարական մինիստրների ներկայությամբ:

Այնուհետև դեռ գործի չկլամ, պետք է Էջմիածին գնայի, որ Մեր աչքում կարևորագույն և պատմական արժեք ունեցող մի գործ էր: Եղան խորհուրդ տվողներ, որ տեղից չշարժվեմ, բայց հաստատ մնացինք Մեր ուրշման մեջ, և ուրախ եմ դորա համար: Ասել կարող ենք, որ Մեր ներկայությունը արդյունավոր եղավ երկու Աթոռների սերտ և բարեկամական հարաբերության, Եկեղեցու միասնականության, Նիստերի ներդաշնակ և կարգավորյալ ընթացքի և փառավոր, միաձայն ընտրության համար, ինչպես և Մ.

Աթոռի ապահովության խնդրի: Այսպես, ուրեմն, անցել է արդեն, գրեթե, վեց ամիս Մեր ժամանումից, դեռ Մեր Աթոռի իսկական գործերին շատ քիչ ենք ձեռնամուխ եղել:

Իսկ այստեղ գործ շատ կա կատարելու, կարելի է ասել Մեր կյանքի մի նոր շրջան կլինի, եթե հաջողությամբ ընթացան մեր գործերը: Ինչպես գրել ենք կամ խոսել քանիցս, Մենք կհամենայինք Մեր վանքը եկեղեցական-վարչական կեդրոն լինելուց զատ, դարձնել այն գիտական մշակութային **օջախ**, կրակարան, քարձրացնելով Դպրեվանքի մակարդակը, միջնակարգից բարձրագույնի վերածելով հայկականի համար, ընդարձակելով և կարգավորելով տպարանը, որպեսզի ոչ միայն ատոքացած «**Հասկ**» այլև գիտական աշխատություններ հրատարակել կարողանանք, լինի այն Մեր միաբանության կամ դրսի աշխատավորների, մատենադարան կազմել, համապատասխան միաբանություն ստեղծել, ներդաշնակ երգեցողություն եկեղեցիների մեջ, քարոզչություն...: Սորա վերա ավելանում է վարչական կուռ և ներդաշնակ մեքենա ստեղծել, որ ամենաըժվարն է երևում Մեզ համար: Հանգուցյալ Պետրոս կաթողիկոսից հետո Կարոյան արքեպիսկոպոստի տեղակալությամբ Կ. Պոլստ ազգային սահմանադրության հիման վրա ստեղծել են Երևանի իսկական ժողով և Կեդրոնական Վարչություն, որոնց նախագահն է միայն Կաթողիկոսը, նույնը և Կրոնական ժողովի: Սրանց հետ նաև տնտեսական, քաղաքական, ուսումնական ժողովներ... մի ամբողջ պետական կազմակերպություն... ընդամենը 170 հազար ժողովրդի համար, պարլամենտական բոլոր կարգերով, գալստական նման բաժանումներով: Առանց կաթողիկոսի աչսպիսի կազմակերպություն և սահմանադրություն ստեղծել անկանոն է և դեմ եկեղեցական ավանդության: Աչսպիսի անկանոնությունները, եթե կրկնվի և ընդունվի, քար գայթակորություն կդառնա և անձնական նպատակների հասնելու միջոց Տեղապահների ձեռքում: Ուստի և անվավերական է այն Մեր աչքում: Մենք ոչ միայն դեմ չենք ժողովրդի մասնակցության եկեղեցական վարչության մեջ, այլև այդ մեր եկեղեցու ստանձնահատկությունն ենք համարում, բայց կկամենայինք ավելի սեղմ, ամփոփ և գործնական սահմանադրություն ունենալ, որ կարևորն է շեշտված կաթողիկոսական և նվիրակետական ավանդություններն ու իրավունքները: Պիտի հաջողվի՞ խոսք հասկացնել և համերաշխությամբ ստանց աղ-

մուկների և կրքերի բորբոքման կատարել, թե աղմկարարությամբ արգելք պիտի լինի շինարար գործ կատարել և Մեր լավագույն ծրագիրներն իրագործել: Ահա ի՞նչ դժվար խնդրի ստաց ենք կանգնած:

Երևանից հետո քերել են ձեռագիր և անտիպ աշխատություններին մի կարևոր մասը, որոնց մեջ և հիշատակարաններին ժողովածուն: Առաջին հատորը 50 մամուլ բոլորովին պատրաստ է տպագրության համար, եթե լավ և բավականաչափ թուղթ գտնեն: Գրեթե պատրաստ է և հայ հնագրության պատմությունը, որ մեր մշակույթի և ձեռագրական արվեստի մի մասն է: Այնուհետև և ուրիշ գործեր մինչև մանրանկարչական արվեստի համադրությունը:

Ողարկում ենք Ձեզ պատերազմի ընթացքում տպագրած աշխատանքներից մի մի օրինակ. Խաղբակյանց Բ և Գ հատորները, ինչպես և Նյուրթեր և Ուսումնասիրությունների Բ և Գ պրակները: Վերջին երկուսը զուտ մանրանկարչական և հնագիտական են:

Առողջությունս ընդհանրապես լավ է, բայց կամաց կամաց ծերանում եմ: Էջմիածնից վերադարձից հետո ամառանոց ենք եկած, Անթիլիաս շատ տաք է, ամառը անկարելի է այնտեղ ապրել: Գրեցեք Դուք Անթիլիասի հասցեով:

Ջերմ սիրով  
Գ.ԱՐԵԳ.ԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒԽԿԻՈ

**1946, օգոստ. 1, Անթիլիաս-Լիբանան**

Հարգելի Տիար Արշակ Չորակյան  
Ի Փարիզ

Ազգային եկեղեցական ժողովը անցյալ տարի որոշեց տոնել Աթոռի փոխադրության հինգ հարյուրամյակը՝ համազգային նշանակությամբ: Նորին Սրբություն Ս. Տ. Գեորգ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1946/7 տարին այդ հիման վերա հուշակելով որպես Հորեյանական, առաջարկել է Մեզ նախաձեռնարկ լինել այդ առթիվ մի Գիտական ժողովածու հրատարակելու գործին, նվիրված տոնի պանծացմանը: Մենք սիրով հանձն ենք ատել այդ առաջարկությունը, չնայելով Մեր պարտավորություններով ծանրաբեռնված վիճակին, որպեսզի ապացույց տանք մեր Աթոռների համերաշխ գործակցության:

Առաջին հերթին ցանկալի էր, որ գրվելիք ուսումնասիրությունները և հոդվածները նվիրված լինեին Հորեյանի հետ կապված ժամանակի և երևույթների լուսարանության,

որպեսզի երևան հանվեր այդ հինգ հարյուր տարվա ընթացքում Էջմիածնի Կաթողիկոսության կատարած դերը: Այս մտքով է պատրաստված 12 հոդվածներից բաղկացած մի ծրագիր՝ հոդվածագիրների կամքին թողնելով նրանցից որևէ մեկի ընտրությունը: Բայց մասնակցողները ազատ են այդ ծրագրից դուրս ևս որևէ հայագիտական աշխատությամբ իրենց մասնակցությունը բերել, ինչպես բացատրված է ծրագրի 12-րդ հոդվածի մեջ:

Արդ, հարգելի պարոն, այս ծանուցագրով դիմում ենք Ձեր սիրելիության, խնդրելով Ձեր մասնակցությունը այս գործի մեջ: Հոդվածագիրները, եթե կամենան կատանան իրենց աշխատության արտատպությունը հիսուն օրինակով: Գործը պիտի տպագրվի Էջմիածնում:

Հայրական և բարեկամական սիրով  
 Գ.ԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
 Տանն Կիլիկիո

Մի լավ հոդված էլ կուզեմ մեր հրատարակելիք «Գիտական Հասկ» Տարեգրքի համար: Վաղուց է Ձեզնից յուր չունիմք:

**ԾՐԱԳԻՐ ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ**

Նվիրված Աթոռի Էջմիածնի փոխադրության Հինգհարյուր ամյակի հիշատակին

1. Ընդհանուր տեսություն և Հայրապետական Աթոռի նշանակության մասին, փոխադրությունից մինչև ռուսական տիրապետությունը:
2. Աթոռի փոխադրության շարժառիթները (Գաղափարի ծագումն ու արտահայտությունները, վարդապետարանների դերը այդ խնդրում, հատկապես Տաթևացին յուր աշակերտներով):
3. Ծշտում Էջմիածնի կաթողիկոսների ցանկի և ժամանակագրության, գրական սվլյակների հիման վրա:
4. Էջմիածնի վերածնության փորձերը քաղաքական, եկեղեցական, շինարարական և գեղարվեստական մարզերում:
5. Էջմիածնի կատարած դերը ԺԹ դարի դպրոցական-կրթական և գիտական մշակութային մարզերում (Հնությունների գյուտ նկարագրություն, արձանագրությունների հավաքում, հրատարակություններ, գիտական աշխատանքներ և այլն):
6. Աչքի ընկնող դեմքեր կաթողիկոսների մեջ, շրջանի հետ կապված կամ անհատաբար:
7. Էջմիածնի և Նոր Զուղայի դպրոցները, ձեռագրական և տպագրական արվեստների և մշակութային շարժումներ:

8. Պապական Աթոռի փորձեր Էջմիածնիը եկեղեցիներում յուր գերիշխանության, պատմական լուսաբանության և առարկայական բնույթով:

9—10. Կիլիկիո և Աղթամարի կաթողիկոսությունների դերը ազգապահպանության և մշակույթի մեջ իրենց սահմաններում, առանձին հոդվածներով:

11. Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսությունների հարաբերությունները:

12. Հայագիտական, հնագիտական և եկեղեցական երաժշտության մարզերում որևէ ուսումնասիրություն, հեղինակի ազատ ընտրությամբ:

**Ծանոթություն.**—Հոդվածները պիտի լինին ոչ ավելի, քան 15—20 երես տպագրական, 16 մեծությամբ: Հնագիտական կամ ձեռագրական ուսումնասիրություններ կարող են լինել և պատկերազարդ, այդ դեպքում չի պակասում բնագրի համար նշանակված ծավալը: Ավելի ընդարձակ լինելու դեպքում, բանակցել խմբագրության հետ: Հոդվածներ կարող են լինել և օտար լեզվով, որոնց բնագրի հետ կը տպագրվին և հայերեն թարգմանությունները:

Հոդվածների առաքման վերջին ժամանակ նշանակվում է մինչև 1947 թվի փետրվարի վերջը: Բայց ցանկալի է Ձեր համաձայնության ավելի վաղ ստացումը և նույնիսկ աշխատության: Ամենայն տեսակ թղթակցությունների կամ բացատրությունների համար դիմել Կիլիկիո Կաթողիկոսարան արտասահմանի համար, իսկ Հայաստանում և Խ. երկրների մեջ՝ Էջմիածնին:

**1946, ապր. 27, Անթիլիաս-Լիբանան**

Սիրելի Արշակ Չոբանյան,

Ուրախ եմ, որ Ձեզ բավականություն են պատճառել ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ առաքմամբ: Ունեի և ռուսերեն թարգմանությունը, շքեղ հրատարակությամբ և գունավոր պատկերներով, որ Տիրայր արքեպիսկոպոսն առավ, այլ ևս հետ չստացա: Սատունցի Դավթով այլևս դժվար գրադվեմ, ուրախ եմ, որ իմ օրինակի առաքմամբ, հնարավորություն կունենաք ավելի շուտ գործի անցնել: Ժատ երկար ժամանակ և աշխատանք կպահանջե այդ գործի թարգմանությունն ու հրատարակությունը, բայց դորանով հայ գրականության համար Ձեր կատարած շատ ծառայությունների վերա, մի կախերոն էլ կավելացնեք:

Վերջերս, երբ Հայեպ էի գնացել, իմացա Ձեր մի նոր հրատարակության մասին Քու-

չակցան տաղերի ոճով, խնդրեմ, մի օրինակ ուղարկեք ինձ: Չգիտեմ մեր «Հասկն» ստանդոն եք, թե ոչ, կատուգեմ, եթե չի ուղարկվում, կպատվիրեմ ուղարկել: Ուրախ կլինեմ «Անահիտ»-ի վերահրատարակությունը շուտ տեսնել, բայց խնայեցեք Ձեր առողջությունը, Արշակ Չոբանյանի տեղը բռնող չի լինի:

Ձեզ գրել եմ, որ իմ ձեռագիր աշխատանքների և Հիշատակարանների մի կարևոր մասը բերեցի հետո Հայաստանից, բայց անձնական մատենադարանիս հետքն անգամ չգտա: Մասնագիտական անհրաժեշտ գրքերից այժմ գուրկ եմ. պիտի աշխատեմ ամենաանհրաժեշտ գրքերը ի մի բերել, որպեսզի կարողանամ ուսումնասիրություններս շարունակել և լրացնել: Այս գործում պիտի խնդրեմ Ձեզ, պ. Բերբերյանին, գուցե և Բալայանին, որ օգնեք ինձ, ֆրանսերեն անհրաժեշտ գրքերը ձեռք բերել: Հազար դոլլարի չափ գումար ունիմ այդ նպատակի համար, կեղք ֆրանսերենի և կեղք գերմաներենի համար: Կպատրաստեմ ցուցակը և կուղարկեմ: Գերմաներենի համար մասամբ կօգնե Ռ. Ալիևյանը, որ պատրաստվում է Վիեննա գնալ:

Միշտ սիրով՝

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՒ

1947, <հոկտ. 29>

**Անթիլիաս-Լիբանան**

Սիրելիդ իմ Ա. Չոբանյան,

Հանությանը ստացել եմք Ձեր հունվար 7 գրությունը, ուշ, բայց նուշ: Ըստ լավ հասկանում եմք Ձեր պատասխանի ուշացումը, բազմազբաղ մարդուն դժվար է շուտ ու կանոնավոր ևամակագրություն ունենալ: Ձեզ լավ եմ հասկանում, որովհետև ինքս նույն վիճակի մեջ եմ: Դեպքից օգտվելով, կուզեմ Ձեզ մի բարեկամական խորհուրդ տալ, խնայեցեք Ձեր առողջությունը. թելը, որ շատ բաշեւ, կը կտրվի, ամփոփեցեք Ձեր հասարակական գործերի մասնակցությունը միայն ամենակարևոր հարցերի մեջ: Հաճախ ստի՞ք եմ ունեցել բարեկամների շրջանի մեջ հայտնելու, թե ի՞նչ անփոխարինելի կորուստ կլինի Ձեր մահը Փարիզի հայ գրական և ազգային կյանքի համար, Ձեր փորձառությունը հայ կյանքի և գրականության մեջ, Ձեր բարեկամական կապերը ֆրանսացի գրական և քաղաքական գործիչների հետ, Ձեր եռանդուն և անձնվեր մասնակցությունը ամեն մի գործի մեջ, ո՞ր մեկը հիշեմ, ի՞նչ կը լինի Ձեր անհետացումից հետո: Հիշում

եմ Սորբոնի մեր մեծ հանդեսը Աստվածաշնչի թարգմանության հորեյանի ստի՞վ. ինչքա՞ն աշխատանք, ժամանակ գործադրեցիք, նյարդեր մաշեցիք, միևնչև գործը գումար եկավ լավագույն կերպով՝ հազարավոր հայերի ներկայության հետ և ականավոր ֆրանսացիների մասնակցությամբ և ներկայությամբ: Իմ համոզումն է, թե ստանց Ձեզ հնարավոր չի լինի կամ շատ դժվար կլինի համազգային նշանակություն ունեցող քաղաքական, գրական-մշակութային գործ կատարել: Այս լավ, բայց գրական լրիվ կամ կիսատ մնացած գործերը լրացնել հրատարակելով սերունդների սեփականությունը դարձնել, կարևորագույն գործ է, որ պիտի կատարեք: Որե՞մն իրականություն դարձրեք Ձեր միտքը, հրաժարվել կամ շատ սահմանափակել Ձեր մյուս գործունեությունները, և Ձեր գրական գործերի հրատարակության կամ վերջավորության նվիրվել: Գուցե կը մտածեք, թե իմ բերանից միևնչև ականջս ո՞րչափ հեռու է: Իմ գործս ուրիշ է. թափառումներս ապարդյուն չեն անցել, բայց գիտության համար եռակի և քառակի ավելի գործ կը կատարեի, եթե նստած լինեի և հնարավորություն ունենայի աշխատանքներս հրատարակելու: Աշխատանքներիս մի կարևոր մասը, հատկապես հավաքածու նյութերը հետո եմ բերել Հայաստանից, բայց գրված եմ իմ մասնագիտական մատենադարանից: Հնարավորը պիտի անեմ, հենց որ կարելի եղավ տպիչ մեծ մեքենա գնել և թուղթ ձեռք բերել, գուցե մի քանի գործերի և նյութերի հրատարակությունը:

Էջմիածնից մի՞ դժգոհեք, խեղճ Գեորգ Կաթողիկոսը կատարելապես մեհակ է, ավելի վատ լիճակում այդ կողմից, բան մեկը: Եվ եթե այսօր Էջմիածնում Կաթողիկոս կա և լսելի է լինում նորա ձայնը Հայոց համար շատ հրատապ խնդիրների մասին, պարտական եմք նորա տոկոմության ու եռանդին: Էջմիածնից մեկը էլ շատ ևամակներ չեմք ստանում, մեծ մասով հեռագրական է մեր հարաբերությունները:

Ենթահակալ եմք Էջմիածնի Ժողովածուին մասնակցության համար. Կոմիտասի մասին Ձեր գրելիք հողվածը կը մեքենագրենք, մի օրինակը տպագրության ուղարկելու, մյուսը կը պահենք: Յանկալի Էր և օտարագոհի հայազետներից մի մի բան ստանալ Ժողովածուի համար: Պիտի գրեմ Մարիուսին և Լորանին, որոնց հասցեները չգիտեմ, առաջինը Ձեր միջնորդությամբ և երկրորդին պ. Հ. Պերպերյանի: Ի դեպ, կուղարկեմ նրանց և արտասահմանում տպած աշխատություն-

ներից մի մի օրինակ, և կը խնդրեն իրենց հասցնել:

Նամակիս տեղ հասնելուց առաջ՝ արդեն լրագիրներից իմացած կլինեք Մեր հոբելյանի կատարումը Մեր թեմերի մեջ: Բեյրութում կատարվեցավ շատ շքով, Լիբանանյան կատավարությունը այդ առթիվ շնորհեց Մայրիի առաջին կարգի շքանշանը, իսկ մեր հասարակությունն էլ հանգանակություն է սկսել Աթոռի նյութական սպասկության գործին ի նպաստ, ինչպես կատարված էր Ամերիկայում և Եգիպտոսում: Իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսը արտոնում է վեդարի ադամանդյա խաչ կրել: Մանրամասնություններ կիմանաք «Հասկ»-ից:

Առողջությունս լավ է, միայն շուտ եմ հոգնում մտավոր աշխատանք կատարելիս, այդ էլ ծերության հետ է կապված կամ ընդհանուր հոգնածության, գուցե երկուսն էլ:

Բարեկամական սիրով և հայրապետական օրհնությամբ:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
Տանն Կիլիկիո

1948, հունվարի 5, Անթիլիաս-Լիբանան

Սիրելի՛ պարոն Ա. Չոբանյան,

Ձեր վերջին նամակը չգտա, որ ըստ այնմ պատասխանենք, թեպետ ընդհանուր բովանդակությունը հիշում եմք: Հիշել չենք կարող միայն խնդրված գրքերի անունները: Կը գտնենք և ինչ որ կարելի է անել, կանենք: Միայն իմանաք, որ բավական ժամանակ է այստեղ էլ գրքեր չեն ստացվում Հայաստանից: Այդ պակասը մասամբ լրացնելու համար ուղարկում ենք Ձեզ մեր Կաթողիկոսարանի նոր հրատարակությունները, որոնցից երկուսը, կարծեմ, արդեն ստացած պիտի լինիք:

Բայց եթե չսպասեցի Ձեր նամակի գտնվելուն և երկտողս գրում եմք Ձեզ, պատճառը հետևյալն է: Մենք դիմել ենք Փարիզում մի քանի ունևորների մեր Աթոռին բարերարներ հանդիսանալու, գրել ենք մեր կարիքները և մեր ծրագիրները այս Աթոռը մշակույթի և գիտության կեդրոն և որակավոր միաբանություն պատրաստելու համար: Այդ պարոններն են պարոնալք Գառնիկ Բախտիարյան, Պողոս Ֆրենկլյան և Երվանդ Պարկիրճյան: Այս մասին գրել ենք Արտավազը Սրբազանին, գործին տեղյակ է և Ադդե քահանան: Կուզեմ խնդրել Ձեզ, որ ամենայն փափկանկատությամբ հետամուտ լինիք Դուք էլ և ինչով կարող եք հաջողության նպաստել, օգնեք: Նախապես գործին

տեղեկացեք Տեր Ադդեից, թե ինչ վիճակի մեջ է, և ըստ այնմ շարժվեցեք:

Բացի դրանից կը կամենանք, որ Փարիզում ևս կազմակերպվի Կիլիկիո կաթողիկոսարանին օգնող միություն, ինչպես ունիք Նյու-Յորքում, միության շուրջը կարելի է հավաքել, հատկապես Կիլիկեցիներին: Այստեղ արդեն կարող եք Ձեր հեղինակությունը և գրչով շատ գործ կատարել: «Արևմուտք»-ի մեջ մի անգամ գրել էիք, հուսամ, թե «Արևմուտք»-ն էլ ընդ առաջ կերթա, ինչպես առաջ էլ գրած է:

Մեր նպատակն է, սիրելի Չոբանյան, Կիլիկիո Աթոռը նյութապես ինքնաբավ դարձնել, որպեսզի լայն չափերով կարողանանք նաև կրոնականի հետ գիտության և մշակույթի կեդրոն դարձնել: Ինչո՞ւ անհնարին պիտի համարել մի նոր Ա. Ղազար հիմնել այս ափերի վերա նոր հասկացողությամբ: Եթե ազգը օգնե, եթե մի երկու երեք հոգի մեր մեծահարուստներից բարերար հանդիսանան, տպարանը կարգավորենք, ընդամենը մի քանի տարվա մեջ այնպիսի հրատարակություններ անենք, որ պետական ակադեմիաների համար էլ նախանձելի լինի: Մենք անբավ նյութ ունինք, Բարգեն կաթողիկոսը թողել է Անկյուրիո և Կ. Պոպի ձեռագիրների ցուցակը, Թովչյանը ունի Արմաշի ձեռագիրներինը, որոնց հրատարակությունը ահագին նորություն կը բերե հայ անցյալի, պատմության, գրականության, արվեստի մասին: Թողում ասել, թե որակավոր միաբանություն կը պատրաստենք, մեր ընդունակ և կարող նորընձաններին համալսարաններ կողարկենք, այլև այլ հայագիտական մասնագիտությանց համար նախապատրաստվելու: Արդեն իսկ երկու հոգի ուղարկել ենք: Մեկը գործնական աստվածաբանության համար, հատկապես մեր կիրակնօրյա դպրոցների դեկավարության, մուսը բյուզանդագիտության, գուցե, դորա հետ և արաբագիտության, որովհետև վերջինը լավ արաբերեն գիտե:

Այս մասին գրում ենք և պարոն Մետրոպոլիտանին, «Արևմուտք»-ի խմբագրապետին:

Արդեն մամուլի տակ է Հայագիտական Տարեգիրքը և քառասուն ութ երես տպագրված է, հուսամ մարտին լույս տեսնե, պետք է լինի 250—300 էջ «Հասկ-ի դիրքով, ասել է մի լավ հատոր: Ապա հերթը կը գա Էջմիածնի, այսինքն փոխադրության հոբելյանին նվիրված» հատորին: Մեր աղքատությանն է պահված այս գործի տպագրությունը, ուրեմն և Ձեր հողվածի համար երկյուղ չունիք: Մեր գործը դանդաղ է գնում,

որովհետև տպիչ մեքենան փոքր է, դեռ չըկարողացանք մեծ և նոր մեքենա ձեռք բերել: Այս տարվա ընթացքում պիտի աշխատենք լույս տեսնել Հիշատակարանների Ա հատորը և Երզնկայի մանրանկարչական դպրոցը, նաև բազմագույն նմուշներով:

Կարող եք մտածել, որ Օջականը այժմ մեր լավ բարեկամն է և մի ամբողջ հատոր է նվիրել Մեր անձին և աշխատանքներին, որ նույնպես շուտով մամուլին կը հանձնվի. հետևանք այս ամառվա Մեր Երուսաղեմ այցելության: Երանի, թե հաջողվի Մեզ այսուհետև գիտական այնպիսի աշխատություններ տալ, որ չամաչենք հատորի մեջ կատարված գնահատության հանդեպ:

Միշտ սիրով  
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
Մեծի Տանն Կիլիկիո

**1948, մայիսի 10, Անթիլիաս-Լիբանան**

Սիրելի՛ պարոն Արշակ Չոբանյան,

Տ. Ադդե քահանայից տեղեկացա Կիլիկյան Միության ձեռնարկության մասին, կատարելու Մեր Հոբելյանը Սորբոնում, պատվո նախագահներ ունենալով պ. պ. Ֆրենկյան, Բախտիարյան, Պարկիրճյան, Արզումանյան և Դուր: Հանձնաժողովի անդամներ են, որպես ատենապետ պ. Գույումճյան, Ատենադպիր Ա. Խանետանյան և գանձապահ Գ. Պագրճյան, ընդհանուր նախագահությամբ Տ. Արտավազդ Արքեպիսկոպոսի: Այսպիսի անձանց ղեկավարությամբ միանգամայն հուսով ենք, թե ոչ միայն հանդեսը պիտի կատարվի ամենայն փառավորությամբ, այլև հանգանակությունը պիտի դառնա արդյունավոր հոգուտ Կիլիկյան Աթոռի բարգավաճման:

Դուք լավ գիտեք, թե ի՞նչն է Մեզ համար գլխավորը, այս Աթոռը դարձնել նյութապես ինքնաբավ, որպեսզի կարողանանք իրագործել այն ծրագիրը, որ ունինք մեր հոգու մեջ, դարձնելով այն կրոնականի հետ գիտության և մշակույթի կեդրոն: Այս մտքով մի քանի անգամ խոսել ենք և գրել, բայց նոր ավելի հանգամանորեն գրեցինք «Հասկ»-ի մեջ, պետք է արտատպվի նաև շատ օրինակներով, այլ և այլ տեղեր և անձանց ուղարկելու համար. այդ հոդվածը ավելի կը բացատրե Մեր մտքերն ու ցանկությունները այս Աթոռի նկատմամբ:

Մեր հայրենիքի մեջ կատարվում են նյութական և մշակութային շատ հառաջադիմություններ և պիտի կատարվին, բայց Կիլիկիո Աթոռը պետք ունի ավելի զորանալու

նյութապես և բարոյապես իբրև հաստատուն պուններից մեկը Հայաստանյայց եկեղեցու: Չեզ երկար գրելու պետք չունիմ հասկանալի դառնալու համար:

Այս երկու օրս լույս կտեսնի «Հայագիտական Տարեգիրք»-ը «Հասկ»-ի 250 մեծադիր էջերից բաղկացած, իբրև սկզբնավորություն Անթիլիասի հայագիտական պարբերականի, որ հետո, երբ հանգանակները ներեն դառնա վեցամսյա կամ եռամսյա. այդպես ավելի հարմար ենք համարում, որպեսզի հնարավոր լինի նաև փոքր ինչ ավելի երկարաշունչ հոդվածներ գետնդել: Տպագրվում է, գուցե, մինչև մայիսի վերջը կարողանանք ավարտել նաև Օջականի «Արևելահայ բանասիրությունը և Էջմիածին, Գարեգին կաթողիկոս Հովսեփյան» վերնագրով աշխատությունը. կաշխատենք հասցրնել հանդիսից սուաջ:

Այս վերջին պարբերությունը գրում ենք Ձեզ խիստ մտերմաբար: Որևէ կերպով աշխատեցեք տեղեկանալ, թե Գալուստ Կյուպենկյանը այժմ Փարիզ է վերադարձնել, թե ոչ: Դրական դեպքում կուզեի, հաջողեցնեիք և ինձ հրավիրեիք հանդիսին: Եթե այդ անկարելի է, Սորբոնում մի եկեղեցականի հոբելյան կատարել, համեմայն դեպս մեզ իմաց տալիք: Այդ խիստ կարևոր խնդիր է Էջմիածնի նորոգության և այլ տեսակետով: Այս գրում ենք Ձեզ խորհրդաբար, ըստ այնմ էլ շարժվիք:

Միշտ սիրով  
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
Տանն Կիլիկիո.

**1949, մարտի 30, Անթիլիաս-Լիբանան**

Սիրելի պարոն Չոբանյան,

Ձեր մարտ 10 թվակիր նամակն ստացանք. կատարելապես հանկանում ենք բազմազբաղ մարդու համար նամակագրության մեջ չլինել ճշտապահ, ինչպես տեսնում եք մեներ էլ Ձեր վերաբերությամբ նույն մեղքի մեջ ենք, որքան էլ հաճելի լիներ ավելի հաճախ թղթակցել Ձեզ հետ և պատասխան ստանալ: Մի Փարիզ է, մի Չոբանյան, ամեն ձեռնարկության, ամեն ազգային և հանրային գործերի մեջ մասնակից: Լավ է, որ կարողանում եք գլուխ հանել, շնորհիվ Ձեր անխնայ եռանդի և նվիրման: Գիտենք նաև, որ Ձեր կատարյալ մասնակցությունն էք բերել Մեր Հոբելյանի հաջողության համար, ոչ միայն ըստ բարոյականին և գրականին, այլ և հոգուտ Աթոռի նյութականի,

բայց եթե արդյունավոր չէ եղել, հետևանք է պայմանների և Ֆրանսայի դրամական ներկա վիճակի: Բայց մենք հուսահատ չենք, թե սաներ պահելու խոստումը ի վերջո պետք է իրականություն դառնա:

Անգլիայում էլ խոստացել են սաներ պահել, այնտեղ էլ դրամի փոխադրության արգելքը կա. բայց երևի մի հնար կը գտնվի օգնության գալու: Մեր մեծագույն հույսը Ամերիկայի գաղութն է, որ եթե մի քանի տարի էլ օգնեն, կը կարողանանք ոտքի կանգնել և ինքնաբավության մոտենալ նյութապես, ստանց որին մեր դպրոցական և մշակութային ձեռնարկությունները կը կառնեն և կը դանդաղին հառաջադիմության մեջ: Արդեն այս կարճ ժամանակի մեջ ոչ միայն կարողացել ենք հոգալ Մեր եռապատկված ծախսերը տարեկան, այլև գնել ենք մի տուն, որ տարեկան 17000 լիբ.-նուկի արդյունք է տալիս: Եվս երկու այդպիսի կալված, կը մոտենանք ինքնաբավության:

Բացի սաների անուճով ստացված գումարներից, Բարեգործականի կողմից այս տարի ավելացել է տարեկան 2000 դ., հինգ տարվա համար. իսկ Կյուլպենկյան հիմնադրամից 3000 դոլլար, որ շատ զգալի հաջողություն է: Այս տողերը գրում ենք, որպեսզի իրագրել լինիք Մեր դրության, և իբրև Մեր անձնական և Աթոռի բարեկամը, հարկավոր ժամանակ օգտագործեք:

Ունինք և ուրիշ մեծ պակասություններ, ամառանոց չունինք, որ այստեղի կլիմայի համար անհրաժեշտություն է, փոքր է մեր դպրոցական շենքը, որովհետև շինված է միայն 20—25 ժառանգավորացի համար, չունինք մատենադարանի և, գրեն, փոքրիկ թանգարանի համար հարկավոր շենքը, չունինք սովոր միաբանության համար հարկավոր խոցերը, բայց դրանք կարելի կը լինի լրացնել հետզհետե: Մեր աշխատանքը պիտի լինի առաջին հերթին մտավորական և մշակութային կյանքը գորացնել: Դպրեվանքի ծավալն ու բովանդակությունը, միաբանության մակարդակը բարձրացնել և կարող, մասնագետ, գրեն, մի քանի միաբաններ ունենալ, տպարանը կարգավորել և հրատարակչական գործը ընդարձակել:

Մեր նոր մեքենան շատ ամիսներ առաջ գնված և վճարված, բայց դեռ չստացանք. մեծ գործ ենք սկսել մեր փոքրիկ և հիվանդ մեքենայով—«Հիշատակարանը ձեռագրաց»-ը, որ շաբաթական հազիվ մի մամուլ ենք կարողանում լույս հանել, արդեն տպագրված է 15 մամուլ, նաև մի հաղորդագրություն գործի էության ու արժեքը բացատրող: Ներփակ ուղարկում ենք Ձեզ այդ հաղորդագրությունը, գաղափար կազմելու համար:

Տպագրել ենք սկսել և մի ուրիշ աշխատություն մանր արվեստների ուսումնասիրության նվիրված, փայտագործության, ասեղնագործության, ոսկերչության, հախճապակյա արվեստի և այլն, մասամբ հին ուսումնասիրությունների արտատպություն, մասամբ նորերի ուսումնասիրություններ:

Լրագիրների մեջ հրատարակված հայտարարություններից իմացած կը լինեք, թե հանդերձյալ ենք հառաջիկա հունիս 5-ին մյուռոնօրհնություն կատարել, արդյո՞ք չէիք կարող ներկա լինել, ճանապարհածախսը կը հոգացվի, իսկ այստեղ Մեր հյուրը կը լինեք և Ձեզ վերա ծախս չի նստի, փոխարեն Դուք մի քանի դասախոսություն կը կարդաք մեր միջնադարյան գրականության մասին մեր ուսանողների համար և մեկն էլ ժողովրդական լսարանի համար: Ձեզ համար էլ, կարծում ենք, օգտակար կլինի շատ տեսակետներով: Միասին կայցելենք Բաալբեք և այլ ավերակներ: Մտածեցեք և գրեցեք Ձեր որոշումը ըստ կարելվույն շուտ:

Միշտ սիրով և գնահատությամբ  
Գ.ԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
Տանն Կիլիկիո

1949, ապրիլի 5 <Անթիլիաս-Լիբանան>

Սիրելի պարոն Չոբանյան,  
Քանի օր է գրված էր նամակը, բայց փոստը չէր ձգված ինչ ինչ պատճառներով: Օգտվում ենք հանգամանքից մի հավելում անել:

Ամերիկա գնացուց սուսջ դր. Քոլոլյանի տանը Rue de Puthien 37 bir թողել էինք մի սնդուկ, մեջը սպիտակեղեն, նամակներ և այլն, բանալին հանձնելով հանգուցյալ Տեր Լևոնին, նաև որոշ գումար, որ գնումներ անե և ուղարկե Խորեն կաթողիկոսին: Վերջինը, գիտենք չկատարվեցալ, բայց սնդուկի և պարունակության մասին տեղեկություն չունինք: Այնտեղ Մարկոսյանի ձեռագիրներից քաղվածքներ ունինք: Հաճեցեք, խնդրեմ Տեր Ադդեի հետ տեղեկանալ և գրել այդ մասին: Մեզ հետաքրքրում են միայն նամակներն ու ձեռագրական քաղվածքները: Դոքստորը կարող է ամենևին տեղյակ չլինել այդ մասին, բայց ոչ Տեր Լևոնի ընտանիքը:

Երկրորդ խնդիրս հետևյալն է: Թերթերի մեջ կարդացի արձանագործ Գյուրջյանի մահը մեծ ափսոսանքով. դեռ երիտասարդ էր և կարող էր նոր գործեր ունենալ: Մեր Փարիզ եղած ժամանակ պատրաստել էր և Մեր բյուստի կաղապարը, և հայտնել էր

Մեզ, որ երկու օրինակ պիտի պատրաստեն, մեկը Մեզ համար: Տարաբաղաբար ոչ Ամերիկայից և ոչ այստեղից կարողացանք հետամուտ լինել գործին և թղթակցել այդ մասին: Երկրորդ օրինակը մնում է նորս գործերի մեջ և ասում են շատ հաջող է: Արդյո՞ք ընտանիքը հնարավորություն ունի՞ նվիրելու այն Մեր թանգարանին, կատարելով հանգուցյալի խոստումը, հակառակ դեպքում, ինչպես կարելի է ձեռք բերել, կարելի՞ է մի մեկենաս գտնել, որ առնե Մեր կաթողիկոսարանի համար:

Գ. Կ.

### 1949, օգոստ. 29, Անթիլիաս-Լիբանան

Միրելի պարոն Արշակ Չոբանյան,

Ժամանակին ստացել ենք Ձեր ապրիլ 27-ին գրած նամակը, ներողություն ուշ պատասխանելու համար: Ցանկությունս Ձեզ Մեզ մոտ հյուր ունենալ, նույնքան ջերմ է որչափ նախընթաց նամակիս գրած ժամանակ, և երբ 1950-ին իրագործված տեսնենք, ավելի բարձր կլինի սատիճանը: Երբ Դուք կարողանաք գալ «մեր աչքի վերա տեղ ունիք»: Ուրեմն ցը տեսություն 1950 թվականի սեպտեմբերին:

Դուքտոր Գլոյլյանի տանը թողած իրերի մասին տեղեկություն չստացա դեռ, իսկպես մեղք է Ձեզ այդպիսի խնդրով զբաղեցնել, մյուս բաները ոչինչ, եթե չը լինեին

այնտեղ նամակներ և Հիշատակարաններ, որոնք այժմ օգտակար կը լինեին իմ ժողովածուի հրատարակության համար: Տեղ Ադդեին էլ մի երկտող գրում եմ այդ մասին, որ մեզ օգնե հետամուտության մեջ:

Երկրորդ խնդիրս հանգուցյալ Գլոյլյանի պատրաստած իմ անդրին էր, հաստատ գիտենք որ երկու օրինակ է պատրաստել, և մեկը խոստացել էր մեզ տալ, տեղեկություն ունինք, որ շատ հաջող է: Եթե որևէ կերպով կարելի լինի ձեռք բերել Մեր կաթողիկոսարանի համար, շատ զոհ կը լինիք:

Մեր տպիչ մեքենան Ամերիկայից վերջպես ստացանք, տեղավորեցինք և այժմ սկսել ենք բանեցնել, շատ զոհ եմ, ուր հագար դոյլար է նստել և նվեր է մի քնկերակցության: Տարվում են իմ ետք գործերը, «Հայագիտական Տարեգիրք»-ն էլ այս բանի օրս մամուլին կը հանձնենք, մեջն է և Ձեր հողվածը:


Դերենիկ եպիսկոպոսին էլ Եգիպտոս էի ուղարկել, որ շատ հաջող արդյունքով է վերադարձած, ախտս, որ ստալծմ գանձել կարելի չէ, արգելված լինելով երկրից դրամ հանելը:

Միմոնյանի ձեռքով մի փոքրիկ բան ուղարկեցի, կատանաք:

Միշտ սիրով՝

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ


Տանն Կիլիկիո



ԿԱՆՈՆԱԳԼՈՒԻՄԷ Ի ՊԷՏՍ ՋԱՆԴԻՍԱԻՈՐ ԱՌՈՒՐՅ

Միջակ-չափաւոր


Ա2



Դա - տեա Տէր զայ - նո - սիկ ոյք յա - տեճ




զիս. ա - Լէ - լու - իա.




մար - տիր ընդ այ - նո - սիկ ոյք մար - տըն - չիճ



ընդ իս ա - Լէ - լու - իա.




Տէր յեր-կինս է ո - ղոր-մու - թինք քո




ճըշ-մար-տու-թինք քո մին-չեւ յամպս. ա - Լէ - լու - իա ա - Լէ - լու - իա.



Ա-սաց ա - ճըզ-գամճ ի սըր-տի իւ - բում



թէ ոչ գոյ Աս - տը - ուած



ա - Լէ - լու - իա.

*Միջակ-ջափառոր*

ա - պա - կա - նե - ցանց

*Չփր.*

եւ պղղ - ծե - ցանց յա - նօ - րէ - նուրեան իւրեանց, եւ ոչ ոք է

*Մտր.*

որ առ - նե գբաղց-րու - փիւն:

Ա - լէ - լու - իա:

*Փոխ*

Ջի ոչ գոյր նո - ցա փո - իա -

*ճ*

- նակ եւ ոչ եր - կեան յԱս - տու - ծոյ.

*Միջակ Չափառոր*

ա - լէ - լու - իա ա - լէ - լու - իա:


*Չափառոր. F2*

Ի քեզ Տէր յուսա - ցայ մի ա - մա - շե - ցից յա -

- փ տեան.

ա - լէ - լու - իա.

*Չափաւոր*



յար-դա - ռու-թեան քում փըր-կեա եւ ապ - ըն -




- ցո զիս,  
ա - լէ - լու - իա:

*Փոխ* *Չափ.*




եր - կիր պագ - ցեն նը - մա ա - մե - նայն թա - գա - տրք

*Մեր.*



երկ - ըրի

*Չափաւոր*



եւ ա - մե - նայն ազգ ծա - ու - յես - ցեն նը - մա,



ա - լէ - լու - իա ա - լէ - լու - իա:

*Չափաւոր.* *Բ4*



Ջո - դոր-մու-րիւ-նըս քո Տէր յա - կի-տեան օրն - նե -



- ցից, ա - լէ - լու-իա.

*Չափ.*



յագ-գէ յագգ. պատ-մե - ցից ըզ - նը2-մար-տու - թիւ -

*Մնր.*  
- նըս բո բե - ռա - նով ի - մով:

ա - լե - լու-իա:

*Փոխ* *Չափաւոր*  
*Մնր.* Դար-ձու-գեր զօգ-նու-րիւն ի սրոյ նո - ռա

եւ ոչ ըն-կա - լար ըզ - նա ի պա - տե - ռազ - մի.

ա - լե - լու - իա ա - լե - լու - իա:

*Մնր.* **ԳԶ** *Չափաւոր*  
Խոս-տա-վան ե - ղե-րուք տեա - ուրն

*Մնր.* զի բաղըր է.

ա - լե - լու - իա.

*Չափաւոր* *Մնր.* զի յա - ւի - տեան է ո - ղոր-մու - թիւն

նո - ռա

ա - լէ - լու - իա:

Փոխ

Մատ-ճեաց ըզ-ճո սա ի ձեռս

ճե - րա - ճո - սաց. տի - րե - ցիճ ճո - ցա ա - տե լիք իւր-եանց

եւ ըզ - ցա - միք իւր-եանց ճե - ղե - ցիճ ըզ - ճո - սա,

եւ խո - ճարի ե - ղեճ ի ճեր - քոյ ձե - ոաց ճո - ցա.

ա - լէ - լու - իա ա - լէ - լու - իա:

94

Ա - րա - րի ի - րա - տուճ եւ

ար - դա - րու - թիճ.

ա - լէ - լու - իա.

Մատ - ճեր զիս ի ձե - ուճ ճեղ -

շաց ի մոց.

ա - լե - լու - իա:

Մեր ձեռք-ցից Քախաւոր իրեն - դըր - ուածք իմ

ա - ռա - ջի քո Տէր, ըստ բա - ցի թում ի - մաս-տունց

ա - րա գիս, ա - լե-լու - իա ա - լե - լու - իա:

Օրի-ճեա աճճն իմ ըզ - տեր.

օրի-ճե-ցից ըզ-տեր ի կեանս իմ.

ա - լե - լու - իա.

սաղ - մոս Չփր. ա սա ցից Աստու - ծոյ ի - մոյ

*Մեր.*

Մի՛ց - չե՛ս եմ ես.  
 ա - լե - լու - իա.

*Փոխ*

*Չփայլ*

*Մար.*

Գո՛ւնա ե-րու - սա - դեմ ըզ - Տեր.  
 ա - լե - լու - իա.

*Չփայլ*

ե՛ս օրհ-նեա զԱստ-ուած քո Սի - օճ

*Մանր*

ա - լե - լու - իա.

*Չփայլ*

*ՊԿ*

*Մեր.*

Սի - րե - ցից ըզ - քեզ տեր զօ - ռու - րիւն իմ.

*Մեր.*

ա - լե - լու - իա

*Մեր.*

*Չփայլ*

*Մեր.*

Տեր Բաս-տա-տիչ իմ ա-պա - լե՞ծ իմ եւ փըր - կիչ  
 իմ, ա - լե - լու - իա:

*Փոխ*

*Մեր.*

*Չփայլ*

Ջգի-ցու - ցիր ի՞նձ զօ - ռու - րիւն ի

պա - տե - ռագ-մի

եւ զյա - ռու - ցեալսն ի վե - ռայ իմ ներ-քոյ իմ ա - ռա - թեր.

ա - լէ - լու - իա ա - լէ - լու - իա.

ՄԱՀՈՒ ԴԱՏԵԱ

Մանր

ա - լէ - լու - իա.

Դա-տեա տեր զայ - նո - սիկ ոյք դա - տեճ զիս.

ա - լէ - լու - իա.

մար-տիր ընդ այ - նո - սիկ ոյք մար - տըն - չիճ ընդ իս.

ա - լէ - լու - իա ա - լէ - լու - իա.

Փոխ

Տէր յեր - կինս է ո-ղոր-մու-թիւն քո

նը՞ - մար-տու - թիւն քո միճ - չեի յամպս.

ա - լէ - լու - իա ա - լէ - լու - իա.

ա - լէ - լու - իա.



## Մ Ա Հ ՄԻՔԱՅԵԼ Դ. ՄԱԶՄԱՆՅԱՆԻ



Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, հոկտեմբերի 29-ին, ուրբաթ օրը, կյանքից հեռացավ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Մայր Աթոռին առընթեր ճար-

տարապետական հանձնաժողովի նախագահ, վաստակավոր ճարտարապետ, Միքայել Դավթի Մազմանյանը:

Հանգուցյալը ծնվել է 1899 թվականին Թբիլիսի քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի Ներսիսյան դպրոցում: Դեռևս աշակերտական նստարանից նա մասնավոր սեր է ցուցաբերել պատմության, գրականության և արվեստի ասպարեզներում:

Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո նա մեկնում է Մոսկվա, ընդունվում գեղարվեստա-տեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը, որն ավարտում է 1929 թվականին և վերադառնում Երևան՝ իր կյանքն ու ողջ գիտելիքները ի սպաս դնելու հարազատ ժողովրդի մշակութային զարգացման գործին:

Մ. Մազմանյանը մեր արդի հայրենական ճարտարապետության հիմնադիրներից մեկն է և մնալուն ներդրումներ ունի այդ ասպարեզում:

Երևանի, մեր հանրապետության, ինչպես նաև Միության մի շարք քաղաքների հուշակապ շենքեր կառուցվել են Մ. Մազմանյանի նախագծումներով:

Հանգուցյալը ունեցել է նաև մանկավարժական բեղուն գործունեություն: Նա եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիմնադիրներից մեկը և նրա առաջին տնօրենը:

1955 թվականից ճարտարապետ Միքայել Մազմանյանը գլխավորում է «Երևաննախագիծ» ինստիտուտի հատակագծման արվեստանոցը, որտեղ մշակվում են Երևանի բնակելի նոր շրջանների, ինչպես նաև մայրաքաղաքի կենտրոնական մասի վերակառուցման բազմաթիվ հատակագծեր:

Մ. Մազմանյանի քաղաքաշինական գործունեության պատկը հանդիսացավ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ կազմված մինչև 2000 թվականի հեռանկարային զարգացման համար, որն ընդունվեց և հաստատվեց կառավարության կողմից:

1957 թվականից սկսած, Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ Մայր Աթոռին առընթեր կազմված ճարտարապետական հանձնաժողովի նախագահն էր Մ. Մազմանյանը, որն իր մյուս անվանի ճարտարապետ ընկերների հետ միասին ինքնաբուխ նվիրումով ու մեծ սիրով իր վրա էր վերցրել Մայր Աթոռի, վանքերի, եկեղեցիների վերանորոգչական և ընդհանրապես շինարարական մեծ աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը՝ մարմին տալու շինարար Հայոց Հայրապետի ծրագրերին:

1962 թվականի հոկտեմբերին Մայր Աթոռում գումարված ազգային-եկեղեցական ժողովում Մ. Մազմանյանն ընտրվում է Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և այդ պարտականությունը նա կատարում է արտենալըն ու հայրենասիրական ջերմությամբ մինչև իր մահը:

Հանգուցյալի աճյունը նոյեմբերի 1-ին ամփոփվում է Երևանի քաղաքային պանթեոնում:

Նոյեմբերի 14-ին, կիրակի օրը, ս. պատարագից հետո, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր արարողություն, որին ներկա են լինում հանգուցյալի հարազատները, բարեկամները, աշխատակիցները:


Վեհափառ Հայրապետը «Ամենայն մարմին իբրև զիտո է և ամենայն փառք մարդոց իբրև զճաղիկ խոտոյ» (Ա. Պետր. Ա 24) բնաբանով Իր դամբանականի մեջ խոսում է ճարտարապետ Միքայել Մազմանյանի կյանքի և գործունեության մասին՝ վեր հանելով նրա մատուցած ծառայությունները որպես հայրենի ճարտարապետության վաստակավորի, Գերագույն հոգևոր խորհրդի անդամի և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նախագահի:

Հոգեհանգստյան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը ընդունում է Վեհաբանում հանգուցյալի հարազատներին, բարեկամներին և ընկերներին ու մխիթարության հայրական խոսքով ամփոփում նրանց վիշտն ու տրտմությունը:

Ճարտարապետ Միքայել Մազմանյանի հիշատակը ոգեկոչելով, մխիթարության խոսքեր են ասում Վեհափառ Հայրապետը, տ. Հայկազուն, տ. Սերովբե, տ. Տաճատ արքեպիսկոպոսները, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամներ Վ. Հարությունյանը, Վ. Ղաֆաղարյանը, նկարիչ Գր. Խանջյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Հանգիստ ճարտարապետ Միքայել Մազմանյանի ոսկորներին:





ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷՋՄԻԱՆՆԻ  
ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ\*

№ 282

ԿՈՆԿՐԱԿ

**Թերթերը՝ 2:—Պրակները՝ 1:—Մեծությունը՝ 37.5×24.3 սմ.:—Նյութը՝ դեղնած և մաշված բարակ թուղթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակներ՝ չունի:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թըրթերը՝ 1ք—2ք:—Տողերը՝ 2 տպագիր և 23 ձեռագիր:—Գծումները՝ առանց ճնշումի, աչքի չափով:—Գիրը՝ նոտրգիր:—Ձարդագրություն՝ չունի: Կոնդակի վերևի կենտրոնում կան միայն իրար կապված երկու ճյուղեր, որոնք տպված են: Այս երկու ճյուղերի մեջ կա Հայրապետական կնիքը, 4 սմ. տրամագծով, որի կենտրոնում նկարված է Քրիստոսը, իսկ կնիքի շքրջանակում գրված է հետևյալը.—«Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Մկրտիչ Կաթողիկոս Հայոց Տանն Կիլիկիոյ յամի ՌՅԻ»:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ Սահ Մկրտիչ Քեֆսիզյան մարաշցի Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո (1871—1894 թթ.):—Ժամանակը՝ 29 մայիսի 1883 թ.:—Վայրը՝ Սիս (Կիլիկիա):—Ծանոթություն՝ սույն կոնդակը ստացված է նվեր արտասահմանից ձեռամբ Վեհափառ Հայրապետի 1965 թ. փետրվար ամսին:**

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից և 1971 թվականի №№ Ե—Ը-ից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—(Տպագիր) Մկրտիչ Ա. Ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Կաթողիկոս (վերջին այս բառը գրված է առանձին երեք սանտիմետր վերևում բուն տողից) և Ծ. Պատրիարք և Եպիսկոպոսապետ Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ:

(Ձեռագիր) Յորմէ ողջոյն Աստուածային և Առաքելական օրհնութիւն առ Մեծապատիւ Յակոբ Էֆէնտի Նալպանտեան բարեջան Աթոռային Երիցփոխան Ստյ, բարեպաշտ սիրեցեալն մեր ի Տէր:

Աստուած փառաց և Հայր ողորմութեանց եղից ընդ քեզ միշտ Ամէն:

Եւ ընդ Տիրաշնորհ Ա. ողջունիս և Աստուածապարզն օրհնութեան յանձն առնելով Քեզ բարեպաշտիդ զպաշտօն Աթոռային Երիցփոխանութեան Ստյ պատուէր տամք զի մի խնայեցես զՔոյդ փութաջան աշխատութեան սակս պայծառութեան Սրբոյ Աթոռոյս, քանզի Քեզ է անկ զի հին ատուք կանոնեալ տուրս և իրաւունս Ա. Աթոռոյս պահանջել և առնուլ ի պաշտօնէից Ս. Եկեղեցեաց տեղուդ, և ջանալ ընդ միշտ ի գիւտ նորանոր եկամտից յանուն Ա. Աթոռոյս, և ըստ պահանջման պաշտօնիդ տեղեկագրել և համարս տալ առ մեզ:

Արդ, յուսադիր լնալ ի Քոյդ գործունէութիւն ի ձեռն սոյն օրհնածիր կոնդակիս հաստատեմք զՔոյին նորընդունակ պաշտօն Աթոռային Երիցփոխանութեան Ստյ, և ոյր սակս կարողութիւն մաղթեմք Քեզ ի Տառնէ:

Տէր Յիսուս, որ գիտէ վարձախառոյց լինել կամկատար ծառայից իրոց. ի հաճոյս իր ընկալցի

և գճող անձնուէր ծառայութիւնն. և բարեաւ լաջողեացէ զամենայն բարեմաստակ ձեռնարկս և գործս թոյ:

Ողջ լեր միշտ ի խնամս Տեառն Աստոծոյ բարձրելոյ:

Խ. Մկրտիչ Ա, վարդապետ Սրբոյ Երուսաղէմի, Եպիսկոպոս Էջմիածնի և Կաթողիկոս Կիլիկիոյ: Գրեցաւ ի 29 մայիսի 1888 ամի Տեառն և յԱզգային թուականի 4375, ի Ս. Աթոռ Կիլիկիոյ, որ ի Միս: Թիւ Կոնդակի 344:

№ 283

ՍԱՂՄՈՍԱԳԻՐԸ

(Հարեշերեն)

Թերթերը՝ 142:—Պրակները՝ 16: Առաջին վեց (Ա—Զ) պրակները 10-ական թերթ են, հաջորդ ինը (Է—ԺԵ) պրակները՝ 8-ական, իսկ վերջինն էլ (ԺԶ) 6 թերթ են:—Մեծությունը՝ 16.2×10.7×6.7 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ:—Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են նկարված: Ձեռագիրը դրված է դեղնավուն կաշու մի կոշտ տուրակի մեջ:—Պահպանակները՝ սկզբում և վերջում կան երկուական թերթ դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ 1ա, 1բ, 2ա, 2բ, 141բ, 142ա և 142բ:—Տողերը՝ 22—24:—Գծումները՝ ճնշումով:—Գիրը՝ ամհարակաճ հարեշերեն (սեմական լեզու):—Զարդագրություն՝ ձեռագիրն ունի սակավաթիվ և շատ հասարակ զարդագրություն: Օգտագործված է միայն սև և կարմիր թանաքները: Վերնագրերն և երբեմն էլ սկզբնատուները գրված են կարմիր թանաքով: Ձեռագրում կան երկու հատ շատ հասարակ խորաններ (թթ. 3ա և 125ա), որտեղ նկարված են դիմագիծ, աչք, խաչ և այլն: Կա մի հատ փոքրիկ խաչ (թ. 58ա) և չորս հատ էլ գլխազարդեր (թթ. 76ա, 111ա, 121բ և 137բ): Մի քանի տեղ կան սևով կարմիր գծեր:—Կարված թերթերը՝ 29, 68, 84, 89, 116 և 132:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Ծաղկողը՝ շատ հավանաբար նույն ինքը գրիչն է:—Ժամանակը՝ ժՁ—ԺԷ դարեր:—Վայրը՝ Եթովպիա:—Ծանոթություն՝ սույն մագաղաթյա ձեռագիրը 1965 թ. հունվար ամսին գնված է Ադիս-Աբեբայում և Մայր Աթոռ է քերված Վեհափառ Հայրապետի ձեռամբ:

ՀԻՇԱՍԱԿԱՐՈՆ

Տեսնել թ. 141ա-ում:

ՀԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսնել թթ. 2բ, 8ա, 37բ, 48ա, 73բ, 89բ, 91ա, 109ա, 139բ և 142ա-ում:

№ 284

ԱԻՆՏԱՐԱՆ

Թերթերը՝ 12:—Պրակները՝ 1 (համդիսանում է մի գեղեցիկ ձեռագրից պոկված մի պրակը):—Մեծու-

թյունը՝ 17.5×12.5×0.5 սմ.:—Նյութը՝ մաքուր, բարակ, ապիտակ մագաղաթ:—Կազմը՝ հաստ սովորաբար, ծածկված մովաթով և թղթով: Կազմի առաջին երեսի կենտրոնում կայցված է, 2.3×2.3 սմ. չափերով, փշն պսակ ունեցող Հիսուսի գլուխը:—Պահպանակները՝ սկզբում և վերջում երկուական թերթ հասարակ թուղթ:—Վիճակը՝ լավ, թեպետև գեղեցիկ մի ձեռագրի մի մասն է միայն:—Գրությունը՝ երկսյուն:—Դատարկ թղթերը՝ 1բ, 4ա, 5ա, 8բ և 12ա:—Տողերը՝ 25:—Գծումները՝ ճնշումով:—Գիրը՝ բոլորգիր:—Զարդագրություն՝ սույն ձեռագիրը, թեպետև պակասավոր, սակայն մի հիսանյալի նմուշ է հայկական մանրամարչություն: Ունի հինգ հատ ամբողջական էջի ծավալով սրբանկարներ Հիսուսի կյանքից, բազմաթիվ գեղեցիկ լուսանցազարդեր, սրբեր, անհատներ և թագավորներ, սիրուն ծաղիկներ, ծառեր և թռչնազդեր: Հատկապես գեղեցիկ է իշու վրա նստած Հիսուսի փախուստը Երուսաղեմից իր մոր և հոր հետ (թ. 10բ):—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Ծաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ ժԵ—ԺԶ դարեր:—Վայրը՝ անհայտ:—Ծանոթություն՝ ձեռագիրն ստացված է նվեր փարիզաբնակ պրն. Դավիթ Մանուշյանից 1965 թ. փետրվար ամսին: Այն քերված է Մայր Աթոռ Վեհափառ Հայրապետի ձեռամբ:

ՀԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագրի վերջում գտնվող թղթյա պահպանակի առաջին թերթում). Այնու Կամարակապ գիտյացի փարիզաբնակ պրն. Դավիթ Մանուշյան Ս. Էջմիածնին կը նուիրէ այս ձեռագիրը ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա կաթողիկոսի Ամենայն Հայոց, ի յիշատակ իր նահատակ ննջեցելոց:

2 փետրուար 1965, Փարիզ:

№ 285

ՇԱՐՄԱՆՈՑ

Թերթերը՝ 378:—Պրակները՝ 28, յուրաքանչյուրը 14-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակներից.—Ժ՝ 8, ԻԵ՝ 11, Ա, Բ, ԻԶ՝ 12, ԻԿ և ԻԸ՝ 15 թերթ:—Մեծությունը՝ 13.8×10.8×5.8 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ:—Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով նկարված են սիրուն զարդեր: Կազմի երկու բունջները ընկել են:—Պահպանակները՝ սկզբում կա երկու թերթ հասարակ թուղթ:—Վիճակը՝ բավարար: Տեղ-տեղ չարագործ մի ձեռք կտրատել է որոշ թերթերի մասեր:—Գրությունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ 131բ:—Տողերը՝ 21:—Գծումները՝ ճնշումով:—Գիրը՝ բոլորգիր: Ամբողջ ձեռագրում օգտագործված են հայկական խազերը:—Զարդագրություն՝ ձեռագիրն ունի շատ սիրուն մանրամարչություն: Կա երկու հատ գեղեցիկ խորաններ (թթ. 1ա և 132ա), ութ հատ գլխազարդեր (թթ. 10բ, 53բ, 103բ, 181ա, 232ա, 289բ,

312ա և 338բ) և բազմաթիվ լուսանցազարդեր և գրքերթաներ, խաչեր և զարդեր, ծառեր և ծաղիկներ, թռչուններ և այլն: Կան բազմաթիվ սիրուն թռչնագրեր և զարդագրեր, մի հատ մարդագլուխ զարդագիր (թ. 235բ) և Աստվածածնի նկարը (թ. 224բ):—**Գրիչը՝** Հովհաննես նկարող:—**Պատվիրատուները՝** Մկրտիչ արեղա և իր եղբայրը Ծառուկ:—**Ծաղկողը՝** Գույն ինքը գրիչն է:—**Ժամանակը՝** 1480 թ.:—**Վայրը՝** Կեսարիա:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրը 1965 թ. փետրվարին ստացված է նվեր լոնդոնաբնակ տիկին Ատրիեն Քեչեճյանից: Մատյանը Մայր Աթոռ ս. Էջմիածին է բերված ձեռամբ Վեհափառ Հայրապետի:

ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 378բ.—Տիկին Ատրիեն Քեչեճյան, Լոնտոն. Ավետարան, 1479, նվեր Մայր Աթոռին:

№ 286

ՇՐՄԱԿՆՈՑ

**Թերթերը՝** 329:—**Պրակները՝** 30, լուրաբանչուրը 12-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակներից.—1՝ 6, Ա և ԻԷ՝ 7, Բ, Ը, Թ, ԺԴ, ԺԶ և Ի՝ 10, Գ, Դ, Է, ԺԱ և ԺԵ՝ 11, ԻԹ՝ 15 թերթից են:—**Մեծությունը՝** 13×9.1×6.3 սմ.:**Նյութը՝** դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ: Կաշվի վրա ծամանակին ճնշումով զարդեր են նկարված, սակայն հետագայում կաշվի մեծ մասը պոկվել է: Կազմի երկու բոնիչները ընկել են:—**Պահպանակները՝** սկզբում մեկ թերթ հասարակ թուղթ:—**Վիճակը՝** բավարար, սակայն տեղ-տեղ որոշ թերթեր պակասում են:—**Գրությունը՝** միապուն:—**Դատարկ թղթեր՝** չկան:—**Տողերը՝** 22—23:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր: Ամբողջ ձեռագրում օգտագործված են հայկական խազերը:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի միջին որակի մանրամասնություն: Մատյանում կա վեց հատ գլխազարդ, բազմաթիվ լուսանցազարդեր, ձկներ, թռչուններ, խաչեր և գմբեթներ: Կան նաև բազմաթիվ սիրուն զարդագրեր և թռչնագրեր:—**Գրիչը՝** Մովսես քահանա:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1528 թ.:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** Աղեքսանդրիո (Սփյառոտ) հայ գաղութը Կահիրեի հնությունների մի խանութից հիտուն ունկով գնելով սույն ձեռագիրը նվիրում է Մայր Աթոռի Զեռագրատան: Գնումը կատարված է Վրաստանի թեմի առաջնորդ գերաշնորհ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանի և Կահիրեի բնակիչ ոսկերիչ պրն. Օսնիկ Աղեքսանյանի ձեռամբ: Սույն արժեքավոր ձեռագիրը Էջմիածին է բերված Վեհափառ Հայրապետի միջոցով 1965 թ. փետրվար ամսին:

ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 88բ.—Ցիչեցեք գմեղուցեալ ծառայս ի բարի մասն:

Թ. 319ա.—Փառք ամենայն Սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն Հայր և Որդոյ և հոգոյն Սրբոյ ամէն: Արդ գրեցաւ շարակնոցս ձեռամբ յոգնամեղ և անպիտան գեագրողիս անարժան Մովսէս քահանայիս, ի թվաբերութեանս հայոց ԶԶԶ (1528 թ.), ի հայրապետութեան Տեր Յովնանէսին, ի թագաւորութեան Սուլայմանին, որ գնաց ի վերայ Ֆռանգին. ի դառն և տխուր ժամանակի գրուեցաւ այս շարակնոցս:

Խնդրեմ ի ձեզանէ զի յոյժ նեղացեալ ենք գրոյս սխալանաց և խոջորութեան անմեղադիր լըրուք, զի այս չափ կար մեր, և որ յիշէ զմեզ Բրիտանոս զինքն յիշէ իր Սուրբ արքայութիւն ամէն:

Թ. 31բ.—Մայր Աստուծոյ Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածինն. և ես մեղաւոր գրիչս Յովանէս. խնդրեմ ի քէն կողողագին պաղատանաւք բարեխաւսել առ միածին քո որդին ի լաներեկ աւուրն:

Թ. 53ա.—Զմեղաւք զստածեալ գրիչս զՅովանէս հանդերձ ծնաւաւք և ամենայն զարմիր. յիշեցէք ի Բրիտանոս, և Աստուած զձեզ յիշէ ամէն:

Թ. 180բ.—Զմեղաւք դատապարտեալ գրիչս զՅովանէս յիշեցէք ի Բրիտանոս, և մեղաց թողութիւն հայցեցէք յատուածիր պարգևողէն:

Թ. 219ա.—Եւ ինձ անարժանիս ողորմեա Տէր լսել զերանակական զձայն:

Թ. 323ա.—Ընդ աւազակին և զմեզ արժանի արայ Տէր ի միս անգամ քո գալտեանն:

Թ. 338ա.—Ընդ նոսին և զիս զանարժան գրիչս զՅովանէս և զԾնաւոյն իմ արժանի արայ Տէր քոյին սուրբ արքայութեանդ, և մի անտես առներ զմեզ:

Թ. 360բ.—Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հայր, և Որդոյ, և Սուրբ Հոգոյն, ամէն:

Արդ գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի շարակնոց, այսինքն շարեալ ակուրք, ի լաւ և լըմտիր աւրինակէ, որ ասի խլուպապու, որ է լըղկեալ և լըստակեալ առաջին վարդապետացն և վարժապետացն, ձեռամբ Յովանէս նկարողի և քարտուղարի, ի լերկիրս Կեսարու, որ ասի Ղայսարիա, ի թվականիս հարց յամի յինն հարիր և ԻԸ (1480 թ.): Արդ որք հանդիպիք անայ ուսմամբ կամ արինակելով, յիշեալք զգծողս սորա զՅովանէս միով Տէր ողորմայի, որ և ձեզ յիցի ողորմութիւն յամէնողորմ արարչէն, ամէն:

Եւ դարձեալ յիշեալքի ի Տէր զղեռաբոյս կրանաւորն զՄկրտիչն և զեղբայրն իր զԾառուկն, որ ստացան զգիրքս զայս հալալ և արդար՝ արդեամբք և ընչիւք ճնողացն իրեանց: Ի վաղելումն Մկրտիչ արեղին և յիշատակ ճնողագ իւրոց Սարգսին և Գարսնէ, և իր եղբարն Ծառուկին, և դուք յիշեալ յիօիք ի Բրիտանոս Աստուծոյ մերոյ, ամէն եղիցի եղիցի:

ՀԻՇՍԱՍԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 377բ.—1479-ին գրուած ի Կեսարիա:

Թ. 378ա.—Ցիչատակ է շարակնոցն մահտեսի Ասրգիսին և իր կողակցին Ղօնեայ, ի դուռն Սուրբ Աստուածածնա ԹԸ. ՌժԺԲ (1663) ամեն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 83թ.—Վարիպի և դեանեղ լալի: այրականք դառն ու լեղի ի Տրոս:

Թ. 235թ.—Միսաք աղա:

Թ. 329ա.—Փառք ամենայն Սուրբ Երրորդութեան Հայր և Որդոյ և Հոգոյն Սբբոյ, յախտեանս ամեն: Չվերջին կազմող շարակնոցիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձեր ըզխաբերբոցի Սիմոն արեղան: Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձեր զնորահարս Ստեփանոս քահանայն, և զիր կողակիցն զՄարիամն, և զորդին զՄանուէլն, և զդուստն զՄրճանն և զմիտսն զԽաթուն, և զհայրն զԱկովբն, և զմայրն զՄրճանն և զիր մեծ պապն զՏէր Յովաննէս քահանայն, յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձեր, մեզ և ձեզ ողորմացի իւր միտս անկամ գալուստն ամեն:

Ի թվին հայոց ՌԾԹ, արհմեալ է Աստուած յախտեանս ամեն:

Հայր մեր որ յերկինս:

Մղցտիկնա, մղցի տիկնացն:

(Չեռագրի վերջում կա մի քարտ, որ հաշտարարությունն է այն խանութին, որտեղից գնված է սույն ձեռագիրը: Գրված է տպագիր հետևյալ անունը՝ J Khawam et Co., Khan Khalili, Cairo, Egypt. ապա տարված է խանութում վաճառված գլխավոր հնությունների մի ցուցակ):

(Քարտի ներսում ձեռագիր գրված է հետևյալը). Ծարակնոց ՌԾԹ. խարբերոցի Սիմոն Արեղա վերջին կազմողը. 1059+552=1611:

1965 թվի հունվարի 14-ին Աղեքսանդրիո հայ գաղութը գնեց հիսուն ոսկիի խարբերոցի Սիմոն Արեղայի կազմած Ծարակնոցը ձեռագիր և նվիրեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի գրադարանին ակնեղենի մեծ վաճառական Օճնիկ Ալիքսանյանի և Կոմիտաս եպիսկոպոսի, այս թղթի վրա եղած հասցեի խանութից:

Կոմիտաս եպիսկոպոս

14-1-65 թ. Գահիրե:

№ 287

ՀՄԱՅԻՆ

Թերթերը՝ 1:—Մեծությունը՝ 322×10.3 սմ., ինչպես նաև բնագրից կտրված չորս հատ մանր կտորներ, ընդամենը 45 սմ. երկարությամբ:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:—Կազմը՝ կաշյա մի գրպանիկ, 13.6×13.6 սմ. չափերով, որի վրա նախշեր են նկարված: Հետագայում կաշյա սույն գրպանիկի համար հասարակ շորից կտրված է մի երկրորդ գրպանիկ 20.3×15.1 սմ. չափերով:—Վիճակը՝ անբավարար:—Գրությունը՝ միապուն:—Գծումները՝ առանց ճնշումի:—Գիրը՝ բյուրգիր:—Զարդագրություն՝ սույն հմայիլն ունի շատ հասարակ մանրանկարչություն: Կան հետևյալ նկարները՝ Ա. Գաբրիել հրեշտակապետ, ս. Կիպրիանոս եպիսկոպոս, ս. Սարգիս

գորավար և մի հատ էլ մեծ և հաստ խաչ: Մրանցից բացի հմայիլն ունի հասարակ ոճով նկարված չորս հատ զարդագրեր, չորս հատ թղնագրեր և յոթ հատ զլխազարդեր:—Գրիչը՝ անհայտ:—Պատկիրատունը՝ Դափնուտ և Ծափառ:—Ծաղկողը՝ շատ հավանաբար նույն ինքը գրիչն է:—Ծամանակը՝ ժԸ դար:—Վայրը՝ անհայտ:—Ծանոթություն՝ Մայր Աթոռի Չեռագրատունը սույն հմայիլը առացած է նվեր մի անհայտ բարեպաշտից, 1965 թ. մայիսի 14-ին, ձեռամբ Մայր տաճարի թանգարանի վարիչ հոգեշնորհ տ. Գևորգ արեղա Սերայտարյանի:

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ

Զանազան աղոթքներ բժշկության մասին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

...ի ծառայս Աստուծոյ Ծափառ, Մինայի դուստր, և իր դըստերացն Մըլուք (և) Ֆրիաղ:

...զմատայս Աստուծոյ Դափնուտին, Մինային որդույն:

...ի ծառայէս Աստուծոյ անուն Հայր, և Որդոյ, և Հոգոյն Սբբոյ ամեն, եղիցի, եղիցի Դափնուտին, Մինայի որդույն:

...զմատայս Աստուծոյ Դափնուտին, Մինայի որդույն և իր կողակցին զա...:

...ի ծառայէս Աստուծոյ Դափնուտին և Ծափառ իր կողակցին:

...եւ զզարութեամբ սոցա պահապան լիցի ծառայիս Աստուծոյ Դափնուտին և իր կողակցին Ծափառ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յովաննէսին (յոթ անգամ):

Որդոյն մախատիին (երեք անգամ):

Նըշօին (մատիտով—վեց անգամ):

Եղիցի պահապան ծառայիս Աստուծոյ Յովաննէսին (երկու անգամ):

Եղիցի պահապան ծառայիս Աստուծոյ Նըշօին (մատիտով—երկու անգամ):

(Հմայիլի կոնակի մատում)

Ա Բ Գ Դ Ե Զ . . . . . (գրչափորձ) 2 հատ:

(Հետագայում հմայիլի նորոգության ժամանակ կոնակի մատում կպցված է հետևյալները).

10 կտոր մանր թղթիկներ, որոնց վրա կան բյուրգիր գրությունն:

Մի կտոր բավականին մեծ թուղթ, որի վրա կա շլագիր գրություն:

Մի կտոր բավականին մեծ թուղթ, որի վրա կա նոտրգիր գրություն:

№ 288

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Թերթերը՝ 185:—Պրակները՝ 12, յուրաքանչյուրը 16 թերթից:—Մեծությունը՝ 24×17×2 սմ.:—Նյութը՝ ըսպիտակ հաստ թուղթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակ-

ներ՝ չկան:—Վիճակը՝ լավ, սակայն պրակները չեն միացած իրարու:—Գրությունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ 1ա—3բ, 19բ, 83ա—84ա, 108բ—109ա, 144բ, 146բ—147բ, 172բ—185բ:—Տողերը՝ 23:—Գծումները՝ թուղթն ինքնին գծավոր է:—Գիրը՝ շղագիր:—Զարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ անհայտ (շատ հավանաբար Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի քարտուղարը և կամ մի այլ աշխատակիցը):—Պատվիրատուն՝ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքը 1912—1913 թվերին՝ Հովհաննես Արքեպիսկոպոս Արշարունին:—Ժամանակը՝ 1912—13 թ. թ.:—Վայրը՝ Կոստանդնուպոլիս:—Ծանոթություն՝ սույն շատ արժեքավոր ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից (Դիվանատան նախկին սենյակից):

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

- Թ. 1ա.—Գերման Դեսպանին հետ տեսակցությունն էջ 276 (այսինքն թ. 141բ):
- Թ. 3ա.—Մայրաքաղաքի օտար Դեսպանատանց հետ կատարում բանակցությունը:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Ր

- Թ. 1ա.—Թիւ 3: Հատոր I:
  - Թ. 2ա.—Հատոր I:
- (Սույն ձեռագրի մասին տեսնել «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի Բ—Գ—Դ և Ե—Ջ—Լ գույգ միացյալ համարներում, որտեղ լույս է տեսել նաև բնագրի առաջին 45 թերթերի բովանդակությունը, ինչպես նաև 128բ-ից մինչև 132բ թերթերը): Ձեռագրի մնացյալ մասը լույս է տեսել «Բանբեր Հայաստանի արխիվների»\* հանդեսում, 1968 թ. № № 2 և 3-ում: Սույն մասը հետագայում արտատպվել է Բեյրութի «Ջարթոնք» օրաթերթում, 1969 թ. ապրիլի 18-ից մինչև հունիսի 27 համարներում:

№ 289

Թերթերը՝ 1:—Մեծությունը՝ 54×49 . 3 սմ.: —Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակներ՝ չունի:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ չկան:—Տողերը՝ 16:—Գծումները՝ առանց ճնշումի, աչքի չափով:—Գիրը՝ երկաթագրի մի տարբերակը:—Զարդագրություն՝ կան երեք հատ բավականին գեղեցիկ գունավոր ծաղկավոր ճյուղեր, ինչպես նաև երեք հատ հասարակ գունավոր զարդեր: Գրչության բոլոր բառերը սկսվում են մեծատառով, որոնք բոլորն էլ ներկված են զանազան գույներով:—Գրիչը՝ Ն. Միսնասյան:—Պատվիրատուն՝ Փարիզի Միխայելյան Մուսու Ռափայելյան վարժարանի նախկին աշակերտաց Մարսիլիո միությունը:—Ծաղկողը՝ նույն ինքը գրիչը՝ Ն. Միսնասյան:—Ժամանակը՝ 8 ապրիլի 1956 թ.:—Վայրը՝ Մարսիլիա (Ֆրանսա):—Ծանոթություն՝ 1956 թ. Ֆրանսայից Մայր Աթոռ է բերված Վեհափառ Հայրապետի միջոցով: Մայր Աթոռի Ձեռագրատունը 1965 թ. ապրիլի 15-ին ստացած է

Հոգևոր ճեմարանի գրադարանից ձեռամբ Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Ծաքարյանի:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Ր

Տն. Տն. Վազգեն Ա-ին  
Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի  
Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց  
Յաւուր անմորաց այցելութեան իրոյ  
Ի հալաշատ ոստան Մարսիլիոյ,  
Միութիւն նախկին աշակերտաց  
Մուրատ Ռափայէլեան վարժարանի,  
Հաւատարիմ ջահակիր պատգամաց  
Համագգային եղբայրութեան  
Լուսանորոգն մեծի Միխայել Սեբաստացոյ.  
Ջիղնս մաղթանաց իրոյ,  
Կենդանութեան և արևշատութեան,  
Ի յորդերանդն արտէ  
Ձօնէ ընծայէ:

Մարսիլիա—18 ապրիլ 1956—Ն. Միսնասյան

№ 290

Կ Ո Ն Դ Ա Կ

Թերթերը՝ 1:—Մեծությունը՝ 71.3 × 55.1 սմ.: —Նյութը՝ դեղնած, կեղտոտած և տեղ-տեղ, հաստ դիմացկուն թուղթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակներ՝ չունի:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միասյուն:—Տողերը՝ ընդամենը 55 տող:—Գծումները՝ արված են մատիտով:—Գիրը՝ մուրգիր:—Զարդագրություն՝ կոնդակն ունի շատ գեղեցիկ զարդագրություն և մանրանկարչություն: Սկզբում կա ընդամենը մի հատ ծաղկագիր (Գ տառը), շատ մեծ՝ 10×9 սմ. չափերով: Ինքը շատ գեղեցիկ է: Գործածված է մեծ մասամբ երկու գույն՝ դեղին և մոխրագույն: Կոնդակի վերևի մասում, կենտրոնում, նկարված են չափազանց գեղեցիկ երկու կանացի հրեշտակներ, որոնք գտնվում են օդում: Մեկ ձեռքով բռնած են մեկական կանաչ ճյուղ, իսկ երկրորդ ձեռքով միասին բռնած են մի հատ մեծ ծաղկեպսակ, որի մեջ տպված է Գևորգ Դ. Կաթողիկոսի մեծ կնիքը: Կնիքի տրամագիծը 55 միլիմետր է: Կնիքի կենտրոնում նկարված է Էջմիածնի վանքը, Արարատ լեռը, որի գագաթին Նոյան տապանը կա, Աստված, Հիսուս մանուկ և Գրիգոր Լուսավորիչ: Ծաղկեպսակի ներքևի մասից կապված է մի երկար ժապավեն, որ կախված է դեպի վար: Վերոհիշյալ նկարից քիչ ցածր կոնդակի աջակողմյան մասում նկարված է Մ. Էջմիածնի Մայր Տաճարը, ամպերի վրա կանգնած: Ամպերի երկու կողմերում էլ օդի մեջ կան երկու հրեշտակներ, որոնք մեկ ձեռքով բռնած են մեկական գավազան (մեկը վարդապետական, իսկ մյուսն էլ եպիսկոպոսական), իսկ երկրորդ ձեռքով էլ միասին բռնած են մի սպիտակ շոր, որի վրա գրված է «Կնաթողիկոս» բառը: Ամբողջ կոնդակն առնված է ոսկեգույն շրջանակի մեջ:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ Գևորգ Դ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց:—**Մաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1878 թ.:—**Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:—**Մանուկություն՝** սույն ձեռագիր կոնդակը ստացված է Հոգևոր անմարանի գրադարանից Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Ծաբարյանի միջոցով, 1965 թ. ապրիլի 15-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոնդակի վերևի Կաթողիկոսական կնիքը՝ Գեորգ Կաթողիկոս Ամ(ենայն) Հայոց և Մայրա-գոյն Պատրիարք Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի: Էջ Միածինն է Հօրէ և յոյս փառաց ընդ նմա: ՌՅԺԵ (1866 թ.):

ԿՈՆԴԱԿԻ ՏԵՔՍՏԸ

Գ(ծաղկագիր)էորգ ծառայ Քրիստոսի և աննասանելի կոծքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և (մեծ չափսի երկաթագիր, ոսկեգույն) Կաթողիկոս (ավելի փոքր երկաթագիր, կարմիր, գրված տողից երկու աստիճանատր ավելի վեր, հրեշտակների բռնած շորի վրա)—(հետագայ տողերը գրված են նոտագրով և սև թանաքով)—ամենայն հայոց՝ և ըստ տնտեսության Հօրն երկնատրի և ընտրութեան Հոգւոյն սրբոյ որոշեալ է յաջորդութիւն ստաջին Անտարանչաց աշխարհիս մերոյ սրբոց Առաքելոցն Թաղէի և Բարթողիմեայ՝ և էի զանակալութիւն անհամեմատ Ան Աստուծոյ Սրբոյն Գրիգորի Պարթևի երկրորդ լուսատրչի հոգւոց և սքանչելի հրեշտակի Արարատեան Առաքելական Կաթողիկէ Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի՝ որ է Վաղարշապատ առ հովանեալ բարձու լերինն Մասեաց, ուր տապան արդարոյն Նոյի հանգեալ նշանակ անդրանիկ Եկեղեցւոյն Աստուծոյ, ուր առաջինն սեղան հաշտութեան ուղղեցալ յողջակէզ պատարագի արդարոյն էի հոտ անոյշ հոտոտեալ Աստուծոյ ուխտ եղ և հաշտեցալ ընդ մարդկան:


Ծնորհք, խաղաղութիւն և ողորմութիւն Աստուծոյ առ սիրելի եղբարս իմ, որ շտ ելանելոյ իմոյ յաշխարհէս յայմանէ ընտրութեամբ և զօրութեամբ Հոգւոյն ունիք ժառանգել զԱթոռ կրանելի Սրբոց Առաքելոց՝ զառաքինաշախիդ հարց յաջորդաց նոցա և զիմոյ նուաստութեանս որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց յաջորդ և զամակալ ընտրելոցն այնցիկ՝ որ զհոգի և զմիտս Քրիստոսի և զհրեղէն լեզու Սրբոյ Հոգւոյն ունէին էի թան իրեանց, որք յօրինակ հաւատացելոց էի մարմնի իբրև զանմարմինս քաղաքավարեալ, և լերկրի էի մէջ կամակոր և խելաթիւր ժողովրդոց իբրև զուսատրս էի հաստատութեան երկնից փայլեցան, որք զեքնելի երկիրս լրիս իբրով ընդ ստիւք իբրև զկղկղանս ունելով, և զանձանց ինչ ոչ խնդրելով էի թես Հոգւոյն միշտ յաներևոյթն և յախտեմակսն վերամբար-

ցան յամենայնի միայն զփառս Եկեղեցւոյն Քրիստոսի և զխաղաղութիւն ազգիս խորհելով՝ արեամբ չստի նամատակեալ ընդդէմ տարերց աշխարհիս, թողին զաւանդս պատուականս և զազգի ազգի յիշատակս անմահս, և քանզի էի էին յուսով անմահութեան ընդ հոտ և ընդ սուր անցեալք ընդ երկինս մտն էի քաղաքացւոյն սրբոց և գրեցան անուանք նոցա էի դպրութիւն կենաց անմահ գառինն՝ կալով և մնալով կենդանի յեկեղեցոյ:

Արդ հայեցեալ իմ յիս գնացից երանելեացն ընդ բազում պարտութ տագնապեր և ճմէր անձն իմ յորոց փութացեալ ճողոպրել զանձն՝ զանց զոկարութեամբ իմով և զանձնոնտութեանէ ժամանակիս արարեալ, ոչ վնասեալ լքայ թէ ոչ որ է որ համաշունչ և ընտանեբար հոգայցէ ընդ իս զտնտեսութեանէ Առաքելական Սրբոյ Աթոռոյս, և ոչ իսկ զկին ընտանի ապատամբութեան որ յօտարաշունչ ազղեցութեան որդեալ զօրանայր յազգայինս ոմանս էի Վ. Պօլիս զՍտյոն ասեմ և զԱղթամարայն խորհելով զխորհուրդ վտանգաբեր, և զփառս հարսին լուսոյ և զերեսս որդոց Արևելից հնարքի ճգնէր յԱրևմուտս կոյս դարձուցանել և փեռնկտումն հասուցանել միութեան Սրբոյ Եկեղեցւոյս, ոչ կրէր կարաց թույացուցանել զոգի, իմ, այլ վտեալ էի սէր ազգի և Եկեղեցւոյ՝ օգնականութեամբ Աստուծոյ էի դիմի հարեալ միայնակ ամենայն հնարից խորամանկ օձին՝ կէտ եղեալ նպատակի մտաց իմոց անդոյ աշխատութեամբ և անըմբերելի դժուարութեամբ յաղթել թշնամեաց Եկեղեցւոյ մերոյ, և զանկեալ վիճակ նորին բարձրացուցանել հոգայով զկարևորացն և զանհրաժեշտ պիտոյնց էի հաստատութիւն և էի փառս Մօրս Լուսայ Սրբոյ Էջմիածնի և համայն լրութեան ազգիս ըստ իմով կարի:

Վասն որոյ յօրէ մուտ գործելոյ իմոյ էի համազգական Աթոռս՝ ձեռն արկի ըստ ներկոյ հանգամանաց անձանձրոյթ սիրով բարութել զվիճակ մայր վանիցս ըստ ամենայն մասանց և բարեկարգել զազգային հոգևոր դպրոցս, զվանորսցս, զեկեղեցիս և զեկեղեցականս Հայաստանեայց աշխարհի, քանալով էի նորոյ գրագում նախակրթական դպրոցս էի քաղաքս և էի զիդոս, զկանոնս վասն իրարանչիւրոցն հաստատեալ, և զոմանս էի քայքայեալ մեմաստանաց էի դառնաղետ արկածից հեռուոր ժամանակաց վերականգնեալ նորոգմամբ և դպրոցս էի նուսին հաստատելով, և այլն և այլն: Սակայն էի վերայ այսր ամենայնի ոչ կարևն բնա պարծիլ՝ թէ զամենայն կարևոր պիտոյս Սրբոյ Եկեղեցւոյ և ազգի զխառտեալ և լցուցեալ իցեմ, քանզի օգտաւէտ ձեռնարկք իմ լաւ ևս էի յոյս հանեալ զգացուցին ինձ զայլ բազմատեսակ ազգային պիտոյս, որոց կատարմանն փոյթ ունել ինձ անշուշտ պարտ է խոհեմաբար տակաւ առ տակաւ Տեսնո՞ օժանդակութեամբ:

(Շարունակելի)



Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

**ՀԱՅ ՀԱՄԱԲԱՐՔԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՐ  
ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐՔԱՌ**

**ՀԱՄԱԲԱՐՔԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

(Ներածական)

Բնագրագիտությունը, որը սերտ առնչության մեջ է աղբյուրագիտության հետ, պատմա-բանասիրական գիտությունների օժանդակ բնագավառներից մեկն է: Պատմական գրավոր աղբյուրների ճանաչման, ստուգման, ճշտման ու վերականգնման ուղղությամբ մեր օրերում հսկայական տեղ է հատկացված բնագրագիտական աշխատանքներին: Ուսումնասիրության իր բարդ ու բազմակողմանի մեթոդներով բնագրագիտությունն այսօր ծառայում է հասարակական գիտությունների մի քանի ճյուղերին՝ լեզվաբանությանը, գրականագիտությանը և պատմագիտությանը:

Ժամանակակից բնագրագիտության տարրերից մեկը բնագրերի համեմատական ուսումնասիրությունն է, որի նպատակն է բացահայտել նրանց միջև եղած առնչությունները՝ ըստ բովանդակության և ըստ լեզվի: Այս տեսակետից բնագրագիտությունը գերազանցապես և՛ մատենագրական նշանակություն ունի, և՛ լեզվաբանական:

Բնագրերի համեմատական ուսումնասիրության փաստերի գոյությունը բավականին հին է գրականությունների պատմության մեջ և հասնում է մինչև մեր թվականության առաջին դարերը: Այդպիսի բնույթ կրող երկերին, որոնք ծնունդ էին առել չորս Ավետարանների բնագրերի ներքին ուսումնասիրության

և միջբնագրային համեմատությունների հիման վրա, տրվում էր **համաքարքառ** անունը: Հայերեն այս բառն իր կազմությամբ առնչվում է ստորերեն *da-mēhāllēṯē<sup>1</sup>* բառա-քերականական ձևին, որը գալիս է *hīṯ* (խառնել, խառնվել, միախառնում, համախառնում)<sup>2</sup> արմատից: Ըստ երևույթին՝ հայերեն **համաքարքառ** տերմինը սկզբնական շրջանում օգտագործվել է ածականաբար, բայց այն առումով, որ բնագրերի համախառնումը կամ համեմատումը կատարվում էր նրանց փոխադարձ համապատասխանության հիման վրա, օգտագործվել է նաև գոյականաբար, ընդհանրապես նշանակելով **համաձայնություն, միաձայնություն, ձայնակցություն, ուստի նաև՝ ներդաշնակություն, համընթացություն, համադրություն, համընկնում, առադրություն**: Բանասիրական գրականության մեջ օգտագործվող էվրոպական տերմինների մասին կտեսնենք հետզհետե:

Համաքարքարի և դարերի ընթացքում նրանով ստեղծված գրականության՝ համաքարքառային գրականության էությունը կայանում է տարբեր բնագրերի միջև և կամ միևնույն բնագրի մեջ առկա եղող նմանություններն ի հայտ բերելու մեջ: Ըստ այդմ էլ՝ հետազոտական աշխատանքի համաքարքառային մեթոդը զարգացել է երկու հիմնական եղանակներով, որոնցից առաջինը, ժամանակագրական կարգով, եղել է ի հայտ բերել նմանություններն ըստ բովանդակության, այսինքն՝ իմաստային նմանությունները, իսկ երկրորդը՝ ի հայտ բերել լեզվա-քերականական առումների նմանությունները՝ Երևան հանելով բնագրերի այն հատվածները, որոնց մեջ օգտագործված են միևնույն բառերը:

Համաքարքառային գրականությունը, սկիզբ առնելով սուրբգրական ուսումնասիրությունների հիման վրա, իր դարավոր զարգացման ընթացքում, ընդհուպ մինչև մեր օրերը, պահպանել է իր սկզբնական նկարագիրն ու նշանակությունը՝ որպես Աստվածաշունչ մատչանի մաս կոչող գրքերի համեմատական ուսումնասիրության բնագավառ, իսկ ԺԸ դարից սկսած, դուրս գալով կրոնական այդ նեղ շրջանակից, ընդգրկել է նաև աշխարհիկ գրականությունը՝ որպես հայտնի գրողների և գիտնականների գործերի բնագրային ուսումնասիրության գիտական յուրահատուկ բնագավառ:

Այս առումով էլ հայ համաքարքառային գրականության պատմությանը նվիրվող սույն հետազոտությունը բաժանում ենք երկու հիմնական մասերի, որոնք համապատասխանում են համաշխարհային գրականության մեջ համաքարքառների ապրած պատմական զարգացման երկու հիմնական հանգրվաններին:

<sup>1</sup> R. Duval, „La littérature syriaque“, 3me éd., Paris, 1907, p. 37. W. Wright, „A Short History of Syriac Literature“, London, 1894, p. 7.

<sup>2</sup> Հմմտ. R. Payne Smith, „A Compendious Syriac Dictionary Founded upon the Thesaurus Syriacus“, Oxford, 1957, p. 143.

## Ա. ՍՈՒՐԲԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐՔԱՌՆԵՐ

Համաքարթանների պատմության մեջ հնագույն դեմքը հանդիսանում է Տառիանոս Ասորին, որը հօրինել է սուրբգրական առաջին համաքարթառը: Նա միաժամանակ հիմնադիրն է հետագոտական աշխատանքի համաքարթառային մեթոդի առաջին եղանակի, որի մասին խոսեցինք վերևում:

Տառիանոս Ասորին ծնվել է մեր թվականության մոտավորապես 120 թվականին: Նա ապրում էր քրիստոնեական աշխարհը հուզող աղանդավորական շարժումների մի այնպիսի եռուն շրջանում, երբ քրիստոնեության նույնիսկ ամենահիմնական սկզբունքների շուրջ տիրում էին տարակարծություններ, քննադատության էին ենթարկվում այդ սկզբունքների աղբյուր հանդիսացող չորս Ավետարանները՝ որպես հակասություններ պարունակող գրքեր: Քրիստոսի անձնավորության, կյանքի և վարդապետության հետ կապված հարցերում: Ավետարանների միջև մատնացույց արվող հակասությունների ոլորտներում աճող ու զարգացող թերահավատությունն առանց այն էլ հրեական և հեթանոսական գաղափարների դեմ մաքառողական պայքարի մեջ գտնվող քրիստոնեության ներքին ճակատում խորացնում էր գոյություն ունեցող պառակտումները և ստեղծում նորերը:

Հրապարակ գալով գաղափարական տարընթացությունների այդպիսի մթնոլորտում, Տառիանոսը ձեռնամուխ էր եղել չորս Ավետարանների բնագրերն իրար հետ համեմատելու քննական աշխատանքին, որ էր ավետարանական համաքարթառ կազմելու առաջին փորձը: Այս աշխատանքի նպատակն էր, ի տարբերություն բոլոր հետազանների, ոչ թե ապացուցել, որ չորս Ավետարանների միջև ըստ բովանդակության ներդաշնակություն է տիրում, այլ ի հայտ բերել անհամաձայնության երևույթները և վերացնել հակասությունները:

Այս նպատակով Տառիանոսը միախառնել ու համաձուլել էր չորս անշատ Ավետարանների բնագրերը և կազմել միահար մեկ ավետարան<sup>3</sup>: Այդ ծրագիրն ի գլուխ բերելու համար նա համադրել էր չորս բնագրերի իրերահայաց մասերը և, ավելորդ համարելով զուգահեռ հատվածների կրկնությունները, նրանցից ընտրել էր միայն մեկը՝ այն լրացնելով կամ խմբագրելով մյուսների հիման վրա. իսկ մնացած մասերի նյութերը նա նույնպես համադրել էր և մի ընդհանուր դասավորման ենթարկել՝ էլնելով իրերի ընդհանուր ընթացքից: Այս ձևով նա Ավետարանների մեջ կատարել էր թե՛ բնագրային

<sup>3</sup> Տառիանոսի և նրա Համաքարթառի մասին գոյություն ունի ընդարձակ գրականություն: Բավականաճանք նշելով հետևյալները. Հ. Պ. Էսապայան, «Տառիանի Համաքարթառն և հայերեն Աւետարաններու առաջին թարգմանութիւնը», Վիեննա, 1934: Նույն, «Հայերեն Աւետարաններու սկզբնագրի հարցը և Ազաթանգեղոսի ու Ղազար Փարպեցու կոչումները», Հանդէս Ամսօրեայ, 1935. էջ 571-596: W. Wright, „A Short History of Syriac Literature“, London, 1894, p. 7-10. O. Bardenhewer, „Geschichte der altkirchlichen Litteratur“, Bd. I, Freiburg i. B., 1902, S. 242-262. A. Baumstark, „Geschichte der syrischen Litteratur“, Bonn, 1922, S. 19-21. B. Altaner, „Patrologie“, Freiburg i. B., 1958, S. 101-103. I. Ortiz de Urbina, „Patrologia syriaca“, Romae, 1958, p. 33-35.

կրճատումներ, թե՛ բացատրական և կամ շաղկապային բնույթի հավելումներ: Իրանից բացի՝ Տաոխանոսն ինքն էլ գտնվելով իր ժամանակի գաղափարական տարակարծությունների հոսանքի մեջ, չորս Ավետարանների միջև նկատվող հակասությունները վերացնելու դիտմամբ կատարել էր բնագրական մի շարք այլ կրճատումներ՝ ըստ բովանդակության, ինչպես և նոր հավելումներ, որոնք թելադրված էին իր վերաբնական գաղափարներից:

Հունա-լատինական աղբյուրներում Տաոխանոսի կազմած այս բնագրին տրվում է diatessaron անունը: Այս անունը գալիս է հունարեն *τὸ διὰ τεσσάρων εὐαγγέλιων*՝ «բերականական արտահայտությունից», որը նշանակում է «աւետարան առ ի չորից», այսինքն՝ աւետարան, որը կազմված է չորս Ավետարանների միջոցով: Ատրական աղբյուրներում ևս օգտագործվում է հունական ծագում ունեցող այս diatessaron բառը, բայց նրա բուն ատրական անվանումն է՝ *evangelion da-méhal'éié*, որը նշանակում է «միախառնվածների (խառն բնագրերի) աւետարան»<sup>4</sup>, այսինքն՝ մի բնագիր, որի մեջ չորս Ավետարանները համախառնված էին, համարան ու **համարաբարտ**, և այս առումով էլ ատրական այդ անվանումը հաջացվել էր **համարաբարտ աւետարան** ձևով: Ըստ այսմ՝ Տաոխանոսի կազմած այդ աւետարանի մեկնությունը, որ գրել էր Եփրեմ Խորի Ատրին, Ե դարում ատրերեկից հայերենի թարգմանվելով կրում էր այսպիսի խորագիր. «Մեկնութիւն Աւետարանի համարաբարտ, զոր արարեալ է տեառն Եփրեմի Խորին Ատրոյ»<sup>5</sup>: Այս **համարաբարտ** անվանումը որպես տերմին ածականաբար և գոյականաբար անփոփոխ է մնացել մեզ մոտ մինչև մեր օրերը: Հունա-լատինական աղբյուրները, — և, նրանց հետևողությամբ, այսօր եվրոպական բանասիրությունը, — գոյականաբար diatessaron են անվանում այն համարաբարտները, որոնք չորս Ավետարանների բնագրերի միայն ըստ բովանդակության համեմատությունն էին անում, իսկ բառական և լեզվական բնույթի համարաբարտներին, որոնց մասին հետո ենք խոսելու, տալիս են *concordantia* (*concordantiae*) անունը. օգտագործվում է նաև *harmonia* անունը՝ համարաբարտի բոլոր տեսակների համար:

Ի՞նչ անլուծելի է մնում այն հարցը, թե Տաոխանոսը ո՞ր լեզվով էր շարադրել իր Համարաբարտը, ատրերե՞ն, որն իր մայրենի լեզուն էր, թե հունարեն, որին նույնպես հմուտ էր Տաոխանոսը: Ավելի հավանական է համարվում ատրերենը: Ո՞ր լեզվով էլ գրված լինի՝ այդ Համարաբարտի բնագիրը մեզ չի հասել: Սակայն Համարաբարտի կառուցվածքի ու բնույթի մասին թեև մասնակի, բայց բավարարաչափ գաղափար տալիս են նրա բնագրից բերված

<sup>4</sup> R. Duval, p. 37.

Ատրական այս անվանումն, իր հերթին, պատահում է թարգմանաբար օգտագործված հունական աղբյուրներում: Անանիա Շիրակացու Ժամանակագրության մեջ կարդում ենք հունական աղբյուրներից եկած մետեղա հատվածը, ուր Տաոխանոսի անունն աղավաղմամբ դարձել է Տրախանոս.

«Բայց ինքն Տրախանոս հաստատեաց և եղ ավետարան, և կոչեաց Յատակստովն, այսինքն է՝ խառնակումն, և առ բազումս կայ մինչև զայսար», տես «Անանիայի Շիրակացու համարողի մատենագրութիւնը» (հրատ. Ա. Գ. Արրամյանի), Երևան, 1943, էջ 381:

Աղավաղված **Յատակստովն** անունը հունարեն *ἁτάκτως* (խառն, խառնակ) բառի հոգնակի սեռականով օգտագործված ձևն է՝ *ἁτάκτως*: Հավանաբար պիտի լինի *Εὐαγγέλιον τῶν ἁτάκτων*, այսինքն՝ «համախառնվածների աւետարան»:

<sup>5</sup> Տես «Արքայն Եփրեմի մատենագրութիւնը», հտ. Բ, Վեհնտիկ, 1836:

այն հատվածները, որոնք մեկնության համար ընդգրկված են Եփրեմի հիշյալ աշխատության մեջ<sup>6</sup>:

Հայտնի է, որ եկեղեցական հույն և լատին հեղինակների մոտ Տատիանոսը համարվել է հերետիկոս՝ վաղեմի հույն և այլ գաղափարներով և որպես իր ժամանակի պարագլուխ՝ ենկրատական (ծուծկալության հետևող) կոչված աղանդավորների, որոնք մերժում էին մսակերությունը, գինու օգտագործումը և ամուսնությունը, վերջինս համարելով որպես «ապականություն» և «պոռնություն»։ և քանի որ այդպես էր, ապա արդեն չէր էլ կարող ընդունելի համարվել նաև Տատիանոսի կազմած նորօրինակ բնագիրը՝ որպես մի ավետարան, որը չորս Ավետարանների բարեփոխումն էր: Բայց, ընդհակառակն, Ասորիքում և Միջագետքում, ուր նգնական խստակեցությունն ու ծուծկալությունը կրոնա-կենցաղային բարքերի մեջ ուժեղ էին, Տատիանոսի կազմած այս բնագիրն ընդունվել էր եկեղեցու համար որպես պաշտոնական ավետարան, որը գործածության մեջ էր մինչև Ե դարի կեսերը, երբ Թեոդորոս Կյուրացու ջանքերով վերջնականապես դուրս մղվեց շրջանառությունից:

Տատիանոսի Համաբարբառի ազդեցությունը մեծ է եղել Ավետարանների հնագույն խմբագրությունների վրա: Ինչպես նկատում է Լ. Լըլուարը, «նա մոտ երեք դարերի ընթացքում լինելով Ասորական եկեղեցու միակ ավետարանը, իր դրոշմն է դրել առանձին Ավետարանների արևելյան բոլոր խմբագրությունների վրա, հատկապես՝ հին ասորականների և հայկական ու վրացական թարգմանությունների վրա»<sup>7</sup>:

Ֆ. Կ. Կոնիքիի կարծիքն այն էր, որ հայերի մոտ վաղագույն շրջանում օգտագործվող պաշտոնական ավետարանը եղել է նույնիսկն Տատիանոսի Համաբարբառը՝ հայերեն թարգմանությամբ<sup>8</sup>, թեև այդպիսի մի թարգմանության մասին ուղղակի փաստեր չկան հայկական գրավոր աղբյուրներում և ոչ էլ դրանից որևէ օրինակ է հայտնաբերվել մինչև այժմ: Բայց բանասիրական հետազոտությունների եզրակացությունները դրական են այդ մասին: Եթե Տատիանոսի Համաբարբառը հայերենի թարգմանված և իր ժամանակին օգտագործման մեջ եղած չլիներ Հայաստանում, ապա, օրինակ, գործնապես ի՞նչ նպատակի պիտի ծառայեր Եփրեմի գրած մեկնության հայերեն թարգմանությունը: Այս հարցերին մկիրած իր ուսումնասիրության մեջ Հ. Պ. Էսապալյանն իրավամբ գալիս է այն համոզման, թե «Եփրեմի մեկնութեան թարգմանությունը հայերենի՝ շատ հառանակական ու հասկնալի կը դարձնէ, որ նաև Համաբարբառը թարգմանուած ու գործածուած էր Հայաստանի մէջ, ինչպէս դրացի Ասորիքի մէջ, և յետոյ հետզհետէ՝ ոչնչացուած»<sup>9</sup>:

<sup>6</sup> Եփրեմի մեկնությունը ևս լրիվ չի հասել մեր ձեռքը: Նրա հայերեն թարգմանության մի զգալի մասը հայտնաբերվել ու 1836 թվականին հրատարակվել է վեներիկի Մխիթարյանների կողմից (տես նախորդ ծանոթագրությունը): Իսկ 1962 թվականին Դուրլինում հրատարակվել են նրա ասորերեն բնագրի միայն մի քանի թերի մասերը, որոնք նոր էին հայտնաբերվել: Հենվելով հայկական և ասորական այս մնացորդների համեմատության վրա՝ Լ. Լըլուարը տվել է բնագրի ֆրանսերեն թարգմանությունը. Ephrem de Nisibe, «Commentaire de l'Évangile concordant ou Diatessaron. Traduit du syriac et de l'arménien. Introduction, traduction et notes par Louis Le'oir, moine de Clervaux», Paris, 1966.

<sup>7</sup> Ibidem, p. 20.

<sup>8</sup> F. C. Conybeare, «An Armentian Diatessaron», The Journal of Theological Studies, vol. XXV, 1924, p. 232-245.

<sup>9</sup> Հ. Պ. Էսապալյան, «Տատիանի Համաբարբառ...», էջ 14: Հմմտ. նաև «Հայերեն Ավետարաններու սկզբնագրի հարցը...», էջ 595:

Որքան էլ ուղղակի տեղեկություններ չունենանք Տատիանոսի Համաքար-բառի հայերեն թարգմանված լինելու մասին, այնու ամենայնիվ բավականին բւժեղ են այն հետքերը, որ նա թողել է Ե դարի հայ մատենագրության մեջ: Այս մասին արդեն ուշադրություն էր հրավիրել Կոնիքիբը՝ դեռևս 1923 թվա-կանից<sup>10</sup>: Էսապայանը համեմատական քննության առնելով Ազարթանգեղոսի, Եզնիկի և Ղազար Փարպեցու մոտ գտնվող ավետարանական հատվածները Տատիանոսի Համաքարբառի հետ, հանգում է այն եզրակացության, թե վեր-ջինիս ազդեցությունը բացահայտ է այդ հեղինակների մոտ, ուստի նաև՝ թե Ավետարանների հայերեն հնագույն թարգմանության բնագիրը, որ օգտագոր-ծել են հայ մատենագիրներն այդ շրջանում, «էապէս ձուլում էր Համաքար-բառի ընթերցումներով»<sup>11</sup>: Այստեղ խոսքը վերաբերում է Ավետարանների հայերեն առաջին «փոթանակի» թարգմանությանը, որը կատարվել էր աստ-րերենից և որի հետքերը, աստիքաբանությունների միջոցով, երևում են Ավե-տարանների այժմյան ընկալյալ բնագրում: Հետևելով Էսապայանի լայն փաս-տարկումներին, նրա հետ միասին կարող ենք ընդունել, որ «այժմեան հայե-րէն Աւետարաններու աստիքաբանութիւնները կը բխեն Համաքարբառէն, անց-նելով առաջին թարգմանութեան բնագրէն»<sup>12</sup>:

Այս կարծիքը հաստատվում է նաև Ս. Լիոնեի հետազոտություններով, որոնց համաձայն Ե դարի հայ հեղինակների մոտ գտնվող ավետարանական մեջբերումները հայկական առաջին թարգմանությունից են, իսկ այդ թարգ-մանությունը կախում ունի Տատիանոսի Համաքարբառից, այլ խոսքով՝ սկզբ-նական շրջանում որպես ավետարան պիտի թարգմանված լինի ուղղակի աստ-րական Համաքարբառը, իսկ հետո միայն թարգմանիչները, հավանաբար, հանգել են անջատ ավետարաններ թարգմանելու աշխատանքին՝ մնալով Հա-մաքարբառի ազդեցության տակ<sup>13</sup>:

Ի դեպ՝ վրացերեն Ավետարանների վրա Համաքարբառի ունեցած ազդե-ցության խնդիրը, որի մասին անցողակի նշում է Լըլուարը, պետք չէ դիտվի ինքնուրույնության հողի վրա, եթե, մանավանդ, դրանից հետո էլ, ավելի հե-ռու գնալով, հանվելու է այն հետևությունը, թե Տատիանոսի Համաքարբառը կարող էր թարգմանված լինել նաև վրացերենի: Այստեղ պետք է հաշվի առնել բանասիրության մեջ հայտնի այն իրողությունը, թե Ավետարանների վրացե-րեն սկզբնական թարգմանությունները հայերենից են կատարվել և թե, որքան էլ դրանք է դարձում սրբագրության են ենթարկվել հունարեն բնագրերի հիման վրա, այնու ամենայնիվ նրանց հիմքում ակներևորեն առկա են աստրական ծագում ունեցող հայերեն բնագրեր<sup>14</sup>:

Մի խոսքով՝ Տատիանոսի Համաքարբառի ազդեցության մասին բանասի-րական տվյալները մեզ տանում են դեպի այն լուրջ ենթադրությունը, թե չորս Ավետարանների հայերեն թարգմանությունը պիտի նախորդած լինի Համա-

<sup>10</sup> Հմմտ. *Revue des Études Arméniennes*, t. VI, 1926, p. 227-229.

<sup>11</sup> Հ. Պ. Էսապայան, «Տատիանի Համաքարբառն...», էջ 101: Նույն, «Հայերեն Աւետարաններու սկզբնագրի հարցը...» (ամբողջ հոդվածը):

<sup>12</sup> Հ. Պ. Էսապայան, «Տատիանի Համաքարբառն...», էջ 108:

<sup>13</sup> S. Lyonnet, «Les origines de la Version Arménienne et le Diatessaron», Rome, 1950. Հմմտ. *Բազմավեպ*, 1952, էջ 42—46:

<sup>14</sup> Հմմտ. Н. Я. Марр, «Из поездки на Афон», *Журнал Министерства Народного Просвещения*, ч. CCCXXII, 1899, № 3, отд. 2, стр. 12-15. R. P. Blake, «The Old Georgian Version of the Gospel of Mark», *Patrologia Orientalis*, vol. XX, 1928, p. 439-574.

բարբառի թարգմանությունը:

«Տատիանոսի այս ազդեցությունը,—գրում է Էսապայանը,—բնական է, կ'ենթադրե, որ Համաբարբառը նախ թարգմանում և Հայաստանի մեջ լայն գործածություն ունեցած ըլլայ, ինչպէս Ասորիքի և Միջագետքի մէջ: Ներքին և արտաքին պատճառներ պակաս չէին առ այս. Ասորիներու հետ դար մ'ամբողջ կրօնական շփումները՝ նախ քան Գրի Գիտը, մասնատրապէս Եդեսիոյ գծով, Տատիանի գործը նանչցուցած էին հայ ժողովուրդին և քահանայական դասուն, որ հասարակապէս լույն և ստորի հոսանքներու ենթակայ էր: Համաբարբառի հակիրճ ծառայը, միասնական ընթացիկ ոճը աւելի ընդունակ կ'ընէր զայն թերավարժ ժողովրդի և դպրոցականի ձեռքը իբր կրօնական և սերտողութեան գիրք ծառայելու, քան Աւետարանիչներու այլակերպ գրութիւնը: Հայերէն Համաբարբառով սնած պիտի ըլլային նաև հայ Աւետարաններու հնագոյն թարգմանիչները, վասն զի անկէ սերտած տեղիքները թարգմանութեան պահուն յաճախ սպրդած են անոնց գրչին տակ: Բայց աստի Համաբարբառի հայերէն թարգմանութիւնը և գործածութիւնը՝ տրամաբանական պահանջքն է նաև Եփրեմի Մեկնութեան գործքին հայերէն թարգմանութեան»<sup>15</sup>:

Ինչպէս ասացինք՝ Տատիանոսի Համաբարբառն իր տեսակի մեջ առաջին փորձն էր գրականությունների պատմության մեջ: Նրա անունը նույնպէս առաջին հիշատակությունն է հայ համաբարբառային գրականության մեջ:

Տատիանոսից հետո համաբարբառ կազմող հեղինակները, ի տարբերություն նրան, նպատակ են դրել միայն պաշտպանել չորս Ավետարանների բնագրային ամբողջականությունը:

Այդ նպատակով հանդես եկող առաջին հեղինակը Գ դարի քրիստոնյա իմաստասեր Ամոն Աղեքսանդրացին էր: Նրա կազմած Համաբարբառի մասին տեղեկություն հաղորդող միակ աղբյուրը Եվսեբիոս Կեսարացու մի նամակն է, որն ուղղված է ոմն Կարպիանոսի<sup>16</sup>: Այդ նամակի սկզբում Եվսեբիոսը խոսում է ամոնյան համաբարբառի էության մասին.

«Ամոնի Աղեքսանդրացույ բազում աշխատութեամբ և ճշգրտի փոյթ ի մէջ առեալ զառ ի չորիցն եթող մեզ զաւետարանն՝ Մատթեան Աւետարանին զհամաբարբառս այլոց աւետարանչացն զդրուակս եղեալ առընթեր, որպէս զի ի հարկէ դիպել շարի կարգի երիցս ևս ապականել որչափ ըստ միայար ընթերցուածոյն»:

Ըստ այսմ՝ Ամոն Աղեքսանդրացին չորս Ավետարանների համադրությունն էր կազմել որպէս հիմք ընդունելով Մատթեոսի Ավետարանը՝ նրա ունեցած լրիվ կառուցվածքով, իսկ նրա բնագրին առընթեր զուգահեռաբար, մի գծի վրա, զետեղելով մյուս երեքի համապատասխանող հատվածները:

Ինչպէս տեսնում ենք՝ Ամոնը հետևել էր մեթոդական այն եղանակին, որ ստեղծել էր Տատիանոսը, այսինքն՝ չորս Ավետարանների բնագրերը համադրել ըստ զուգորդվող հատվածների, բայց այն տարբերությամբ, որ մինչ Տատիանոսը բնագրերը համադրելով միախառնում ու ի մի էր ձուլում, Ամոնը միայն առադրում էր դրանք, այսինքն չորսի մեջ գտնվող և իրար համապատասխանող հատվածներն իրար կողքի բերում՝ առանց ձուլելու իրար հետ:

<sup>15</sup> Հ. Պ. Էսապայան, «Տատիանի Համաբարբառն...», էջ 102:

<sup>16</sup> Այս նամակի հայերէն թարգմանությունը, հունարեն բնագրի հետ միասին, տես Հ. Ա. Վարդանյանի մոտ, «Մատենագրութիւնք Եւթարի. Քննութիւն և բնագիր: Յանելուած՝ Եւսեբիայ Կեսարացույ թուղթ առ Կարպիանոս: Հրատարակեց Հ. Արիստակէս Վարդանեան, ի Միսիթ. ուխտէն», Վիեննա, 1930, էջ 244—249:

Վերջին հանգամանքը չէր խանգարում, որ, բնագրերի համադրման մեթոդական այս մանկությանը, Ամոնի Համաքարքառը ևս, ինչպես էր Տատիանոսինը, Եվսեբիոսի մոտ կոչվեր «առ ի չորից» (*διὰ τσοσσόω*) անունով:

Ամոն Աղեքսանդրացու Համաքարքառի հունարեն բնագիրը մեզ չի հասել և ոչ էլ նրա թարգմանությունը որևէ լեզվով. բայց այնքանով, որքան հայտնի է, որ, նրա մեթոդով, Մատթեոսի Ավետարանի հիման վրա տեղափոխումներ էին կատարվում մյուս երեքի բնագրերի մեջ, պարզ է, որ այդ Համաքարքառում ինքն ըստ ինքյան խախտվում էր Ավետարանների բնագրային կանոնադրությունը, դեռ անկախ այն հարցից, թե ի՞նչպես էին տնօրինված երեք կանոնությունը, դեռ անկախ այն մասերը, որոնք զուգահեռներ չունեին Մատթեոսի մոտ: Եվ այդպես էլ Ամոն Աղեքսանդրացու Համաքարքառն առհասարակ ճանաչում չի գտել:

Այդ դրության մեջ, բնականաբար, եկեղեցական մատենագրության ֆեդիկանակվոր մշակները պիտի շարունակեին որոնել համաքարքառի մի այնպիսի ձև, որը որևէ կերպով ու չափով չխախտեր Ավետարանների կանոնական բնագիրը: Այդպիսի դերով հանդես եկավ քիչ հետո Եվսեբիոս Կեսարացին, որն ապրում էր Գ դարի վերջերին (ծն. մոտավորապես 265 թ.) և Դ-ի առաջին կեսում:

Եվսեբիոս Կեսարացին հունական Արևելքի եկեղեցական-մշակութային նշանավոր գործիչներից և իր ժամանակի հայտնի գիտնականներից էր: Նա 313 թվականից եղել է Պաղեստինյան Կեսարիայի եպիսկոպոս և այդ հանգամանքով մասնակցել է, 325 թվականին, Նիկիայի տիեզերական ժողովին: Եվսեբիոս Կեսարացու երկհատոր «Քրոնիկոն»-ը, նրա «Պատմություն եկեղեցույ» և այլ երկերը համաշխարհային համբավ են վայելում որպես պատմագրական կոթողներ: Նա միաժամանակ հայտնի բնագրաբան էր և Պամփյուղոս Բերյուտացու հետ միասին նվիրվել էր Աստվածաշնչի հունական բնագրերի ստուգման, նշգրտման ու կարգավորման աշխատանքներին՝ Որոզինես Աղեքսանդրացու կազմած «Վեցիջեան»-ի հիման վրա<sup>17</sup>: Այդ հետազոտությունների արդյունքն էր սուրբգրական բանասիրության մեջ **Կեսարյան** կոչված բնագիրը, որը բյուզանդական եկեղեցում ընդունված պաշտոնական բնագիրը դարձավ և որից մի օրինակ մեր թարգմանիչները Ե դարում Կ. Պոլսից բերեցին Հայաստան՝ որպես «հաստատուն», «նշմարիտ» և «ստույգ» օրինակ, ինչպես հիշատակում են Կորյունն<sup>18</sup> ու Մովսես Խորենացին<sup>19</sup>: Աստվածաշունչ մատյանի բնագրական աշխատանքները Եվսեբիոսին մղել էին գրելու նաև, ի թիվս այլոց, չորս Ավետարանների համեմատությունից բխող հետազոտական երկեր, ինչպես՝ «Յաղագս հակասութեանց աւետարանաց» (*Περὶ διαφωνίας Εὐαγγελίου*) և Ավետարանի համար մի «Ներածություն ընդհանուր և տարրական» (*Προοίμιον τῆς ἑσραφωγῆς εισαγωγῆς*), և հանգեցրել նոր համաքարքառ կազմելու գաղափարին:

Եվսեբիոսի Համաքարքառի մասին կարելի է խոսել ողղակի նրա հայե-

<sup>17</sup> Նրա մասին տես P. Batiffol, „La littérature grecque“, 4e éd., Paris, 1901, p. 210-212. F. Kenyon, „Our Bib'le and the Ancient Manuscripts“, London, 1965, p. 108-109, 158.

<sup>18</sup> «Կորին. Վարք Մաշտոցի» (Տրատ. Մ. Արևոյանի), Երևան, 1941, էջ 76:

<sup>19</sup> «Մովսեսի Խորենացու Պատմություն Հայոց» (Տրատ Մ. Արևոյանի և Ա. Հարությունյանի), Թիֆլիս, 1913, էջ 343:

րեն թարգմանության բնագրով, որովհետև Ե դարում այն թարգմանվել է հայերենի և մտել հայ մատենագրության պատմության մեջ: Համաքարբառի սարքավորումը բաղկանում է Կարպիանոսին ուղղված բացատրական նամակից, — այն նամակից, որի մասին խոսեցինք վերևում, — և 10 աղյուսակներից, որոնք կոչվում են Կանոններ (Canones)<sup>20</sup>:

Եվսերենուի մեթոդական նորությունը՝ թվական դրությունն էր: Եվսերիոսը նախ ամեն մի Ավետարանի բնագիրը բաժանել էր հատվածների և դրանք հերթականությամբ համարակալել ու նշել լուսանցքներում. ըստ այդմ՝ Մատթեոսի Ավետարանն ուներ 355 հատված, Մարկոսիինը՝ 236, Ղուկասիինը՝ 342 և Հովհաննեսիինը՝ 232: Հատվածների համարները նշվում էին այբուբենի տառերով՝ ա, բ, գ և այլն: Արդ՝ մինչ Ամոնը տարբեր Ավետարանների զուգահեռ հատվածները բնագրերով տեղադրում էր իրար կողքի, Եվսերիոսը, ի տարբերություն նրան, այդ նույն հատվածները զուգահեռաբար նշում էր ոչ թե բնագրերով, այլ հատվածները ցույց տվող թվանշան-տառերով: Այսպես, օրինակ, Ամոնի Համաքարբառում կարելի էր գտնել հետևյալ զուգահեռը.

Մատթեոս	Մարկոս	Ղուկաս	Յովհաննես
Եւ Յիսուս ասէ ցնոսա. Չիք մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիրում գաւառի և յիրում տան: Եւ ոչ արար անդ զօրութիւնս բազումս, վասն անհաւատութեան նոցա:	Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ոչ է մարգարէ անարգ, բայց եթէ ի գաւառի իւրում և յազատոհմի, և ի տան յիրում: Եւ ոչ կարէր անդ՝ և ոչ մի ինչ զօրութիւն առնել, բայց սակաւ հիւանդաց ձեռն եղեալ թժշկեր վնոսա, և զարմանայր վասն անհաւատութեան նոցա:	Եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ չէ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում:	Ջի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝ եթէ մարգարէ յիրում գաւառի պատիւ ոչ ունի:

Այս նույն զուգահեռը Եվսերենուի Համաքարբառում ներկայացվում էր թվանշաններով, ըստ որում Մատթեոսի մոտ տվյալ հատվածի համարը ճխբ էր, Մարկոսի մոտ՝ ծա, Ղուկասի մոտ՝ իա, իսկ Հովհաննեսի մոտ՝ լե:

Այս հաշվով՝ զուգահեռը Եվսերենուի մոտ ստանում էր այսպիսի պատկեր.

Մատթեոս	Մարկոս	Ղուկաս	Յովհաննես
ճխբ	ծա	իա	լե

Հատվածումների հիման վրա Եվսերիոսը կազմել էր իր 10 աղյուսակները կամ կանոնները՝ ըստ 10 տարբեր տեսակի խմբավորումների, այսինքն՝ միասնաբար չորս Ավետարաններից եկող 71 զուգորդումները կազմում էին առաջին կանոնը, միայն Մատթեոս-Մարկոս-Ղուկաս եռյակից եկող 111 զուգորդումները՝ երկրորդ կանոնը, և այլն:

<sup>20</sup> Նամակի հետ միասին կանոնների հայերեն թարգմանության բնագիրը տես Հ. Ա. Կարդանյանի մոտ, էջ 244—257: Հունարեն բնագիրը տես՝ J.-P. Migne, „Patrologiae cursus completus“, ser. gr., t. XXII, Turnhout (Belgique), 1969, p. 1275-1292.

## Այսպես՝

- Ա. կանոն՝ Մատթեոս-Մարկոս-Ղուկաս-Հովհաննես (71 զուգորդում)
- Բ. կանոն՝ Մատթեոս-Մարկոս-Ղուկաս (111 զուգորդում)
- Գ. կանոն՝ Մատթեոս-Ղուկաս-Հովհաննես (22 զուգորդում)
- Դ. կանոն՝ Մատթեոս-Մարկոս-Հովհաննես (26 զուգորդում)
- Ե. կանոն՝ Մատթեոս-Ղուկաս (80 զուգորդում)
- Զ. կանոն՝ Մատթեոս-Մարկոս (48 զուգորդում)
- Է. կանոն՝ Մատթեոս-Հովհաննես (7 զուգորդում)
- Ը. կանոն՝ Ղուկաս-Մարկոս (13 զուգորդում)
- Թ. կանոն՝ Ղուկաս-Հովհաննես (21 զուգորդում)
- Ժ. կանոն՝ զուգահեռ չունեցող հատվածներ.
  - ա. Մատթեոս (61 հատված)
  - բ. Մարկոս (19 հատված)
  - գ. Ղուկաս (73 հատված)
  - դ. Հովհաննես (98 հատված)

Այստեղ՝ յուրաքանչյուր կանոնի մեջ ընկնող զուգահեռների թիվը, որ ճշեղ ենք փակագծերի մեջ, հաշվված է ըստ հայերեն թարգմանության բնագրի: Հունարեն հրատարակված բնագիրն ունի մանր տարբերություններ:

Ո՞ր աստիճանի էր եվեթյան Համաքարբառի առնչությունն ամոնյանի հետ: Այս հարցումին պատասխանելու համար պետք է ճշտել, թե Ամոնի մոտ ո՞ր չափով էին ընդգրկված չորս տարբեր Ավետարանների բնագրերը, որովհետև Եվեթիոսի Համաքարբառն այդ տեսակետից լիակատար է, իսկ Ամոնիը՝ անհայտ:

Ինչպես տեսանք՝ վերևում Եվեթիոս Կեսարացու նամակից բերված կտորը միայն ասում է, որ Ամոնը Մատթեոսի լրիվ բնագրին աստղիել էր մյուս երեքի համապատասխանող հատվածները, ստանց ասելու, թե մնացած՝ չզուգորդվող հատվածների հետ ի՞նչպես էր վարվել նա: Ելնելով այս փաստի անորոշությունից՝ Թ. Ցանը կարծում է, որ Ամոնի Համաքարբառում ընդգրկված չէին Մատթեոսի հետ զուգահեռ չունեցող հատվածները<sup>21</sup>: Այդ կարծիքին է նաև Կ. Նորդենֆալկը<sup>22</sup>: Իսկ Ա. Հառնակը, ընդհակառակն, ելնելով «սո ի չորից» (δὲ τῶν τεσσάρων) անվանումից և Եվեթիոսի արտահայտության ձևից, կարծում է, որ այդ հատվածները որևէ տեղ և որևէ կերպով ճշված էին<sup>23</sup>:

Այս հարցում մենք ունենք ավելի որոշակի կարծիք: Նախ ասենք, որ Եվեթիոս Կեսարացին նամակի շարունակության մեջ լիովին փարատում է ամեն տարակուսանք, երբ ասում է, թե իր կազմած կանոններն ուրիշ բան չեն, բայց եթե «յաշխատասիրութենէ յառաջագոյն ասացելոյ առնն առեալ պատճառս»<sup>24</sup> (այսինքն՝ հիմք ընդունելով Ամոնի կատարած աշխատանքը)՝ «ըստ այլում գումարութեան»<sup>25</sup> (այսինքն՝ այլ եղանակով կամ սկզբունքով) դասավորված աղյուսակներ են:


<sup>21</sup> Th. Zahn, „Forschungen zur Geschichte der neutestamentlichen Kanons“, Theil I, Erlangen, 1881, S. 31. Հմմտ. Հ. Ա. Վարդանյան, էջ 220:

<sup>22</sup> C. Nordenfalk, „Die Spätantiken Kanontafeln“, Textband., Göteborg, 1938, S. 46-47.

<sup>23</sup> A. Harnack, „Geschichte der altchristlichen Litteratur“, I, Leipzig, 1893, S. 407. Հմմտ. Հ. Ա. Վարդանյան, էջ 220-221:

<sup>24</sup> Տես Հ. Ա. Վարդանյան, էջ 246:

<sup>25</sup> Անդ:



**Եվսերիուս Կեսարացու համարարարառը**

«Կանոն առաջին, յորս ըստ նոսին աման չորեքին»

Ըստ երևանի Պետ. Մատենադարանի № 7785 ձեռագրի (986 թ.)

Ուրեմն Եվսեբիոսի Համաքարքառը, ըստ տարագի, պարզապես Ամոնի Համաքարքառի «ըստ այլում գումարութեան» շրջումն էր, և այն՝ ամբողջությամբ, որովհետև Եվսեբիոսը չի ասում, թե այդ գործողությունը կատարելիս՝ Մատթեոսի հետ զուգահեռ չունեցող հատվածներն ինքն է լրացրել: Կանոնների բովանդակությունն արտահայտող վերևի ցուցակում, որ մենք ենք կազմել, պարզ երևում է, որ Մատթեոսի առնչությունների հետ կապ ունեն միայն առաջին 7 կանոնները, իսկ վերջին 3 կանոնները ցույց են տալիս Մատթեոսի հետ զուգորդություն չունեցող հատվածների զանգվածը. եթե այդպիսի մի խոշոր զանգված անտեսված լիներ Ամոնի մոտ, չէր կարող պատահել, որ Եվսեբիոսը, «ըստ այլում գումարութեան» բառերը գրելիս, լռեր այդ մասին: Կարելի է անվարան ասել, որ Ամոնի Համաքարքառում երեք Ավետարանների բնագրային ներքին կարգը թեև խախտված էր, բայց նրանցից յուրաքանչյուրի բնագիրն իր ամբողջությունը չէր կորցրել և նրանց այն մասերը ևս, որոնք զուգահեռներ չունեին Մատթեոսի մոտ, հավանաբար վերջինիս բնագրում մեջ ընդ մեջ ազդեցված էին՝ ըստ իրերի ընդհանուր ընթացքի: Արդեն կարելի չէ այլ կերպ պատկերացնել Ամոնի Համաքարքառը, եթե նկատի ունենանք, որ Եվսեբիոս Կեսարացին ոչ միայն որևէ խոսք չի ասում այն մասին, թե բնագրերը կրճատված էին և թե ինքն է լրացրել պակասը իր աղյուսակներում, այլև գնահատանքով է խոսում այդ համաքարքառի մասին՝ որպես «բազում աշխատութեամբ և ճշգրտի» կատարված մի գործի, և այն օգտագործում է իր սեփական համաքարքառը հօրինելու համար:

Այստեղ մեր եզրակացությունն այն է, որ եվսեբյան Համաքարքառի առնչությունն ամոնյանի հետ՝ ամբողջական էր. միակ տարբերությունն այն էր, որ Ամոնի համաքարքառում հատվածների առադրումը բնագրերով էր, իսկ Եվսեբիոսի Համաքարքառում բնագրերը փոխարինված էին թվանշաններով: Սակայն էականը և ամբողջը գործի այս մեքենական կողմը չէր: Ըստ էության հիմնովին տարբերվում էին երկու համաքարքառները: Եթե Ամոնի դրությամբ խախտվում էր երեք Ավետարանների ներքին հօրինվածքը և դա փաստորեն ուրիշ բան չէր, եթե ոչ Ավետարանների բնագրային կանոնականության խախտում, ապա Եվսեբիոսի դրությունը կարողանում էր վերացնել այդ էական թերությունը՝ լիովին պահպանելով յուրաքանչյուր Ավետարանի շարադրական ընթացքը, սյլ խոսքով՝ նրանց բնագրի կանոնականությունը: Այս տեսակետից Եվսեբիոսի թվական դրությունը հանձարեղ գյուտ էր: Եվսեբյան Համաքարքառը, համեմատած իր նախորդների հետ, նոր որակ էր, ուներ իսկապես գիտական բնույթ և կարող էր լիովին ծառայել Ավետարանների բնագրերի համեմատական ուսումնասիրությանը:

Եվսեբիոսի Համաքարքառը ձեռագրերում բնականաբար գտնվում է քառյակ Ավետարանների գլխին, քանի որ բոլորի միասնական համադրությունն է ներկայացնում: Առ Կարպիանոս նամակն ու կանոնները գրեթե միշտ տեղավորված են կամարաձև խորաններում, որոնք մանրանկարչական արվեստի բնագավառին են պատկանում: Այս կանոնների և խորանների ուսումնասիրությանը նվիրած իր մասնագիտական աշխատության երկրորդ հատորում, Կ. Նորդենֆալկը հրատարակել է բազմաթիվ լուսատիպ պատկերներ հունական, լատինական, ասորական, հայկական, գոթական, եթովպական ձեռագրերից<sup>26</sup>. հայկականներից նա օգտագործել է Էջմիածնի Մատենադարանի «հին» № 229 (այժմյան՝ Երևանի Պետ. Մատենադարանի № 2374) ձեռագիրը՝ 989 թվակա-

<sup>26</sup> C. Nordenfalk, „Die Spätantiken Kanontafeln“, Tafelband, Göteborg, 1938.

նից, Երուսաղեմի Մատենադարանի № 2555 ձեռագիրը՝ ԺԱ դարից, Վիեննայի Մխիթ. Մատենադարանի № 697 ձեռագիրը՝ ԺԱ դարից և Վենետիկի Մխիթ. Մատենադարանի նախկին № 1144 (այժմյան № 86) ձեռագիրը՝ 902 թվականից<sup>27</sup>:

Եվսեբիոսի համաբարբառային կանոններին պատահում ենք Ավետարանի հայերեն շատ գրչագրերում: Բավական է ասել, որ այդ կանոնները կան հայտնի թվական կրող հայերեն ամենահին ձեռագրերում, ինչպես են՝ Լազարյան Ծեմարանի Ավետարանը, որն այժմ պահվում է Երևանի Պետ. Մատենադարանում 6200 համարի տակ (887 թվականից) և Մլքե թագուհու Ավետարանը, որը պահվում է Վենետիկի Մխիթ. Մատենադարանում 86 համարի տակ (902 թվականից)<sup>28</sup>:

Եվսեբիոսի համաբարբառային կանոնների հայերեն թարգմանության բնագիրն առաջին անգամ տպագրվել է Ավետարանի վենետիկյան 1685/86 թվականների հրատարակության մեջ: Նրա հիշատակարանում կարդում ենք.

«Առարտեցաւ տպագրութիւն վայելչատիպ սրբոյ Աւետարանիս, ի լաւ և շնորհի օրինակէ, լամի մարդէղութեան տեսոն ՌՈԶԶ. և ի թուաբերութեանն Հայոց ՌՃԼԵ. ի ԺԴ. մայիսի ամսոյն ի Վենետիկ քաղաքի, բազում երկամբք և աշխատանօք, վասն ոչ գտանելոյ զհամաձայնութիւն համաբարբառիցն, ի պատճառս անհոգութեան գրչացն, առ որ տաժանեալք զբազում աւուրս ստուգագրեցաք, որոշելով զթիւս մանրագիրս համաձայնութեանց... և զի մինչև ցայժմ համաբարբառիք Աւետարան ոչ էր տպեցեալ երբեք վասն դժուարութեան զանազանից թուոցն, մեք վասն պայծառութեան Հայոց լանձն առաքանմանայն դժուարութիւն, որպէս զի սփռեալ տարածիցի ի միջի ձերում, ի փառքս ամենասրբոյ Երրորդութեան» և այլն<sup>29</sup>:

Հաջորդ 200 տարիների ընթացքում եվսեբյան կանոնները սույն հրատարակությունից արտատպվել են Ավետարանի մի շարք ուրիշ հրատարակություններում (Կ. Պոլիս 1710, 1729, 1740, 1769, 1796, 1805. Թիֆլիս 1842. Էջմիածին 1866): Սակայն այդ բոլոր հրատարակություններում էլ կան վրիպումներ: Եվսեբյան կանոնների ճշգրիտ և բնական միակ հրատարակությունը տվել է Հ. Ա. Վարդանյանը<sup>30</sup>:

Ինչպես տեսնում ենք՝ եվսեբյան կանոններն ապրել են դարեր շարունակ: Նրանց շնորհիվ արդեն ապահովվել էր ավետարանական բնագրերի կանոնականության անձեռնմխելիությունը, ուստի և այդ մասին այլևս խոսք չի լինում համաբարբառների պատմության մեջ: Հետագա համաբարբառների տարբերությունը պարզապես կայանում է արտաքին ձևերի մեջ:

Ե դարում, գուցե և դեռ Դ դարի վերջերում, հրապարակ էր եկել համաբարբառի մի նոր ձև, որն անմիջականորեն եվսեբյան համաբարբառից կամ

<sup>27</sup> Այս ձեռագրերից հրատարակվել են 28 նկարներ, որոնք տեղավորված են № № 15—

35 տախտակների վրա:

<sup>28</sup> Հ. Վ. Հացունի. «Երդմունք հին Հայոց մեջ», Բ տպ., Վենետիկ, 1932, էջ 248—251:

<sup>29</sup> Ձեռագրի նկարագրությունը տես Հ. Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Ա, Վենետիկ, 1914, էջ 379—392: Նաև՝ «Հայկական մանրանկարչություն. Մխիթարեան Մատենադարան ձեռագրաց» ժողովածուի Ա հատորը, Ներածությամբ Հ. Մ. Մանաշյանի, Վենետիկ, 1966, էջ 20—28:

Այս ձեռագրի գրչության թվականի մասին կարծիքները տարբերվում են: Վերջին անգամ մանաշյանն եկավ այն եզրակացության, որ նա գրված է Թ դարի կեսից հետո:

<sup>30</sup> «Գիրք սրբոյ Աւետարանին...», Վենետիկ, 1685/86, էջ 431—432:

<sup>31</sup> Տես վերևում ծան. № 20:



նրա սկզբունքից էր ծագում և փաստորեն նրա մի տարբերակն էր: Այս համաբարբառն ըստ էության ուրիշ բան չէր, բայց եթե եվսեբյան կանոնների բարեփոխումը կամ նրանց փոխադրումն ու հարմարեցումը Ավետարանի բնագրերի ստորին լուսանցքների վրա: Ինչպես տեսնում ենք Ավետարանի հայերեն ձեռագրերում՝ սա ևս շարժվում էր նույն հիմքով՝ ավետարանական բնագրերի եվսեբյան հատվածումներով:

Խոսենք այն նույն օրինակով, որ մի անգամ օգտագործեցինք վերևում: Մատթեոսի ճխբ հատվածը պարունակող էջի ստորին լուսանցքում նշվում են Մատթեոս-Մարկոս-Ղուկաս-Հովհաննես գուգահեռն արտահայտող թվանշանները՝

ճխբ — ծա — իա — լե

Նույն գուգահեռը շրջված ձևով նշվում է նաև Մարկոսի ծա հատվածի տակ՝

ծա — իա — լե — ճխբ

Նույնը Ղուկասի իա հատվածի տակ՝

իա — լե — ճխբ — ծա

Նույնը Հովհաննեսի լե հատվածի տակ՝

լե — ճխբ — ծա — իա

Այս համաբարբառը շատ ավելի դյուրատար է, քան բարդ հօրհնվածք ունեցող եվսեբյան կանոնները: Կարելի է այս համաբարբառն անվանել լուսանցային կանոններ, որովհետև այստեղ ևս գուգահեռները կանոնների կամ աղյուսակների ձևով են տեղավորված մեկը մյուսի տակ, էջերի ստորին լուսանցքներում:

Մասնագիտական գրականության մեջ լուսանցային կանոնները դարձել են ուշադրության առարկա, որովհետև այդ երևույթը կապ ունի Ավետարանի թարգմանությունների պատմության ծագումնաբանական հարցերի հետ:

Մեզ համար ուշագրավն այն է, որ Ավետարանի հայերեն հնագույն ձեռագրերում լուսանցային այս կանոնները համարյա միշտ առկա են եվսեբյան կանոնների հետ միասին, այն ինչ հունական և ասորական ձեռագրերում դրությունը տարբեր է:

Հիմնվելով Տրեքելզի, Հոռնի, Սկրիվենների, Տիշենդորֆի և Բուրգոնի աշխատություններում եղած փաստերի վրա, Վարդանյանը նշում է, որ Ավետարանի հունական հին գրչագրերում ևս պատահում են լուսանցային այս կանոնները, բայց ոչ հաճախ, ըստ երևույթին՝ եվսեբյան կանոնների հետ միասին և երբեմն նույնիսկ առանձին, առանց եվսեբյան կանոնների<sup>31</sup>: Բուրգոնը հունական ձեռագրերում հազիվ երևացող այս կանոնների ծագումը համարում է ասորական<sup>32</sup>: Հայտնի են նաև լատինա-գոթական Ավետարանի՝ Ջ դարից մնացած երկու ձեռագրեր, որոնք նույնպես ունեն այս լուսանցային կանոնները և նրանց ծագումը՝ Օ. ֆոն Ֆրիդենը նույնպես համարում է ասորական՝ հունական ձեռագրերի միջնորդությամբ եկած<sup>33</sup>, թեև, ըստ Նորդենֆալկի, լու-

<sup>31</sup> Հ. Ա. Վարդանյան, էջ 228:

<sup>32</sup> J. Burgon, „The Last Twelve Verses of the Gospels according to St. Marc“ Oxford—London, 1871. Հմմտ. Հ. Ա. Վարդանյան, էջ 223:

<sup>33</sup> O. von Friesen und A. Grape, „Om Codex Argenteus, dess tid, hem och öden.“ Uppsala, 1928, S. 81-84. Հմմտ. C. Nordenfalk, „Die Spätantiken Kanontafeln“, Textband, S. 264.

սանցային ծագումը կարող է և հունական լինել ընդհանրապես<sup>34</sup>: Սակայն, համեմայն դեպս, բավականին ծանրակշիռ է այն կարծիքը, թե այդ կանոնների ծագումն ասորական է, որովհետև ասորական Պեշիտտոյի Ավետարանին յուրահատուկ երևույթներից է այն<sup>35</sup>: Պեշիտտոյի Ավետարանի համարաբանային կանոններն ունեն երկու առանձնահատկություն: Այնտեղ նախ՝ Ավետարանի բնագրերի եվեբրյան հատվածումները բարեփոխված են: Մատթեոսի Ավետարանը, փոխանակ 355 հատվածի, բաժանված է 426 հատվածների. Մարկոսիը, փոխանակ 236-ի, 290 հատվածների. Լուկասիը, փոխանակ 342-ի, 402 հատվածների. Հովհաննեսիը, փոխանակ 232-ի, 271 հատվածների: Այնուհետև՝ Պեշիտտոյի Ավետարանի ձեռագրերում գտնում ենք թե՛ այս նոր հատվածումների հաշվով վերակառուցված եվեբրյան կանոնները և թե՛ նույն հատվածումների վրա հիմնված լուսանցային կանոնները, որոնք երբեմն միևնույն ձեռագրում համատեղված են, բայց ձեռագրերի մեծ մասում եվեբրյան կանոնները բացակայում են:

Արդ՝ հասկանալի է, որ Ավետարանի հունական ձեռագրերում հազիվ երբեմն պատահող լուսանցային կանոնների ծագումն անտարակույս Պեշիտտոյից է, բայց իր հերթին այդ դրությունը բյուզանդական աշխարհում վերակառուցման է ենթարկվել՝ եվեբրյան ընդունված հատվածումների հիման վրա: Նույնպիսի վերակառուցված ձևով մենք դրանց հանդիպում ենք նաև Ավետարանի հայկական ձեռագրերում, բայց այստեղ՝ ոչ որպես հազվադեպ երևույթ, այլ սովորական: Նկատի ունենալով այս հանգամանքի նշանակությունը, ստորև բերում ենք հայերեն Ավետարանի՝ ստույգ թվական կրող հնագույն օրինակների պատկերը՝ ըստ Երևանի Պետ. Մատենադարանի ձեռագրերի, ընդգրկելով մինչև 1240 թվականը:

1. Ձեռ. № 6200.— Ժամանակ՝ 887 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ Սահակ Վանանդացի: Վայր՝ անհայտ: Հայտնի է Լազարյան Ծեմարանի Ավետարան անունով<sup>36</sup>: Ունի թե՛ եվեբրյան կանոնները, թե՛ լուսանցային կանոններ:

2. Ձեռ. № 6384.— Ժամանակ՝ 902 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Սարգիս: Վայր՝ անհայտ: Չունի եվս. կանոնները (թափված են սկզբի թերթերը): Ունի լուս. կանոններ:

3. Ձեռ. № 6202.— Ժամանակ՝ 909 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ Թութայել: Վայր՝ Կ. Պոլիս: Չունի եվս. կանոնները (թափված են սկզբի թերթերը)<sup>37</sup>: Ունի լուս. կանոններ:


#### (Ծարունակելի)

<sup>34</sup> C. Nordenfalk, *ibidem*, S. 264.

<sup>35</sup> *ibidem*, S. 223-227. Մանրամասն տեղեկություններ են տրվում ասորական Պեշիտտոյի ձեռագրերի պարզած իրողության մասին:

<sup>36</sup> «Ավետարան ըստ թարգմանութեան նախնեաց մերոց, գրեալ ՅԼԶ թ. Հայոց և լամի Տեառն 887: Լուսատիպ հրատարակութիւն գրչագրի Լազարեան Ծեմարանի Արևելեան Լեզուաց, արդեամբք պատուոյ հոգաբարձոսի ճեմարանիս իշխան Սիմեոնի Արամելիք-Լազարեան: Մոսկուա, ՌՅԽԸ—1899»:

<sup>37</sup> Սկզբից թափված թերթերի փոխարեն նորերն են գրվել ԺԳ դարում և այժմ այնտեղ կան նաև եվեբրոսի կանոնները, բայց դա ապացույց չէ այն մասին, թե դրանք եղել են բուն օրինակում:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Վարդապետը եկեղեցուց . . . . .	8
Հաղորդագրություն . . . . .	7
ԳՐՈՖ. ԻՈՒՆ. ՔԱՀԱՆԱ. ԿՈՄՍԱՆ—Առաջին չորս դարերի հայրաքանական գրականության արժեքը անտիկ մշակույթի շրջանակում . . . . .	8
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . . .	16
Իմպրագույն վարդապետական իշխանության տվչություն . . . . .	20
ԶԱՎԵՆ Ծ. ՎՐԴ. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ—Եկեղեցագիտական միջազգային վեցերորդ համագումար . . . . .	22
ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒԹՅԱՆ—Անտիպ էջեր Տ. Գարեգին Հովսեփյան կաթողիկոսի նամակագրական ժառանգությունից . . . . .	25
Կանոնագրուխը ի պէտս հանդիսատար սուրբ . . . . .	33
Ման Միրախլ Դ. Մազմանյանի . . . . .	41
Յուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . . . . .	43
Հ. Մ. ԱՆԱՍՅԱՆ—Հնդ համարաբարտային գրականությունը և հայ մատենագրության համարաբարտը . . . . .	49



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ  
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտագրության 1/XI 1971 թ.: Ստորագրված է տպագրության 17/XII 1971 թ.:  
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60x84<sup>1</sup>/<sub>8</sub>, պատվիր 781

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1971 թ.

